

Հայաստան

ՄԱՍԻՆԻՍՏՐԱԿԱՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԿԱՆ

Բ ՏԱՐԻ 1963
ՍԵՂՏԵՍԻՐ

9

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدیر المسؤل
السيد اوتين كارنيك قزنجيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

բ Ա գ ի ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԵՒ ԱՐՏԻՍՏԻ

ՎԱՐՔԷ ԽՄԱԳԻՐ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՄԱԳԻՐՆԵՐ

ԵՂ. ՊՕՅԱԶԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՆԴԱՄԵՐ

Յ. ԳԵՂԱՐԳ

Ց. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Վ. ՓԵԱԿԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

ԵՒ. ՊՕՅԱԶԵԱՆ

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

Յ. ԶՈՐԵՑԻ

ՂԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

ԶՕՀՐԱՊ ԳԻՐԷԶԵԱՆ

Բ. ԿՌԱՆԵԱՆ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

Զ. ՄԻՐԶԱԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅՔ

ED. BOYADJIAN

B P. 1153, BEYROUTH - LIBAN

Հեռագրային քիւ 256078

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ր. ՅԱՐԻ, ԹԻՒ Ց

ԱՍԳՅԵՄՎՈՐ 1902

ՊԼՅՐՈՒԹ

ՎԱՅՐ ԱՆԾԱՆՈԹ, ԲԱՆ ԱՆԾԱՆՈԹ

Գրեց՝ ԵՒ. ՊՕՅԱՃԵԱՆ

Տեղ մը կայ, բամ մը կայ -
 Երջանկութիւն, անդորրութիւն, պայծառութիւն,
 Անանց ներկայ.
 Չերբագատում՝
 Ամէն ինչէ, ու համաչում՝ ամէն ինչի:
 Դեռ էութեան մեծ մաւրկում՝
 Եզրայր պահերը դէպի, եզրայր օրերը դէպի, եզրայր դարերը դէպի՝
 Թէ՛ անսկիզբ անցեալի, թէ՛ անվախճան գալիքի:
 Ու մաւրկում՝
 Եզրայրացած ուժերուն էա՛կ էա՛կ տիեզերքնե՛րը դէպի:

•

Տեղ մը, հեռում, բամ մը կայ. -
 Տարանում սէր, զինջ, անստուեր, ու անմեռ,
 Ազատութեամբ անծայրածիր՝
 Կեա՛նք մը անծիր:
 Ստրկութեան շղթան անվերջ կրծոտելէն,
 Մեր բռնկումն վրայ կտուց՝ գիտակցութեան ու պատիժի
 Կրա՛կ անգղի,
 Մեր ներքը անց ու որսում չարը մերժող անեղ ճո՛ղի՝
 Մենք եան կ'երբանք:

~~144~~

2022.04



146-2002

Ընդունելով կեանք մը ամբողջ ձախորդութիւն,
 Մարմնին վրայ հարուած կերած մորթ մը կապոյտ,
 Մորթ մը տժգոյն,

Ու տառապանք, ու նոյնիսկ խաչ, ու նոյնիսկ մահ՝
 Հաղերու մէջ թաղում, փռում, տարրալուծում՝
 Մե՞նք հո՞ն կ'երթանք. —

Տեղը անդորր, տեղը ազատ, տեղը անանց:
 Ազատութեան «Այո»ն ըրած վերջին կամքի վերջին դրօշ՝
 Մե՞նք հո՞ն կ'երթանք:

~

Մանրը «այո» մե՞նք շատ ըսինք,

Ու ըսելէն, ու ըսելէն՝

Ստրկացանք:

Բռնակալի բռունցքի պէս կարծր խօսքի՝

«Այո» ըսինք խոնարհաձայն,

Ու կեանքը մեր հզար տգէտ, հզար տժգոյն, հզար ունայն:

Բռունցքի պէս ու միս ծեծող թակի նման հայուածքի տակ՝

Դարձանք հլու, ու հեզ, ու հէ՛ք, ու հպատակ:

Ըստա՛ծ էր բայց մեր հագինք,

Տեղէ անյայտ, տեղէ խորին,

Աստուածակայք տեղէ ներքին՝

«Ո՛չ» ըսել միշտ,

Մարդու կեանքին մութ պարտադրող

Ամէ՛ն, ամէ՛ն խաւար ուժի:

Այլ խուլ եղանք օրով, դարով,

— Քանի՞ դարով —

Ու չիմացանք:

~

Եկած ենք հաս մե՞նք իրրեւ մարդ,

Կարճ կեանքի մէջ, հոգազունդի վրայ փխրուն՝

Աստուածափո՛րձ կատարելու:

Մանր գրքի պէս բանալու

Ու կարգալու, ու սերտելու՝

Եկած ենք հոս արեան խորունկ նշմարտութեամբ՝

Ազատութիւն, յաւերժութիւն ստեղծելու:

Դասագրէն տխրեցրին՝

Անմահութեան խոր ֆունդիւն պատրաստելու:

~

Տեղ մը կայ, բան մը կայ.

Մե՞նք հոն կ'երթանք բազում դարով,

Ընդհանուրով,

Մե՞նք հոն կ'երթանք,

Ներքին բիւրեղ մեր բնագոյով,

Ընդհանուր, տագնապներով,
 Հին ու արդի ստրկութեամբ,
 Հին ու արդի ճայուածքներով,
 Հին ու արդի ունկնդրութեամբ,
 Հին ու արդի բարբառներով,
 Արարեցներով:



Կ'անհարեկիմ. -
 Բայց չըլլա՛յ որ մենք փրթած ենք - վազո՛ւց փրթած -,
 Լաւագոյնէն,
 Եւ արդ այսպէս տագնապաբայ՛լ՝
 Կ'երթանք այսօր սա յոռիէն՝ յառեգոյնիմ:



Չաբայտրևորդ, չարաբերան ու չարագործ՝
 Հեռու ճամբէ, մեզ անցքերէ,
 Անգունդներէ՝
 Տխրութեան սա եին բեւեռէն
 Հարկ է շարժիլ
 Դէպի բեւեռն անհուն լոյսին,
 Անմա՛ր լոյսին:



Տեղ մը կայ, բան մը կայ -
 Կը փնտռենք բոլորս գայն ընդմիշտ,
 Ըրատար ըրած յար սէր ու վիշտ:
 Կը փնտռենք, կը պեղենք ամէն տեղ,
 Պրկելով մեր հոգին, հնօրեայ գեղդ ազեղ:
 Կը փնտռենք սիրելով, ատելով,
 Բարձրաճայն կամ գազտնի,
 Կը փնտռենք ժպտելով կամ լալով,
 Կը փնտռենք գործելով, գոհուելով,
 Ուրիշներ, աշխարհներ՝ գտնելով:
 Կը փնտռենք անձին մէջ - ծնողի՛, գաւազի, ընկերոջ կամ կնոջ -,
 Աստղի մէջ, ալիքի, ծաղիկի դեռ բողբոջ:
 Կը փնտռենք իրբւ միտք, գազափար ամսպառ,
 Արեան մէջ նախահիմ,
 Յայտբու, երազի գերարդի:
 Կը փնտռենք գիտութեամբ, կրօնքով,
 Համադիր, անձանձիր, բո՛րբ ճիգով,
 Թռչնով:
 Ու մերթ ալ՝
 Սուր ու մերկ լուկ ճիշով
 Անասո՛ւն կոկորդի:
 Որոնու՛մ մեր մէջ կը յորդի:
 Կը փնտռենք աւելի՛
 Մտանանի մէջ գիտուն,

Իմաստուն,
 Հատորի մէջ անշէջ արուեստի, -
 Նկարի, նուագի, քանդակի: -
 Գեղեցիկ տառին մէջ, պսպղուն պատգամքին,
 Եւ կամ ալ, եւ կամ ալ՝
 Յայտնուի, երագի ու սիրոյ կոկորդին շոքած միշտ
 Մասգործ իրաւին,
 Չօ՛ր կեանքին:



Տեղ մը կայ, բան մը կայ:
 Կը թուի մեզի մերթ թէ կոխած եմք յընդամենը անվարան,
 Կը թուի երբեմն ալ երկինքէն իսկ անդին,
 Դրացի՛ ծայրագոյն անծայրին:
 Երբեմն Յոյսն է որ մեզի հետ կը պեղէ,
 Կը փնտռէ Հաստաքի բրիչով:
 Յոյսէ՛ գուրկ, անհաւատ Տխրութիւնը մերթ ալ
 Թանձրածալ,
 Կոյրի պէս, մութի պէս միատարր, լայնատարր՝
 Կը փորէ, կը փնտռէ՛:



Կը փնտռենք իբրեւ մարդ, անդադար,
 Պատմութեան մութ ծայրէն,
 Արմատէ՛ն անհնար:
 Կը փնտռենք հիմնուրց քարայրի մեր տունով,
 Քա՛ր գէնքով,
 Քարագիծ ամենով, արուեստով,
 Կը փնտռենք վաղեմի ու դժուար կրակով,
 Մետաղով սրածայր, մահաբեր,
 Դրաստով, սայլակով,
 Փիւնիկեան Յաւերով,
 Նեղասի, Եգիպտոսի, չիմանկան պարիսպի
 Գիտութեամբ,
 Յունական առասպել գէպեմբու, դէմքերու
 Համերեան ասութեամբ:
 Կը փնտռենք մեր հոգին սեպագրի ու սուրի վերածած:
 Փնտռեցինք գէնքերով այլազան,
 Դրամով այլազան,
 Տաղանդով այլազան:
 Փնտռեցինք ինչի մէջ թէ արքուն,
 Գեր-տգէտ, գեր-գիտուն.
 Տիրոջ պէս, հարի պէս, գողի պէս,
 Մերթ ըմբոստ, մերթ գերի,
 Իբրեւ սուրբ,
 Կամ իբրեւ մարգտայան:



Կը փնտռենք ամպէն վեր, ամպէն վար,
Տեղը այդ, բանը այդ անհնար:
Եւ ուստի,
Կրօնքի, գիտութեան, արուեստի՝
Գործերն են միշտ շուար:
Ջէնքերն են գիմարի՝ միշտ շուար:
Մարգարէն, առաքեալն են շուար:
Կը փնտռենք Տեղն անդորր, բանն անդորր,
Կենսախօսը,
Հեշտախօսը:
Ձեռք գտնիր՝ - կ'այլալինք.
Ձեռք գտնիր՝ - կը սսկանք, կ'ընդվզինք,
Կը սոզանք, կը տխրինք:
Ձեռք գտնիր՝ - կը սսկանք, կ'ընդվզինք,
Կ'ընկրկինք, կը մսինք,
Կը հիննանք,
Հոգ մը ցուրտ՝
Ու կ'իյնանք:



Կը քայնենք իբրև մարդ,
Միս-ստեղծ,
Երկաթէ, քաւաչակէ ռաքերով,
Ոտերով հրթիռէ՝
Բայց մամբա՞ն, բայց մամբա՞ն, բայց մամբա՞ն,
Իր վագրով, ընթացքով, գմեզ միշտ կը կանխէ՝
Ե՛տ ենք միշտ մեր միտէն, մեր իզնէն,
Անցած ենք բայց առաջ՝
Բառերէն գորս կ'ըսենք:
Կը փնտռենք, կը ճզմենք մեր հոգին:
Փնտռողին տաս եթէ կեանքն ամբողջ ամէնուն
- Մարդերուն, արեւին, աստղերուն՝
Կը գոհէ կեանքն այդ մեծ, կը ճզմէ՝
Բանին համար, Տեղին համար, որուն բնաւ չի հասնիր,
Ան կը ճզմէ ամէն ինչ, ամէն մարդ,
Ան կը լէ՛տ ամէն բայտ:
Կրնայ խեղդել արցունքին մէջ սեփական,
- Որոնումի սուրբ արցունք -
Ամէն տեսակ քանկ երգ:



Տխրութիւն, անկուրքիւն, մտնում...
Բան մը կայ, Տեղ մը կայ,
- Մա՛յր - ծայրերու քա՛ղցր տեղ -
Մենքով, մեծնալով, տանջուելով,

Կուսիւով, յուսայով անբնդեան՝
 Կարծած է ամէն մարդ,
 Թէ կ'երթայ, կը հասնի՝ ինք այդտեղ,
 Վիճակին աչք ամանց, վեհագոյն, բացարձակ ու շքեղ:
 Կարծած է թէ օր մը կը հասնի՝
 Գոհացման, ազատման աչք վայրի գննիքին:
 Մարդը բայց որոնման մամբուն մէջ
 Ձիւնի պէս կը հալի,
 Կը դառնայ անշունչ հող,
 Կիսատ երգ ու հեքիաթ՝ տրտմաշող:

*.

Քույր՛ւ սակայն մամբան անդարձ որոնումի -
 Խոհ ու ոնի բախտակշիռ մեծ փառածճով,
 Սիրտդ բաշխած ամէն հունչի,
 Ճառագայթի իմաստութեան:
 Քայիլ, դիզիլ հոգիին մէջ,
 Հագար կննիւ, հագար տագնապ,
 Հագար նար վիշտ՝ - մամբու թռչակ.
 Իմացական պա՛րկ պա՛րկ ոսկի,
 Պա՛րկ պա՛րկ սուտակ,
 Պա՛րկ պա՛րկ զմբուխտ,
 Ստեղծումի բո՛րբ արեգակ:
 Ուզդուիլ դէպի հարիզունը ամէն հարցի,
 Գոյնպսի խոր մայրածճով,
 Խայիլ անծայր ու ցատակոծ ռվիլամներուն,
 Ձննիլ հեռուն,
 Սարսափելի վիատութեան դէմքը հեզնի,
 Խուհ՛ւլ, տխրի՛ւլ եւ սպասել.
 Օ՛ր սպասել՝
 Մե՛ծ նոխութեան,
 Վերջի՛ն, վերջի՛ն Ազատութեան...:

Ե. Գ.



ԺԻՐԱՅՐ ԱԹՅԱՐԵԱՆ

Ժայռայտ
ՄԱՌՈՐԸ

Պատմելիք շատ բան չկայ, մինչև տասնը՛հինգ տարեկանս երկարող ժամանակաշրջանին համար: Շատ բան չկայ՝ բացի վախէն եւ ամօթէն: Վախը՝ որ կը սողսկէր մեր տունէն ներս, նոյնիսկ անկողնէս ներս՝ հօրս ոտնաձայնին հետ եւ ամօթը՝ որ կը հետևէր քայլերուս, կը քալէր կողքիս, ամէն անգամ որ ոտքըս տունէն դուրս դնէի: Միշտ ալ մարդոցմէ պահելիք բան մը կար. երբեմն ծակ տարատ մը, շատ գէշ տեղ ծակ մը տարատին վրայ. երբեմն՝ քրքրուած կօշիկ մը, հարիւր անգամ կարկանդակ շապիկ մը:

Տասնը՛հինգ տարեկանիս, հայրս համարեց թէ բաւարար էր ուսումս եւ թէ այլևս պէտք էր դպրոցը չփելով, արհեստի մը երթայի: Չեմ գիտեր ինչ բանի նախառահմանած էր հայրս զիս, կը տեսնէի սակայն յստակ, որ իր փառասիրութիւնները ապագայիս նկատմամբ աւելի վեր չէին քան սափրիչի աշկերտի մը կամ շատ շատ մեքենադարձի աշկերտի մը աստիճանը:

Վճռուեցաւ որ սկսիմ սափրիչի աշկերտութեամբ, «Այսօն Բէքիւլիք»-ի մէջ, վարպետ Միշէլի քով: Որ այդ երեք չորս ուսք երկարութեամբ պզտիկ ծակը համարձակած ըլլար ինքզինք անուանել «Այսօն» խնդիր չէ, սակայն ճիշ-

բիւլիք... կը հասկնա՞ք... Ի՞նչ գործ ունէր հանրապետութիւնը սա խանութին մէջ, ի՞նչ կապ կար իր եւ մեր դիւղացիներու մօրուքին միջև: Երբեք չկրցայ լուծել այս մութ խնդիրը:

Արդէն շատ երկար ալ շմնացի այդ պզտիկ «Հանրապետութեան» մէջ: Սափրիչի աշկերտի փայլուն ասպարէզը կը թուէր ըլլալ շատ, շատ գժուարին ու լուրջ բան մը: Յամենայն դէպս, ձախտակներ արարածի մը տեղը չէր. արարածի մը՝ որ ձեռքը ինկած բանը կը կոտրէր, եւ վրայէն ալ յիմար յիմար կը ժպտէր ամէն առիթով, ու կը ջղայնացնէր «հանրապետութեան» շատ արժանաւոր, շատ դոտող ու մեծամիտ տէրը:

Այն ատեն փորձեցին դերձակի, ասպա մեքանիսիկնի աշկերտութիւնը. եւ որովհետեւ ասոնցմէ ոչ մէկը կը յարմարէր ինձի, ամէն ինչ ծայրէն վերակըսան՝ սափրիչ, դերձակ, մեքանիսիկն... սակայն արանց աւելի մեծ յաջողութեան:

Ու հիմա, եթէ կրնամ խօսիլ զբողոքներու մասին արանց կարմրելու, եթէ հիմա դիրքի նման բան մը ունիմ, այդ ալ կը պարտիմ մեծ մօրս, որ յամարած է մասնաւոր դասեր առնել տալ ինձի գաղտնօրէն: Ապա, հօրս առիւն, դորձածեց իր բոլոր հնարքները, եւ անկասկած նաեւ իր ամբողջ խնայողութիւ-

նը, որպէսզի յաջողի արձանագրել տալ զիս կանոնաւոր դասընթացներու, եւ վկայական մը ապահովել ինծի:

Ատով դարձած չեմ յանկարծ աւելի ճարպիկ քան երբ սփորիչի աշկերտ էի Վնայոն Բէրիպլիքի մէջ, ոչ ալ աւելի խելացի քան դերձակի աշկերտ եղած ժամանակս. բայց եւ այնպէս կարեւոր բան է վկայականը. «մոզական հազուա-տի պէս բան մըն է, կը կրկնէր միշտ մեծ մայրս. կախեցէք զայն իշու քուտակի մը վիզէն եւ իսկոյն կը վերածուի մեծահամբաւ իշու մը: Հաւատա ինծի, մանչս, կ'աւելցնէր, աւելի լաւ է լաւ հազուած էլ մը ըլլալ քան զրկուած ու մերկ մարդ մը»:

Վկայական կամ ոչ, պարտաւորուած չեմ այլեւս ժամանակս անցնելու Վնայոն Բէրիպլիքի մէջ մեր գիւղացիներուն մօրուքները թրջելով, կամ զանկը խուզելով. ինչ որ աւելի գէշ է, կեանք մը ամբողջ յատկացնելով քուրջեր արգու-կելու եւ կարկոններու:

Կասկած չկայ որ տղամարդու ար-հեստ է հիմակուայ արհեստս, շնորհիւ վկայականիս: Եւ յետոյ... պզտիկ բան չէ կարենալ ըսել մարդոց, թէ զծագրիչ եւ, այսինչ ընկերութեան մէջ:

Այս ամէնը լաւ, օրհնեալ ըլլայ մեծ մայրս. շատ լաւ: Կայ սակայն մնացեալը... Ու մնացեալը, Աստուած իմ, մնացեալը... պէտք ունիմ տասը ուրիշ վկայականի՝ կարենալ խաղաղութեամբ ապ-րելու շրջապատիս եւ պաշտօնակիցնե-րուս հետ: Ձեռ գիտեր ուր կը սորվին այս բաները. ո՛ւր կը ստացուին այս վը-կայականները: Վստահարար գէղ մը վը-կայականի պէտք ունիմ՝ կարենալ հան-դուրսնելու համար մարդոց բոլոր յիմա-րութիւններուն, ըսողը շարութիւններուն եւ մանաւանդ... մանաւանդ չժպտելու համար այսպէս, ապուշ ապուշ...

Ճ

Պատմեցի այս ամէնը ժանէթին: Ձեռ գիտեր թէ ինչպէ՞ն կըզայ համար-ձակել, սակայն պատմեցի ամբողջ պատ-

մութիւնս: Երկու ամիս առաջ էր, ծո-վեղերքի սրճարանը, ուր առաջնորդած էր գիս: Ամէն ինչ ըսի իրեն ու կը կար-ծէի թէ վերջացած էր, այլեւս պիտի չուզէր բառ մը անգամ ըսել ինծի, խո-սիլ 'հետս' իմանալէ ետք թէ յիմար ա-րարած մըն եմ ես:

- Կը հասկնամ, ժանէթ, կ'ըմբռ-նե՞ս հիմա, ըսի իրեն: Այս խօսքերը ար-տասանած պահուս, կ'ուզէի որբուած ըլ-լալ աշխարհի կրեսէն: Կ'ըմբռնե՞ս հի-մա ժպիտս ու... ամէն ինչ:

- Լաւ, լաւ, բողոքեց յանկարծ ժա-նէթ, պէտք չկայ երես կախելու նորէն. պէտք չէ, պէտք չէ... Յետոյ, ձեռքս աննկրով փակեցի մէջ՝ - մեծ բան մը չէ այդ բոլորը, շարունակեց, բան մըն ալ չէ, ոչ մէկ ձեռով լուրջ բան մը. ա-մէն մարդ, քիչ թէ շատ, անցած է նը-ման ապրումներէ, ատոր համար հարկ չկայ արիւնդ պղտորելու:

Ու մինչ կը խօսէր ինք, ձեռքս ձեռ-քերուն մէջ, չեմ գիտեր ուրիշ՞ ուր, Ռո-մէօն ու Ժիւլիէթը մտան զանկէս ներս՝ ձեռք ձեռքի բռնած: Միշտ ալ արդպէս կը պատահի նման անառակ բաներու հետ. միշտ ալ կը յաջողին տիրանալ մը-տածումներուս երբ որ իրենց քէ՛Քը ու-զէ. չեմ գիտեր ի՞նչ ընեմ, ինչպէ՞ն պաշտպանեմ ինքզինքս: Ոչ կըզպանք կայ, ոչ ալ որեւէ ձեռի մղակ՝ արդիւն-լու համար այդ շարադրօններուն մուտ-քը ուղեղէն ներս: Իսկ անգամ մը որ մը-տան՝ ա՛լ ոչինչ կընայ սեղաւան ընել գիրենք:

Ես Ռոմէօ ու ան Ժիւլիէթ, Ժիւ-լիէթ, Ժիւլիէթ...

Ժանէթ գլուխը շարժեց թեթեւակի մը, քիչ մը այն կողմ դարձուց գէ՛մքը, յետոյ ուսերէս բռնելով.

- Լսէ՛, Պաղտատա՛ր, ըսաւ. պէտք է վերջ տաս այս ժպիտին. պէտք է ամէն բանէ առաջ խոստանաս ինծի այլեւս չժպտիլ այս ձեռով: Պէտք է ճիշդ մը ը-նես ի վերջոյ, չէ՞... Պիտի ընես այդ ճիշդը, չէ՞, ինծի համար:

- Քեզի՞ համար, քեզի՞ համար: Պատրաստ եմ քիթն ու բերանը ջարդելու:

այդ ժպիտին, ակաճները փչրելու պատ-
րաստ եմ վիզը ուղրելու, առգի գըհաս-
ներ հազընելու իրենն:

- Լաւ, Լաւ, գո՛ւ եմ ու պիտի չըրդ-
ջառ, կը տեսնես. բնաւ պիտի չըզլառ:
Որպէս սկընաւորութիւն մը, վաղը ի-
րիկուն միտսին դուքս պիտի ելլենք,
դուն, Այպեռն ու ես:

- Այպէ՞ս...

- Այո, խօսած եմ իրեն արգէն այդ
ժապին: Զիրար աւելի մօտէն ճանչնալու
առիթ մը կ'ունենաք, ու ես ալ... ես ալ
կը հսկեմ, տեսնելու համար թէ խոս-
տումը կը պահե՞ս:

Յաջորդ իրիկուն միտսին գուրս ե-
լանք: Ժանէթ առաջնորդեց մեզ պալատ
մը, որուն գոյութիւնն իսկ կ'անդիտա-
նայի, եւ որուն առջեւն ոչ իսկ պիտի
համարձակէի անցնիլ, առանց իրեն ու
Այպեռին: Համազգեստաւոր դռնապան-
ներ, գորգեր, վարագոյրներ, ջահեր, ես
ի՞նչ գիտնամ դեռ ինչե՞ք ու ինչե՞ք, ու-
րոնք կը պարտերն թեզ մուտքէն իսկ ու
անձնաւորութեանդ վերջին մնացորդներն
իսկ կը փոշխացնեն:

- Շատ լաւ նուագախումբ մը կայ
չոս, ըսաւ Ժանէթ իրեն յատուկ բնական
չեշտով մը, երբ ոտքերն չեռա կը նե-
տէիք սեմէն. հաճելի երաժշտութիւն
մը կրնանք ունկնդրել, եւ ուղողն ալ թող
ելլէ պարէ:

Կը յառաջանայի Ժանէթին հետեւե-
լով, գրեթէ պահուրտելով անոր ետին,
ամէն մէկ զայլափոխի վախնալով որ
յանկարծ երեւան հանուի բուն ինքնու-
թիւնս, մարդիկ գիտնան իսկոյն որ ու-
րիչ ուրիշ եմ, եթէ ոչ սա խեղճ Պաղտա-
սարը... եւ օձիքէս բռնելով շարտեն
գուրս:

Ներս մտանք ընդարձակ սրահէ մը,
որ պարիկէ մը բնակարանն էր կարծես:
Սպասեակ մը, որ աւելի նախարարի կեց-
ուածք ունէր, աճապարեց դիմաւորել
մեզ, եւ առաջնորդել հազար ու մէկ զա-
ղաքավարական ձեւերով, նուագախում-
բին մօտիկ սեղան մը: Ժանէթ, կարծես
իբ պապենական տան սրահներուն մէջ

կը ճեմէր. միջոցը կը գանէր ժպիտներ
բաշխելու ավին ու ձախին: Նոյնիսկ հա-
մարձակեցաւ, ձեռքի շարժումով մը,
բարեւել ջութակահարին, որ խոնարհու-
թեամբ վերադարձուց զայն իրեն, նուա-
զելը շարունակելով հանդերձ: Կը զգա-
լի ինքզինքս աւազախորումի մը մէջ: Նը-
ւազազոյն շարժում մը կապարի պէս կը
ճնշէր ուտերուս, եւ կը մխրճէր զիս միշտ
աւելի վարերը:

Ի վերջոյ յաջողեցայ ողջ առողջ
հասնիլ, մինչեւ մեր սեղանը:

- Ո՛ւՓ, ըսի, հասնելուս պէս, այս
բուրբը վեր է ուժերէս:

- Ի՞նչ կայ այդքան պրկուելու, պա-
տախանեց Ժանէթ, բուրբ վայրերուն
նման վայր մըն ալ առ է, լաւ դիտցիր,
այս բուրբը աւելի շեն արժեք քան գուն
եւ ես:

Թող ուզածը ըսէր, նախարարի հա-
գուտով բուրբ այս սպասուկներուն
զննողի նայուածքները վստահութիւն
չէին ներշնչեր ինծի: Մանաւանդ որ հի-
մա սկսած էին մեր շորս կողմը գառնալ,
ճերմակազգեստ այդ հսկաները:

Հետագային սորվեցայ, թէ վարպե-
տութեան պէտք չկար, հնազանդեցնելու
համար այդ կեղծ նախարարները: Հե-
տագային հասկցայ՝ թէ բարի մարդիկ
էին, թէ կարեւոր անձնաւորութիւն մը
ըլլալու պէտք չկար, արժանանալու հա-
մար անոնց ուշադրութեան. կը քաշէր
քանի մը դահեկան սահեցնել իրենց ա-
փին մէջ, որպէսզի յարգեն թեզ, մահա-
բանայի մը պէս նոյնիսկ:

Ասան մը հասելէ ետք, նշմարեցի թէ
ջութակահարը աչքերը չէր հեռացներ
մեր սեղանէն, նշմարած էի այդ նայ-
ուածքը սկիզբէն իսկ, կարծես կողմնա-
ցոյցի մը մաշնոտացած ասեղը ըլլար,
իսկ մենք՝ իսկական հիւսիսին պորան
իսկ: Հաղիւ առտիճան մը շեղած այդ
նայուածքը, իսկոյն կ'ուզողուէր, ու կըր-
կին կ'իյնար մեր վրայ, մազնիտէ զա-
ուածի նման:

- Գիտե՞ս ինչ, ըսի Ժանէթին, սոս

Ղութակահարը չի դադարի մեղի նայելէ, աչքերով պիտի ուտէ մեզ:

- Այո, ըսաւ Ալպետ, ես ալ նշմարեցի. կարծես բոլորս ալ մտէն կը ճաննայ:

- Անտրէն է, ըսաւ Ժանէթ, - Հին բարեկամ մը, մանկութեան բարեկամ մը: Յաճախ կու գամ հոս լսելու համար զինք... Ու, թեւէս բռնելով եւ պարտտեղ առաջնորդելով - զպարենք քիչ մը: Մէկ կամ երկու պար հազիւ պարած էինք - դէշ աղէկ մէջէն կ'ելլէի - երբ զգացի թէ Ալպետ ուսիս կը զարնէր:

- Չի՞ բաւեր որքան չարչարեցիր սա խեղճ աղջիկը, բաւական չէ՞ այսքան ատեն քարտատարի դեր խաղալ... ձգէ քիչ մըն ալ ես պարեմ, ձգէ ես ալ պարեմ Ժանէթին հետ:

Անմիջապէս զգացի թէ արիւնը դըլուխս կը խուժէր: Հարաբոխ մը կար կարծես մէջս, որ ամէն բովէ կրնար պայթիլ: Պիտի յարձակէի սա անկիրթ Ալպետին վրայ, եւ իրական մաքատարի լեզուով պիտի խօսէի հետը, երբ յանկարծ նմարեցի Ժանէթի նայուածքը: Զսպեցի ինքզինքս, ճիշդ ատենին:

- Լաւ, լաւ, Պաղտատար, ըսաւ Ժանէթ, այդքան նեղուելու պէտք չունիս: Ալպետին ըրածը կատակ էր. բարեկամներու միջև յաճախ նման կատակներ կ'ըլլան:

Թէեւ շատ ալ համոզուած չէի, սակայն ձգեցի որ պարեն:

Երեկոյթի վերջաւորութեան, Ղութակահարը եկաւ մեր սեղանը:

Ժանէթ ներկայացուց մեզ:

- Իմ երկու լաւ պաշտօնակիցներս... Իմ ամենակրն բարեկամս:

Աղուտը երիտասարդ մըն էր Ղութակահարը, իսկապէս աղուտ: Ժանէթին հին բարեկամ... մանկութեան բարեկամ. երջանիկ արարած... մանկութեան բարեկամ, մանկութեան բարեկամ... երջանիկ արարած: Ինչե՞ր պիտի տայի իր տեղը կարենալ ըլլալու համար...

Ժանէթ կ'ուզէր որ քայսենք Անտրէին որպէսզի գործը վերջացնէ ու միասին վերադառնանք: Սպասեցինք, ու

վերջին մեկնողներէն եղանք: Երբ շորսս միտսին կը քայլէինք՝ ես առի Անտրէի Ղութակը ու թեւիս տակ դրի: Քիչ մը ես ալ Ղութակահար կը զգայի ինքզինքս այդ ձևով... Ղութակի մը տուփը թեւիս տակ:

- Շատ շնորհակալ եմ այս իրիկուան համար, ըսաւ Ժանէթ, երբ քիչ մը հեռացանք միւս երկուքէն. ու աւելցուց ցած ձայնով՝ դիտե՞ս, շատ դժմացի, իսկական ճէնթըմէնի նման վարուեցար, հպարտ եմ ջերմով, հպարտ եմ ընկերակցութեամբ:

...Հարկաւ, ես ալ ըսելիքներ ունէի. եւ ինչե՞ր... եւ որքա՞ն ատենէ ի վեր... Այո, սակայն այս Պաղտատարէն տարբեր մէկը ըլլալ պէտք էր կարենալ յարմարցնելու համար բոտերը: Իմ բառերս իրար կ'անցնին, ահ ու սարսափի կը մատնուին երբ իրենցմէ քանի մը հատին պէտք ունենամ, կը խուժեն փորէս ներս, կը յարձակին բոլոր անդամներու վրայ, կը տաքցնեն ականջներս ու կը կորսուին, կը կորսուին մինչև սրունքներուս մէջ, եւ զանոնք դողի կը բռնեն, վախտ ցօղուններու նման:

Նախ Ժանէթը տուն հասցուցինք, յետոյ, երեքս շարունակեցինք քայլել քիչ մը, իրարմէ բաժնուելէ առաջ:

Ուրիշ բազմաթիւ անդամներ գացինք այդ պալատանման սրահը, Ալպետի ընկերակցութեամբ, կամ ես ու Ժանէթը առանձին: Մտիկ կ'ընէինք Անտրէի նըլազը, կը պարէինք քիչ մը եւ լուռ ու երկար կը գիտէինք զիբար: Ամէն անգամ, ինչպէս առաջին դիշերը, վերջինը գուրս կ'ելլէինք, մեր ետեւէն քայլելով մեր գեղեցիկ Ղութակահարը, երբ ես թեւիս տակ նստած կ'ըլլայի գժբախտութեան անբաժան Ղութակս: Ու շատ յաճախ, երբ ամէնքս միտսին կը վերադառնայինք, կը տեսնէի թէ Անտրէն Ժանէթի ձեռքը կը բռնէր, երբ կը քայլին կողք կողքի:

Ու միշտ ալ ոչ մէկ հարձակումներ կու սեփական բողբ, երկու աղուտը բառ Ժանէթին ըսելու համար: Չեղաւ, չկըրցայ ոչ մէկ պիշեր: Երկու բառ Ժանէթին

նախ քան որ ջութակահարը կանխած ըլլայ զիս անդարմանելիօրէն:

Եթէ կարենայի միայն զայն առաջնորդել ծովափնեայ այն սրճարանը, ուր տարած էր զիս առաջին անգամ: Եթէ կարենայի միայն առանձին մնալ իր հետ ու խօսիլ իրեն անգամ մը եւս, խօսիլ միայն իրեն, առանձին. ըսել իրեն ամէն ինչ, բացէ ի բաց. ամէն ինչ որ կայ հոս, առ... անկէ ետք ստատանան թող տանի ջութակահարը:

Յաջորդ օր, առառ կանուխ, գացի ժանէթին, իր գրասենեակը, ու ըսի թէ խօսելիք ունէի, եւ թէ իրիկունը կը սպասէի իրեն, ելլելու ժամանակ:

Քիչ մը զարմացած թուեցաւ, սակայն առարկութիւն մը չըրաւ: Ուրեմն ամէն ինչ լաւ կ'ընթանար:

Իրիկունը, իրարու հանդիպեցանք ճիշդ ինչպէս որ կը փափաքէի որ ըլլար: Կը մնար միայն որ ես կարենայի միջոցը գտնել թանկուռ ներսս կրծող բառերը եւ ըսելու զանոնք ժանէթին:

- Ժանէթ, ինչո՞ւ կ'ընես այս բոլորը, սկսայ ըսել, ինչո՞ւ կ'ընես այս բոլորը ինձի համար:

- Ի՞նչը, զարմացու ժանէթ, բացակայի պէս:

- Ամէնը, ամէն ինչ: Ձի բաւեր որ զիս պաշտպանեցիր գրասենեակը, ինքզինքդ կը պարտադրես ամէն գիշեր գուրս ելլել հետս, ներկայութիւնս կրել ամէն գիշեր:

- Իայց, Պաղտասար, ըսած էի արդէն թէ կ'ուզեմ օգնել քեզի, օգտակար ըլլալ քեզի, չէ՞:

- Օգնե՞լ ինձի: Միայն ատիկա... Հա, կ'ըմբռնեմ. բարի Սամարացին: Ուրեմն միայն ատիկա էր... Պաշտօնդ լըրիւ կատարած ես, կրնաս հպարտանալ: Ամէն ինչ կարգադրած ես ուղածիդ պէս. չարած ես մինչեւ իսկ բարեկամութիւնը Ալպեթին ու ջութակահարին, կրնաս հըպարտանալ...

Այլ չեմ գիտեր թէ ուրիշ ինչեր կ'ըրցայ ըսել, ի՞նչ յիմարութիւններ դուքոտալ: Տեսայ միայն, թէ գուշատեցաւ,

արտահեցու չափէն աւելի: Բացակայ երևույթ մը առաւ, հետո՞ք անսահմանութեանց մէջ կորուսած երևույթ մը:

Հասկցայ իսկոյն, թէ գէշ սկսայ: Սկիզբէն իսկ զգացած էի թէ գէշ կը սկսէի, գէշ սկսած էի. այդ ձեւով չէր որ կարելի էր խօսիլ զգացումներու մասին: Հասկցած էի թէ պէտք էր ուրիշ բաներ գտնել, զօրաւոր բաներ, անոնցմէ՝ որոնք զիս կը շարշարէին այսքան երկար ատենէ ի վեր:

- Ներէ ինձի, ժանէթ, ըսի, ցաւ պատճառեցի քեզի, դիտեմ... պատճառը... պատճառը այն է որ... Այլ չեմ կրնար քաշկուտուիլ փէշերէդ կախուած, պարտադրելով ներկայութիւնս քեզի: Ձեռ կրնար շարունակել այսպէս, միշտ պէտքը ունենալ ներկայութեանդ. կը նախընտրեմ սատկել, սատկել՝ քան այսքան, այսքան պէտք զգալ քեզի... Դիւրին չէ, ժանէթ, դիւրին չէ, հաւատո՛ւ:

Մինչ ես կը պայքարեմ, կը զբոսնիմ կարենալ բռնելու համար փախլով բռնեբը, ահա ժանէթ կը խռովի, կը յուզուի, կը ցատկէ ոտքի: Աստուած իմ, Աստուած իմ կ'ըսէ, տեսակ մը հառաչանքով, սարսափահար նայուածք մը նետելով վրաս: Կը դառնայ անդին, յետոյ անգամ մըն ալ սարսափի նայուածք մը կ'ուղղէ ինձի, կարծես հրէշ մը տեսած ըլլար, ու կը հեռանայ, կը փախչի ուղղակի, զիս մինակ ձգելով: ձգելով զիս առանձին՝ իմ հին թշուառութեան հետ:

Մարդ ըսածդ սակայն կ'ապրի: Թըշուառութեան մը համար իսկ կ'ապրի, երբ նոյնիսկ ոչ մէկ պատճառ ունի: Տարբրինակ մեքենայ մը՝ այս ժարդ ըստուծը, որ կը շարունակէ գործել, երբ ոչ իսկ զսպանակ մը մնացած է իրեն:

Յաջորդ առաւօտ հաւաքեցի իմ թանկարժէք անձս ու գացի գործի: Առաւօտ կանուխ գացի գործի, կարծես ստակէ աւելի թանկարժէք բան չունէի ընելիք:

Միջանցքը դարձայ, սանդուխներէն վեր բարձրանալ կը պարտաւորուէի...

Բայց... կ'երազէի՞ արդեօք: Իրա՞ւ ժա-
նէթն էր, ինք, ժանէթ, որ կը սպասէր
ինծի, սահաբախներուն գլուխը: Քաղցր
ժեղքի մը կը հոսի ժարմնէս ներս, ան-
սակման հրաժշտութիւն մը: Սիրտս կը
սկսի իր վալսին, խելագար վալսին:

- Ըսելիք ունի՞մ քեզի, կ'ըսէ անա-
պարտօք, ցածցնելով ձայնը. պէտք է
նախ ներողութիւն խնդրեմ երէկուայ
անգաղաքավարութեանս համար: Կը նե-
րես, չէ՞. կ'ամչնամ ուղղակի, այդպէս
յիմարտքէն ձգել հեռանալուս համար. կը
ներես, չէ՞:

- Օ՛ ժանէթ... հարկ չկայ...
Ժանէթ կը մօտենայ ինծի, բոպէ մը
կը վարանի ու.

- Լսէ Պաղտատար, կը շարունակէ,
պէտք է խօսիմ քեզի: Երէկ չհամարձա-
կեցայ. պէտք էր շատ առաջ ըսած ըլլա-
յի, բայց... բայց, օ՛հ... վերջապէս ա-
հա. նշանուած եմ պրիթէ Անտրէին հետ,
Ջուֆակահարը, գիտես չէ՞ շուտով կ'ա-

մուսնանանք... կը տեսնե՞ս ուրեմն...

Կը տեսնեմ, կը տեսնեմ, շատ լաւ
կը տեսնեմ: Կը տեսնեմ վարագոյր
մը որ կ'իջնէ ծանրօրէն ու կը բաժնէ դիս
ժանէթէն: Անտրէն ու ինք, վարագոյրին
միւս կողմը, ձեռք ձեռքի տուած՝ աշ-
խարհի վրայ կը խնդան: Կը տեսնեմ դեռ
միւս կողմը շողողուն լոյսերը մեծ քա-
լասներուն, հեքիաթային սրահները պա-
րիկներուն, բա՛րձր, անմատչելի... ու
դեռ, ուրախութիւն, երգ ու պար՝ որոնք
կը մեկնին բոլորը մէկ ժանէթին հետ:

- Բայց ինչո՞ւ կը խնդաս: Օ՛, Պաղ-
տատար, նորէ՞ն. գարձեա՞լ այդ նոյն ժը-
պիտը...

- ...
- Բայց չէ՞ որ խոստացած էիր: Ահ՞
որ խոստացած էիր չժպտիլ այդպէս:
Խնդա՞լ. հ՞ո. օ՛, այո, անկասկած:
Անշուշտ որ կը խնդամ. եւ կը խնդամ
ինչպէ՞ս...

Ժ. Ա.



3. ԶՈՐԵՑԻ

Ե Ս Հ Ա Յ Ե Մ

Բարեկամիս, Տոբթ. Ռուբէն Իշխան-
եանի ճոխ աւագմին մէջ՝ գեղեցիկ, գու-
նաւոր եւ սքսի խօսող նկար մը կայ:
Գեանքիս գերագոյն պահըն:

Ատիկա մակազրութիւնն է այդ աղ-
ուոր նկարին, ուր Տոբթ. Իշխանեան՝
Իշխանօրէն կ'երեւի՝ ազգային հարազատ
տարազով:

Մեւ, բարձր փափախ մը գլխուն,
Զարինց-բիթին տակ՝ Զարդարեանական
պնիներ, սեւ վերարկուն վրայ՝ փամ-
փըշտակալ դօտի, քառասուն ծալք շալ-
ուար, ոտքերուն՝ գետին ցնցող ժոյկեր:
Իսկական ջան Փէտայի մը, կ'ըսես նոր
իլած է Մասնոյ սարերէն:

Ձախ կուրծքին վրայ սսկիէ շքանշան
մը կը փայլի:

Աջին՝ անդերէն գրութեամբ ժապա-
ւէն մը շքանշանակիրին ազգութիւնը կը
ներկայացնէ:

— I'm Armenian

Մի անապարհք ժտածել թէ Տոբթ.
Իշխանեան՝ պատահական լուսանկար-
չառան մը մէջ, պատահական քմայք մը
գունացնելու համար, ծպտուած եւ նը-
կարուած է:

Ոչ. երբե՛ք:

Նման պարագայի մը՝ նկարը արժա-
նի պիտի չըլլար տնչուշտ իր մակազրու-
թեան:

— Գեանքիս գերագո՛յն պահը...:

Բարձր փափախ դրած, սեւ պնիներ
ոլորած այս հպարտ Արմինիըն-ը փռա-
պանծ ախոյեանն է արեւելագիտութեան
նախորդած միջազգային մեծ մրցումի
մը. արժանի՛ հերոսը նաեւ քաղցրօրէն
յուզող եւ հպարտացնող պատմութեան
մը, զոր, օր մը, Տոբթ. Իշխանեանէն
լսելու վայելքը ապրեցայ:

Ու հիմա, երջանիկ եմ զայն դիտցած
ըլլալուս:

Ճ

Այն տարի, երբ Տոբթ. Ռուբէն Իշ-
խանեան բժշկական ուսանող էր Ամերի-
կայի մէջ, համալսարանի ընդհանուր
տեսուչը, գիտնական Կրէյ Պաքսթըն, ար-
եւելագիտական ամպիտեններու գեղավար
փրոֆէսէսըին հետ համախորհուրդ, շատ
գեղեցիկ եւ ինքնատիպ մրցում մը կը
կազմակերպէ ասիացի ուսանողներու մի-
ջեւ:

Տոբթ. Իշխանեանի ուսանողական
կեանքը անհամար մրցումներու շարան
մը եղած է: Այս մէկը սակայն, եզակի՛
բոլորին մէջ:

Ահա մրցումին մեւը—

Մասնակցողը ասիացի պէտք է ըլլար

ծաղումով, եւ բեմ բարձրանար իր աղ-
գային լման տարազով: Կուրծքին՝ ճեր-
մակ ժապաւէն մը՝ ազգութիւնը ներկա-
յացնող գրութեամբ. անգլիերէն՝ «Ես Հայ
եմ», «Ես Արար եմ», «Ես Պարսիկ եմ»,
«Ես Ռուբը եմ», Հնդիկ եմ, Չին եմ, Ճա-
րոնացի եմ եւ այլն:

Տակաւին, իւրաքանչիւր մասնակ-
ցող՝ կարճ բայց խանդավառ ճառով,
պէտք էր ներկայացնէր իր ազգին մեծու-
թիւնը, հանճարը եւ ա՛յն անմահները,
որոնց նմանը ո՛չ մէկ ազգ ունի:

Մրցանակ շահող ուսանողը, որպէս
պարգև, պիտի ստանար համալսարանի
ուսկեայ շքանշանը ու «Մեծ Ասիացի»
տիտղոսը:

Ատե՛ք՝ ոչինչ: Դեռ կար աւելի թանկ
պարգև մը:—

Յաղթական ուսանողին ազգային
զրօշը, նոյն պահուհի, պիտի բարձրանար
համալսարանի բակին մէջ կոթողուած
արծաթազոյն, բարձր ձողին վրայ, եւ,
շարաթ մը ամբողջ, յաղթականօրէն պի-
տի ծածանէր:

Ճ

Բաւական մեծ էր ասիացի ուսանող-
ներուն թիւը:

Արար, Հնդիկ, թուրք, հրեայ, չին,
ճարոնացի, պարսիկ, վրացի, մոնղոլ,
աֆղան, Այս բոլոր ազգերն ալ իրենց
գեներկայացուցիչը ունէին համալսարա-
նի գանազան ճիւղերուն մէջ:

Թուրք ուսանողներու թիւը՝ աւելի
քան յիսուն. Հնդիկներունը՝ քառասունի
ժօռ. միւս ազգերու ուսանողութեան թի-
ւերը երեքէն պակաս չէին:

Համալսարանի միակ հայ ուսանողը
Ինճն էր. ապագայ բժիշկ Ռուբէն Իշխան-
եանը:

Ուրեմն, բնականաբար, ի՛ր պար-
տականութիւնն էր, ի՛ր ճիտին տուրքը՝
ներկայացնել մեր ազգը, այս նորօրինակ
մրցումին մէջ:

Ճ

Կը սկսի եռուզեռը:
Ամէն ազգի ուսանողներ կ'ընարեն

իրենց ներկայացուցիչը եւ կ'անցնի տեն-
դազին աշխատանքի:

Ազգային հազուատներ կը ճարեն,
միասնաբար՝ իրենց ազգին փառքը, ե-
զակի անմահները դովաբանող ճառեր կը
շարադրեն, համակիրներ կը շահին, Ժր-
քիի անդամները կը դուշակեն եւ անոնց
հանդէպ... կը շաքարանան, շան պոչ
կ'ըլլան:

Աղմուկ, քարոզչութիւն, յաղթանա-
կի տիրանալու մեծխօսիկ վճռականու-
թիւն, բարձրաճայն խանդավառութիւն
ու պայքար:

Ի վերջոյ, մրցումը սովորական տե-
սակէն շէր: Ազգի դրօշակ պիտի բարձ-
րանար՝ իր հետ բարձրամենլով ազգային
պատիւը: Կար կուրծք փայլեցնող շքա-
նշան եւ ուսեցնող ատղոս:

Բնական է. պայքարի կծիկը երբ
քակուի՝ չի կրնար չսկսել ատելութիւնը,
քէնը:

Հնդիկը յարաբերութիւնը կը խզէ
չինէն, չինը երես կը դարձնէ ճարոնա-
ցիին, աֆղանազգին չի բարեւեր վրա-
ցիին, պարսիկը հեռու կը մնայ մոնղոլէն:

Թուրք ուսանողները, որոնց հետ
Ռուբէն ոչ մէկ յարաբերութիւն ունէր,
քմծիծաղով կը դիտեն հայորդին:

Ըստ իրենց ճիճիմ մտածողութեան՝
անցեալի ի՞նչ փառք, ի՞նչ մեծութիւն
կրնայ ունեցած ըլլալ պիղըմ փերուշան
կեալուրք, իր շունեցած ո՞ր հանճարով
կրնայ հպարտանալ...:

Օսմանի ճուտերէն մին, օր մը, կը
ժօտենայ Ռուբէնին, եւ լպիրշ ժպիտով,
կը հարցնէ.

— Ինչի՞դ վստահելով պիտի մրցիս
մեզի դէմ, քարիխիլից էրմէնի: Ապա,
հեղնանքով, կ'աւելցնէ.

— Ազգիդ մեծութեան լայնքն ու
բարձրութիւնը քանի՞ արշըմ է:

Թրքերէն լեզուն շատ լաւ գիտէ Ռու-
բէն, բայց անգլիերէնով կը պատասխանէ
թուրք ուսանողին.

— Ձեզ նկատի չունիմ կրքեք, սըր,
ես պիտի մրցիմ ասիացի ա՛յն ուսանող-
ներու դէմ, որոնց ազգային պատմու-

թիւնը պատի՛ւ ունի, քաղաքական փառք ունենալէ առաջ եւ վերջ...
Այսպէս: Քէն, քմծիծաղ, արհամարհանք, ազմուկ ու պայքար:

Գալիք մրցումը աշտարակչինութիւն պիտի չըլլար անշուշտ, բայց նախորեակները կ'ըլլան իսկական խառնակութիւն, որմէ դերծ չեն մնար նաեւ ամերիկացի, եւրոպացի բազմազար ուսանողները, կողմ ու դէմ ըլլալով զանազան ստիպանքներու:

Ռուբէն, համալսարանի մէկ-հատիկ հայր, ինքն ալ պայքարի մէջ է: Բայց իր պայքարը սեւէ ստիպանքի դէմ չէ: Ինք սեւէ ստիպանքի դէմ որս չունի:

Դրա՛մ հայ ուսանողին սխրիմ հակառակորդը, որուն պէտք է յաղթել, տիրանալ, մրցումին մասնակցելու համար: Մնողքը, օրուայ հացէն խնայելով, ամասական շատ համեստ զումար մը կը դրիէ իրեն: զումար մը, որ հազիւ կը բաւէ պանդուխտ ուսանողի իր անհրաժեշտ ծախսերուն: Դժուա՛ր թէ կարելի ըլլայ խնայել սեւիք քան հարիւր տոլար՝ հայկական լման տարազ մը ունենալու համար:

Երեւանեան բաճկոն, քառասուն ծալք շալուար, Ղարաբաղի բարձր փափախ, փամփշտակալ գօտի, կաշիէ սեւ մոյկեր, ազգային դրօշ, «I'm Armenian» դրոսթիւմը ժապաւէն: Այս բոլորը ունենալու համար դրամ, դրամ պէտք է:

Ակայ: Աունի: Պանդուխտ հայ ուսանող է ի վերջոյ:

Միակ բանը, զոր կրնայ առանց դըրամի ունենալ Ռուբէն, սեւ, ոլորուն պիտի չեն:

Սկսած է գայն երկնցնել արդէն:

Յ

Ինչպէ՞ս յաղթել, ինչպէ՞ս տիրանալ պէտք եղած դրամին:
- Դրա՛մ...
Երկար կը մտածէ Ռուբէն:

Ի՞նչ ընէր վերջապէս:

Ամերիկահայ բարեխրական կազմակերպութեան մը դիմէր, եւ կամ, բարերար ազգայինի մը գո՛ւտը զարնէր, Վի թիչ փողոյ խնդրէր:

Երբեք, երբե՛ք: Դրամ խնդրելու սովորութեան գէժ է ինք:

Իր խառնուածքի շերտակոտութեան մէջ՝ դրամ ուզելը հոմանիչ է շեշտուած անկարելիութեան:

Ի՞նչ ընել ուրեմն...
Ձմանակցի՛լ մրցումին:

Այս անկարելիութիւնն ալ մեծ ըլլալէ աւելի՛ վիթխարի է:

Օ՛ր, շմանակցելու պարագային, Ռուբէն ի՞նչ պատասխան պիտի կարենայ տալ Հայոց Պատմութեան, ինչպէ՞ս պիտի կարենայ ինքզինք արդարացնել անմահ հայ պապերու արդար դայրոյթին դէմ:

Տակաւին, շմանակցելու պարագային, որքա՞ն պիտի տատապի իր ազգայնական հոգին, անհատականութիւնը, ին՞չո՞ք:

Ձէ՛: Քանի որ անկարելի է շմանակցելը, ուրեմն պէտք է պայքարել, պէտք է յաղթել դրամին՝ մասնակցութեան կարելիութիւնը ապահովելու համար:

Բայց ինչպէ՞ս, ի՞նչ ճամբով:
Երկար կը մտածէ:

Ի վերջոյ կ'որոշէ դիւերային որեւէ աշխատանքի մեծնարկել եւ տիրանալ պէտք եղած դրամին:

Դիւրին դտնուող մեակ զորքը՝ ճաշարանի մէջ պնակ լուարն է:

Ու, Ռուբէն, յանուն ազգային պատիւին, առանց վարանելու կ'իջնէ ասպարէզ: Կը սկսի աշխատիլ «Քալիֆոռնիա» կոչուող ճաշարանի մը մէջ:

Դժուար է. իսկապէ՛ս դժուար: Յերեկը՝ համալսարան, երեկոյեան՝ դասերու պատրաստութիւն, եւ զիջերն ալ, մինչեւ ուշ՝ անվերջանալի, ասպտակներու հետ: Ըո՞նք զիւրիւն է:

Ժան ֆօլ Սարթրի երեւակայած ռեալիստներն իսկ չի կրնար շնահանջել:

Ռուբինի վճարանները հայկա-
կան է ստեղծել: Նախանշել չի գիտեր եր-
բեք:

Կը տուկայ Ռուբին, կը տանջուի,
բայց կ'աշխատի, սիրով, սրտով կ'աշ-
խատի, հայր'ն պէս:

Ու, տոբին պարտութիւնը անխու-
ստփելի կը դառնայ տակաւ:

Անքուն գիշերներու իր տառապան-
քի'ն մէջ իսկ՝ անհունօրէն կ'երջանկա-
նայ Ռուբին, որովհետեւ կը պայքարի
ազգային դրօշ բարձրացնելու իտէային
համար:

Գիտէ՛ք: Ազգասիրական նման ի-
տէայնորու վսեմութիւնը ուժ կու տայ
ժարդուս ջիշերուն, խանդ՝ հոգիին:

Հայ ուսանողը կ'աշխատի...

Ճ

Ռուբին ամերիկացի, եւրոպացի եւ
ասիացի անհամար ուսանողներու մէջ,
մէկ ընկեր ունէր միայն, իրա՛ւ ընկեր:

Իտալացի էր ան: Անունը՝ Տոմինիկ:
Մաքուր, կատակարան, խանդավառ
այս ուսանողին ընկերասիրութիւնը իս-
կապէս անզերականացի էր:

Աւելի չիակը՝ ընկերասիրութեան
ժարմացումը ինքն իսկ էր:

Ո՛վ գիտէ, թերեւ... Հայու արիւն
խանուած էր իտալական ազնիւ իր ա-
րիւնին: Արմէնօ կ'ըսէր ու հոգի կու
տար:

Ռուբին եւ Տոմինիկ, համալսարանի
մէջ, միշտ միասին էին: Իտալացին կը
փափաքէր որ միասին ըլլան դուրսն ալ,
դրօսավայրերո՛ւ մէջ ալ, միասին ըլլան
միշտ, ամէն տեղ:

Բայց Հայը, համալսարանէն դուրս,
կը հեռանար իրմէ, կը խուսափէր ուղ-
ղակի:

Մեծահարուստի զաւակ էր Տոմինիկ.
քաղը լեցուն ուսանող:

Ռուբին, աղքատութեան մէջ՝ հը-
պարտ: Համալսարանէն դուրս, միասին
ըլլալու պարագային, անշուշտ կրնայ
մատուցիլ իր քօտկին պարտութիւնը:
Ս', ո՛չ. Հայու իր խրոխտ ՆՍ-ը չի նե-
րեր իրեն նման նսեմ բաներ:

Տոմինիկ միշտ փորձած էր ծանօթա-
նալ Ռուբինի նիւթական կացութեան,
բայց չէր կրցած:

Դրամը ո՛չ մէկ արժէք ունէր մեծա-
հարուստի զաւակ եւ մեծհոգի այս ու-
սանողին քով: Ծառ կը փափաքէր օգնել
Ռուբինին՝ իր իրա՛ւ ընկերասիրական
զգացումներուն բաւարարութիւն տալու
համար:

Բայց հայ ուսանողը, անգիշող սա-
սունցիի իր խանուածքով կը զլտնար
այդ քաղցր բաւարարութիւնը՝ Տոմինի-
կի մաքուր զգացումներուն, հոգիին:

Ռուբին, Քալիֆօնի ճաշարանի մէջ,
երբ իր չորրորդ գիշերուայ սէրվիսը
կ'աշխատէր, ահա, անակնկալօրէն, խո-
հանցէն ներս կը մտնէ Տոմինիկ:

Պնակ լուացող հայ ուսանողը գէմբը
հակառակ կողմ կը դարձնէ՝ շնանցուե-
լու համար:

Բայց ուշ:

Տոմինիկ, ներս մտած վայրկեանին
իսկ, կը տեսնէ իր դասընկերը, եւ, ա-
րիւնը ա՛յն աստիճան եռք կ'ելլէ, որ չի
կրնար զսպել իր զայրոյթը ու կը պոռայ
ուժղին:

- Արմէնօ...

Ռուբին կը ցնցուի: Սիրտը կը պայ-
թի կարծես: Ձեռքէն վաբ կ'իջնան պը-
նակները...

Եւ, իրեն այնպէս կը թուի թէ՛ պը-
նակներուն հետ, կ'իյնայ, կը կտորուի,
կը փշրուի իր հպարտ եստկանութեան
բիւրեղեայ բաժակը նսեւ...

Ամէն հայու կուրծքին տակ խորի-
տութիւնը առիւծ մը ունի:

Ռուբինինը կը վիրաւորուի եւ ցա-
սումով կը դոռայ:

- Այո՛, ի՛ն եմ, Արմէնօ, պնակ կը
լուամ... տե՛ս... բայց ըսէ՛, ի՛նչ կ'ու-
զես ինձմէ. ինչո՞ւ եկար... եւ ինչո՞ւ
չես մեկնիր տակաւին... լիվ մի էլօն...

Տոմինիկ, հեքիաթի քարացած ժար-
դուն պէս, պահիկ մը անշարժ ու լուռ
կը մնայ խոհանոցի դրան առջեւ, կը
սխրի:

Յետոյ, կը մօտենայ, կը գիտէ մա-
քըրուելու սպասող պնակները, կը գիտէ

146-2000

Ռուբէնի ճերմակ գոգնոցը, օճառոս ձեռքերը, ու, հազիւ լսելի ձայնով մը, կ'ըսէ սրտնեղած.

- Համալսարանի մէջ, այս օրերուն, քեզ միշտ քնտտ տեսնելով, կրահած էի ասկա. բոլոր պատերն ու ճաշարանները այցելեցի այս գիշեր, քեզ...

- Լա՛ւ, ահա, ԵՖՔՔՐ օլ, գտար զիս, ըսէ՛, ի՞նչ կ'ուզես ինձէ, սըր Տոմինիկ. կողտուրեւամբ կ'ընդմիջէ Ռուբէն:

- Այ՛մ արի. ոչի՛նչ կ'ուզեմ քեզմէ, Արմէնօ, միայն ըսել կ'ուզեմ թէ լաւ ընկեր մը չես դուն, ինչո՛ւ համար...

Ձի կրնար շարունակել: Բառերը կը խեղդուին կողորդին մէջ, եւ արցունքի երկու անգուսպ կաթիլներ վար կը սահին այսերէն:

Աւելի կը ժօտենայ Ռուբէնին, ձեռքը կը դնէ անոր ուսին, ու, խեղդուկ ձայնով, կը շարունակէ.

- Ինչո՞ւ համար այսպէս ես, Արմէնօ, դրամի պէտք ունիս, փոխանակ ինծի դիմելու, աղտոտ պնակներուն կը դիմես. ուրեմն, պնակի չափ արժէք չունի՞մ քոյդ... Օ՛, Արմէնօ, շատ յուզեցիր զիս...

Տոմինիկի անկեղծ խօսքն ու արցունքը կը հանդարտեցնեն Ռուբէնի սրտին առեւծը:

Կը հաշի գայրոյթը, եւ, առաջին անգամ ըլլալով, անպատասխան չի մնար խաւարցին:

- Մրցումին մասնակցելու համար, Տոմինիկ, ազգային սարազ ունենալու համար դրամ պէտք է: Ձկայ, չունիմ, կ'աշխատեմ. աշխատելը երբեք ամօթ չէ անչուչո...

- Արմէնօ՛, մենք այսքան տարուայ մտերիմ ընկերներ ենք սակայն...

- Օ՛, ո՛չ, Տոմինիկ. կ'ընդմիջէ դարձեալ Ռուբէն. կը հասկնամ ըսելու արժէք: Նաք էք օլ: Անկաթելի՛ է...

- Այսքան չոր պէտք չէ ըլլաս, մտերիմներ ենք վերջապէս...

- Այո՛, մտերիմ ենք, սակայն իմ ազգային սարազիս՝ ի՞մ դրամովս պէտք է տերանամ, մի՛ պնդեր, ոչի՛նչ կ'առնեմ

քեզմէ:

- Ձե՛մ տար, Արմէնօ, կը նուիրեմ:

- Ձե՛մ ընդունիր:

- Ձեա կրնար շընդունիլ, նուէրս քեզի չէ, այլ՝ Արմենիային

- Կը մերժեմ:

- Իրաւունք չունիս, Արմէնօ, որովհետեւ, ինչպէս ըսի՛ նուէրս քեզի չէ, Արմենիային:

Ապա, ժպտելով, կ'աւելցնէ.

- Մի ժողովար սը ձեր կայսրը, Տոմ Վասիլիան Տիգրանը, անկեղծօրէն գաշնակցեցաւ Հոսովի հետ: Արդ, զուն՝ Արմէնօ, ես՝ Ռօմանօ, պէտք է նորոգեմք այդ հին դաշնակցութիւնը՝ աւիտի օլ հարք:

Ձէ, Ռուբէն այլեւս չի հակառակիք ճշայն-Հոսովիական դաշնակցութիւնը նորոգելու հարցին:

Ու, փոխադարձ ժպտանքով, հոգիի կնիքով կը նորոգեն զայն:

Չափազանց կ'ուրախանայ Տոմինիկ, կը խայտայ մանուկի պէս:

Երջանկութեան հազարուոր աղաւնիներ կը թեւածեն ընկերասիրութեամբ զնշուն իր հողին վրայ...

Եւ, ճաշարահէն լսուող սուիմիլը՝ Ամերիկացիներու հարազատ շփացածութեամբ պարելով, Տոմինիկ կը ժօտենայ դիզուած պնակներուն, պարը առանց ընդմիջելու, կը վերցնէ ասա-տասնըհնգ հատ, ու, զուարթամայն՝

- Եի՛ ի՛ ի՛... հա՛ւ... - գոչելով, գծաին կը զարեկ եւ փոխարժէքը կը նետակ փչրուած յախճապակիներուն վրայ:


Յետոյ, խանդավառ՝

- Արմէնօ՛... հաա՛ւ եւիփի այ՛մ, որքա՛ն երջանիկ եմ. պոռալով, կը բռնէ Ռուբէնի ձեռքէն, սուիմիլը աւելի խելայնորէն պարելով, զայն դուրս կը քոչէ խոհանոցէն եւ խնդուած ճաշարանէն...

Ձ

Ռուբէն, ազգային սարազի պատաստութեան համար, կը դռնէ կովկասահայ դերձակ մը, Գեոք Շաւոն:

Հանգստեան կոչուած ծերունի մըն է այս մէկը:



2444

Ամերիկայի մէջ՝ իր ծննդավայրին, Ղարաբաղի կարօտը քաշելով՝ անհանգիստ կ'ապրի սակայն: Ե՛մ Ղարաբաղի զօւրար երկինքն կ'երգէ կամ կը հառաչէ օրն ի բուն:

Որպէսզի Քեռի Շաւոն աւելի բծախընդրութեամբ ժօտենայ աշխատանքին, Ռուբէն բաւական կը խօսի անոր՝ Ասիացիներու միջեւ կատարուելիք մըցումի մասին:

— Այլ դուն գիտես, Քեռի Շաւօ՛, հայ ազգային տարազի հարազատութիւնն ու վայելութիւնը տալու համար աշխատանք եւ վարպետութիւն պէտք չէ խնայես: Ազգին պատիւը բա՛րձր պահելու ենք, Քեռի՛:

Ղարաբաղի ծերունին ձեռքը Ռուբէնի ուսին կը դնէ, եւ, ժպտելով, կը վստահեցնէ.

— Քէֆօք քէօք պահիր, աղբեր ջան, Քեռի Շաւոն մատաղ լինի հոգուդ ու հասակիդ. պատիւը մեր բոլորին է, ախր մենք էլ հայ ենք: Դարտ մի՛ անի, հասկանում եմ, խօջախ հայի շոր է քո ուղածն. սըլս կաց, աղբեր ջան, իմ կարածի պէս եթէ դու էլ մեր ազգի փառքը, խելքը ճառես, եռազոյն դրօշը կը բարձրանայ էլի...
Ճա՛ռը:

Պատրաստ էր արդէն:

«Քալիփոն»ի խոհանոցին մէջ, այն շորս գիշերները՝ միայն պնակ լուալով չէր լուացուցած Ռուբէն, այլ նաեւ՝ մըտքէն ճառախօսելով...

Ճ

Այնքա՛ն անհամբերութեամբ սպասուած մըցումի օրը կու գայ վերջապէս: Համալսարանի ընդարձակ բակի քարաչէն, հոյակապ բեմը կը զարդարուի շքեղօրէն:

Իեմին առջեւ, պատուոյ աթոռներուն վրայ, կը բազմին նահանգապետը, քողաքապետը, կրթական նախարարը, պետական բարձրատիճան պաշտօնեաներ, զինուորականներ, Համալսարանի ընդհանուր տեսուչը, հոգեւոր պետեր, տախցի գետպաններ, հիւպատոսներ,

մեծ-մեծ գիտնականներ, Համալսարանի հոշակաւոր դասախօսները եւ այլ յարգելի հիւրեր:

Անոնց ետեւ՝ թղթակիցներու, ուսանողներու եւ հասարակութեան ծով բազմութիւնը:

Իեմին աջակողմը՝ արծաթազոյն, բարձր ձողին քով, պատուոյ պահակ կը կենայ վայելուչ դիմուոր մը, որ քիչ վերջ պիտի բարձրացնէ յաղթական Ասիացիին դրօշը...
Արեւելագիտական ամպիրոններու փրփուկէնքը բեմ կը բարձրանայ եւ ներկաներուն կը բացատրէ մըցումին ձեւը, կը յատկանշէ պատմագիտական արժէքը:

Յետոյ, կը կարդայ՝ մինչ այդ գաղտնի մնացած՝ Թիւրիի անդամներուն աւանդները:
Օ՛, արեւելագիտութեան զանազան մարզերու մէջ, մէյ-մէկ Այնլիթաններ են անոնք:
Բեմ կը բարձրանան ու կը դրական իրենց տեղերը:
Քիչ վերջ, բեմ կը բարձրանայ նաեւ՝ շքեղօրէն հազուած գեղանի Ամերիկուհի մը:

Սեղանին վրայ, բաժակին մէջ դըրուած վիճակի թուղթերէն հատ մը կը քաշէ, կը բանայ, կը կարդայ եւ հնչեղ ձայնով կ'ըսէ.

— Թող բեմ հրամժէ պարոն ճարտարներն:

Պարտիկ հովանոցի մեւ ունեցող դըլխարկով, ցցուն այտուկրներով գեղին ճարտարներն, մոխրագոյն շրջազգեստ եւ փիլոնածեւ կանաչ վերարկու հագած, բեմ կը բարձրանայ ու կերկերուն ձայնով կը ճառէ փառքը իր ազգին, կը ներկայացնէ ճարտարի հանճարները, որոնք շինտոյական կրօնքի սուրբեր են:

Ճարտարի ճառէն վերջ, Ամերիկուհին թղթիկ մը կը քաշէ դարձեալ, կը կարդայ, ու՛

— Հիմա, թող բեմ հրամժէ պարոն մոնղոլը:

Իր ազգային... Վաշայական տարազով այս գեղին ուսանողն ալ լէնկիթի մուրներուն գովքը կը հիւսէ:

- Եւ Հիմա, թող բեմ հրամմէ պարոն Արարը:

Ասպետական արարը՝ չեփի-ապկը դիտուն, սեւ ապան ուսերուն, դամասկեան արծաթանախչ գօտիէն՝ երկար սուր մը կախած, բեմ կը բարձրանայ եւ պերճ խօսքերով կը ներկայացնէ իսլամական կրօնքի հիմնադիր մարգարէն, անոր յաջորդները, կը պանծացնէ Հարուն-էլ-Ռաշիդները, Ապու Մահարիները, Սալահատինները եւ արար սուպետական հոգին:

Ապա, Ամերիկուհին հրակերով, հանդիսականներուն կը ներկայանայ պարսիկը, խանի տաքազով:

Անոր խօսածը ճառ ըլլալէ աւելի՝ սասանեան արքաներու անուանացանկ է: Մինչդեռ՝ իր ազդին փառքը կը պատկանի Օմաթ թախամին, Սասանին, Ֆէրատուին եւ այլ պարսիկ փելիսոփայ բանաստեղծներուն, որոնք շատ քիչ տեղ կ'ունենան անէմօղիի «ճառերն» մէջ:

Պարսիկէն վերջ, միշտ վերճակով, բեմ կը բարձրանայ եւ Կոյ կը ցցնէ՝ միջազգային այս մրցումին Տոն Քիչոսը, Օսմանցի շեփուղիի «ճառերն» մէջ:

Քիչ մը երկար կը ճառէ ան: Փառքի հորիզոն մը կը քաշէ Օսմանէն մինչեւ Սուլթան Մէհմետ, մինչեւ Ապտ-իւլ-Համիտ եւ Աթաթիւրք Քէմալ փաշա: Քը ներկայացնէ թուրք «հանճարները», խափալը փելիսոփաները, - տէքսանի բանաստեղծները եւ կ'աւելցնէ՝

- Հապա մեր աննման խօսա նասրէտտի՛նը... Աշխարհը մէկ կատակարան մեծ փելիսոփայ ունի, ան ալ մեր պուլունմազ խօսան է...

Ու եօթը ծիծաղելի մանրավէպեր կը պատմէ «հանճարեղ» նասրէտտիներէն...

Ճ

- Եւ Հիմա, բեմ թող հրամմէ պարոն Հայը— կ'ըսէ Ամերիկուհին:

Ռուբին, Քեոի Եաւոյին կարած հայկական տարազով, որ խկապէս վայելուէ էր, «Ym Armenian» դրութեամբ ժապաւէնը կուրծքին, հպարտօրէն բեմ

կը բարձրանայ եւ հուսկու ճայնով կ'արտասանէ իր ճառը:

- Լէյտիգ էնտ մէմբրլմէն, այ՛մ արմիւրն:

Արեւելեան հանճարը, քաղաքակրթութիւնն ու մշակոյթը իմ ազգէս ծընած են՝ արեւմուտք փոխադրուելէ շատ առաջ: Հոչակաւոր ազգարան Տոքթ. Վալիսմար Պէլլը Հովելիի «Հայ Միտք» մեծարժէք հատորը շքեղ վկայութիւնն է վկայութեանս:

Հին օրերուն, Ամերիկան կար բայց չկար:

Իսկ Եւրոպան անպարտօն ճանտա էր ու եւրոպացին՝ անտառի արարած: Մասի կեղեւը որպէս աման կը դորձած էր ան, տերեւը՝ որպէս հազուատ:

Սակայն՝ անդին, արեւելքի սիրտ Արմենիան աշխատանոց էր:

Հայը՝ վարպետ աշխատաւոր, պըղինձի եւ այլ մետաղներու դորձածութիւնը դրացի ժողովուրդներուն սորվեցընելու սանուութիւնը կ'ունենար:

Եւրոպայ անձանթ էր Արեւմուտքին, որ մտքով ալ արեւմուտք էր:

Մինչ անդին, Արեւելքի արեւելք Հայաստանի մէջ, հոչակապ կամարներու տակ, ուր զողթան երգն ու թարը անպակաս էին, արեւմտիտ հայը գինի՛ կը խմէր ոսկի՛ բաժակով:

Հարցուցէք աշխարհահռչակ Հայերի հիւսիսային թէ՛ մեծ ազգերէն ո՞վ է Արմենացին:

Աննման փրօֆէսօրը ձեզի պիտի պատասխանէ թէ՛

- Արմենացին՝ ար մեմն է քաղաքակրթութեան եւ մշակոյթի:

Ար մեմն է՝ արեւելեան արեւաշող հանճարի:

Ար մեմը՝ մեծղի առաքինութիւններու, որոնք մարդկային ըլլալէ աւելի՛ աստուածային են:

Մեր շեղուն, աննման հայերէնը, իր շքեղ հարստութեամբ, իր հնչական պերճ կատարչով եւ բանաստեղծականութեամբ, կրնայ շատ վերէն նայիլ միջազգայնացման պատիւին տիրացած սրեւէ լեզուի: Վկայութիւններս վկայողներ շատ կան:

Կարգացէջ մեծանուն լեզուապէտ Ռէն-տըլ Սթոն Նէրսի «The Armenian's Me-dzankantch» ուսումնասիրութիւնը ու մի մոռնաք անգլիացի մեծ բանաստեղծ Լորտ Չորճ Պայրընի սա խօսքը։-

«...Աւ քանի որ Աստուծոյ հետ խօսելու Միակ լեզուն հայերէնն է, Բանաստեղծութիւնը՝ վերջին խօսքն իր Հայերէնով պիտի ըսէ»...

Արմենիա՛:

Ահա այն երկիրը, ուր իսկապէ՛ս եղակի մեծեր ապրեցան եւ անմահացան:

Ազգերու պատմութեան անհամար կայսրերու մէջ մէկ հատիկ է Հայոց Տիգրան մեծը: Բոլոր կայսրերը վտարակալներ եղած են, իսկ Տիգրան կայսրը՝ արուեստի մոլեռանդ սիրահար եւ իմաստասիրական, պատմադիտական լսարաններու հիմնադիր:

Ըսէ՛ք, ո՞ր ժողովուրդը ունի դիրքի Հեղինակ Հանճար մը:

Հպարտորէն կը յայտնեմ: Միայն Հայ ազգը: Այո՛, միայն մե՛նք ունինք անկերպազանցելի Մեսրոպ մը, որ Հեղինակեաց Հայկական Այրուրենը եւ Հիմը դրաց Հայ Գրականութեան:

Դեռ՝

Ունինք անմահ Նարեկացի մը, որ Հանճարեղ ըլլալէ աւելի՝ Հանճարի մարմնացումը ի՛նքն իսկ է:

Ունինք Դաւիթ Անյողթ կոչուող խոշոր իմաստասէր մը, որուն լուսեղէն աշխարհահայեացքները անպարտելի կը մընան յունական փիլիսոփայութեան դիմաց:

Ունինք Շիրակացի մը, որուն գիտական մեծութիւնը ակադեմիա մը կ'արժէ:

Ունինք Պարոյր Հայկազն հոետոր փիլիսոփան, որուն Հանդէպ, Ինչպէս կը վկայէ Պրուտարքոս՝ լուսն են պերճախօս Պզատոնն ու քաջարան Արիստոտէլը:

Ունինք Պարթեւնէր, Սքանչելիներ, որոնք չնորհիւ՝ Աւետարանի թարգմանութիւնները օժեցան Վասուածաշունչ կոչուող իրենց շնաշխարհիկ թաղուհին:

Անհունորէն մեծ բանաստեղծներ Եւ-

նինք: - Վարուժան, Դուրեան, Միամանթօ, Մեծարենց, Տէրեան: Ասոնց քերթողական հանճարին առջեւ՝ քերթողական յարգանքի կը հրաւիրուին Հիւկոներն ու Հայնէնները: Հրաւիրողը ես չեմ. Հայ Գրականութեան քաջածանօթ Անասուլ Յրանն է:

Մենք, Հայերս, Արմենիա կոչուող լեռնոտ երկրին լեռնոտ ժողովուրդն ենք:

Քաղաքական կացութեան տիրացած, դիրքով բարձր բայց հողիով ցած ազդերը, այո՛, պետականապէս տկարացուցին, խեղճացուցին մեզ, մեզ վերջացնելու ճիւղային միամտութիւնը ունեցան: Ի՞նչ հող սակայն: Լեռնոտ Արմէն ազգը, անցած եւ գալիք դարերը վկայ՝ լեռնոտ Արմենիայի բարձունքներուն վեհութիւնն ու տոկունութիւնը ունի իր լուսաւորուած մտքին, հողիին մէջ: Կը տոկայ ազգային Հաւատքի ամենայն զօրութեամբ ու կը տեւէ:

Կայսրութիւնները, օր մը, կրնան չքանալ, աշխարհածանօթ զինուորականները կրնան մահանալ՝ իրենց մահէն իսկ առաջ: Նահատակուած ու անծանօթ զինուորին անմահութիւնը, սակայն, երաշխաւորուած է յաւերժութեան արքայէն:

Լէյտիզ Լեոս մէքըլլմէն, իմացէ՛ք. Հայ ազգը՝ քաղաքակրթութեան եւ մշակոյթի անծանօթ զինուորն է: Նահատակուած է բայց չէ՛ մեռած: Անծանօթ Ձինուորի անհուն պատիւը ունի՝ իր անմահ կեանքին մէջ:

Թ'իւնք ետ:

Ճ

Ռուբէնէն վերջ, յաջորդաբար բեմ կը բարձրանան միւս Ատիացիներն ալ:

Հնդիկը կը ներկայացնէ իր մահարանները, փառքը կը ճառէ Սուքիա Մուսիս իշխանին. եւ կը Հպարտանայ Մահադա Կանտիով:

Ձինացին կը պանծացնէ իր պարիսպ շինող պապերը, կը գովէ կրօնապետ Տալայի Լամաները եւ կը պոռայ.

- Մենք 600 միլիոն ենք...

Վրացին՝ իր կենսոյական ճարպի-

կուժեան համար կը հպարտանայ:

Մրցումը կը վերջանայ:

Պատկառելի փուրին կը հաւաքէ թուղթերը, որոնց վրայ Ասիացիներու ճառերը սղազրուած են, եւ կը քաշուի դատական խցիկը:

Պահ մը ետք, Ասիացիները բեմ հըրաւորող Ամերիկուհին կ'անցնի բարձրաբախտին առջեւ, ու, հնչեղ ձայնով, կը յայտարարէ փուրիին վճիռը:

— Լէյտիզ Էմտ ձեռքըլմէն, պարոն Հայր կը շահի «Մեծ Ասիացի» տիտղոսը: Թող բեմ հրամայէ:

Հպարտութեամբ ուռած կուրծքով՝ բեմ կը բարձրանայ Ռուբին: Կեանքին գերազոյն պահն է հիմա: Իրեն այնպէս կը թուի թէ այլեւս ինք՝ ինք չէ, այլ՝ հին, մեծղի պայպերուն հետ միամուռուած անհո՛ւն արմէնիլըն մը, մարդացած Արարատ մը, որ աւելի՛ բարձր ճակատ ունի:

Ռուբին չի լսեր ծափերը, չի տեսնէր ժպիտները, ինք հոն չէ: Բացակայ ներկան է ինք: Այո՛, բեմին վրայ է Ռուբին, բայց վերացած է: Յաղթանակի սրբազան գինովութեամբ մը՝ իր իմացական ԵՍ—ը, իր մէջէ փառաւորուած արմէնիլըն—ը, բարձրացած է վեր, հոն, վսեմութեան այն լուսաւոր կատարը, ուր, թանաստեղծին պէս բսննք՝ «Դահ կը բազմի Պատիւ արքան Հայերու»:

Բեմ կու դայ Համալսարանի ընդհանուր տեսուչը, ու, Հանդիսաւորապէս, Ռուբինի կուրծքին կը գետեղէ ոսկիէ լըֆանչանը:

Ու, խելայեղօրէն կը ծափահարուի Մեծ Ասիացին, եւ անդադար կը լուսանկարուի թղթակիցներու կողմէ:

Ճիշդ այդ վայրկեանին, կը պատահի քաղցրօրէն յուզիչ, բայց նաեւ դրամարթ անակնկալը:

Կարելի՞ քան է որ Քեռի Շաւոն ներկայ եղած լըլլայ միջազգային այս մեծ մրցումին:

«Ողջախ հայի շորքն ինք կարած է, ուրեմն՝ ձեւով մը, ինքն ալ մասնակցող է ի վերջոյ»:

Երբ համալսարանի շքանշանը կը փայլի Ռուբինի կուրծքին վրայ, խանդն ու խաչախուժութիւնը Քեռի Շաւոյի կուրծքին տակ ա՛յն աստիճան կը բոցավառին որ տրամադրութիւնը «Լարարադի դամբար կրկնքին» շափ կը բացուի ու յաղթանակի երջանկութիւնը աստղեր կը վառէ հոն:

Ինքն ալ Հայ է ախր: Ալ չի կրնար նստած մնալ իր տեղը: Ու, յաղթանակի հրաշագործ պատիւէն երիտասարդացած՝ կը վազէ դէպի բեմ, կը ճեղքէ թղթակիցներու բազմութիւնը, կը հասնի Ռուբինին եւ՝

— Հողուդ ու Հասակիդ զուրբան լինի Քեռի Շաւոն. մեր ազգի ճակատը բարձր պահեցիր, աղբեր ջան, արի ճակատդ պաշտմ.— բսնլով՝ կը փաթթուի Ռուբինի վիզին ու սրտոս համբոյր մը կը գրոշմէ անոր ճակտին:

Յետոյ, դառնալով ժողովուրդին, ալ ձեռքը Ռուբինի ուսին դրած, ձայնը՝ հպարտօրէն իր կուրծքին զարնելով, կէս—հայերէն կէս—անգլիերէն, կը գոչէ.

— Ախր ուի ար կրէմտ ժողովուրդ...

Ու երբ, ընդհանուր խանդավառութեան մէջ, Հայկական Եռագոյնը կը բարձրանայ՝ ծափերու աղմուկը խլացնելու աստիճան կը բազմապատկուի:

Եւ, ծափերու ազմուկէն բարձր, դիւցաղնավէպի Ձէնով Օհանի՛ն իսկ նախանձը շարժող աղաղակ մը կը լսուի.

— Վիվի՛ Արմենո՛... վիվի՛ Արմենո՛... վիվի՛ Արմենո՛... վիվի՛ Արմենո՛... վիվի՛ Արմենո՛... վիվի՛ Արմենո՛...

Ազաղակողը կուսեցիք անշուշտ. Ռուբինի «դաշնակիցն» էր, իրաւացի թանկագին Տոմիլիկը:

Հալելոյ

ԽՕՍՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Կը բարձրանաս յազթական, բայց բարձունքիդ ընդմէջէն
Կը տեսնեմ ես վայրէջքն ու փախուսքը հոգիիդ,
Երբ գերարթած վերելքիդ կարմրափրփուր գինիէն,
Կը սակարկես ինծի հետ՝ փոխարժէքը կառոյցիդ:

Հիմա արդէն դուն մեծ ես ու ամրապինդ՝ կեանքով լի,
Կ'ուզեմ ըլլաս միտ աշտակ — ինչ իրաւունքդ է, սակայն
Թափուած արիւնը բաւ էր բերքիդ համար ցանկալի,
Ու կերտումն այս հոյաւեն՝ պատմութեան տուրքն էր միայն:

Բայց դուն ինչպէ՞ս — հակառակ դարերու մեր երազին,
Ու պայտաթի ածխէն՝ յառեալ փիւնիկ աննուան,
Մարմինդ վե՛ն կը սանիս բարձունքներու արեւին
Մինչ ինչ հոգիդ կը ձգես տուրքու մէջ աննանանց:

Մեր տառապանքը դժնէ եւ մեր երազը անեւջ,
Յաւերժութեան սլացքին յանձնած անունդ պայծառ,
Կ'ուզէի որ դուն իջնես ամէն հայու սրտին մէջ
Նայն բարութեամբ անվարան — ինչպէս անձրերը արգար:

ԼԵՒՈՆ ԳԱՐՄԷՆ

ԶՕՂՐԱՊ ԳԻՐԵՋԵԱՆ

«ԻՆՉ ԿՐՆԱՄ ՈՒՋԵԼ...»

Մէկ, երկու, Մէկ կարճ, մէկ երկար:

Ճոննիին ինքնաշարժին ճլակն էր: Ոտքի ելայ: Հայրս աչքերը հեռացուց Վիլհելմի դիտմանը: Նայեցաւ պատի ժամացոյցին: Իր ըսելու ձեւն էր որ ժամանակը անցած էր: Մայրս թթուեցուց զէմքը: Ըսաւ թէ ինչ կը Հասկնայի այսպէս անբուն մնալէ: Ծարաթը երեք, երբեմն չորս անգամ կը կրկնուէր այս պատճառով: Մակայն ջնանալէն ալ ոչինչ կը Հասկնայի: Ոչինչ կը լուծէր քունը:

Մոռցայ ներկայացնելու ինքզինքս: Անո՞ւնս: Ոչ մէկ արժէք կը ներկայացընէ: Ապուշ բան է անունի մը տակ կընդհուրէ: Ինչ որ է, անունս Ծրէա է: Արհն՝ սոս: Ձեմ գիտեր եթէ ունիմ: Հայրս զիս վաճառական տեսնել կ'ուզէր: Մայրս ալ տխուրացաւ: Բժիշկի նման քան մը: Երկուքն ալ յուսախար ձգեցի: Ես ալ յուսախար մնացի: Կեանքէս անշուշտ: Ինչն'ը կ'երազէի. ինչէ՛ր կ'ակնկալէի, ինչերո՞ւ Հանդիպեցայ...:

Մէկ, երկու, երեք: Երբորդը Ըղային ճից մըն էր: Ճոննի անհամբեր կ'երեւէր: Վար ի՛նչայ: Ճոննիին մատը ճլակին վրայ էր տակուին:

- Ամբողջ Թաղը պիտի արթնցնես, ըսի:

- Տա՛ւը ժամ կ'ուզես պատրաստուելու:

Ճոննի երբ այդպէս դիտուն ետեւը քերէր, գիտէի թէ Ըղայնացած էր: Այս վիճակին մէջ, նախընտրելի էր չխօսիլ հետը: Գրեթէ ամէն գիշեր մեր շիղերը լարուած կ'ըլլային արդէն: Մասնաւոր պատճառ մըն ալ չէինք ունենար: Գիշերը կարծես յոգնած կ'ըլլայինք ապրելէ: Մակայն յաջորդ օրը կը վերսկսէինք:

Ճոննի դարձուց կոճակը: Կոխեց լըծակին վրայ: Ամայի էին համբաները: Գիտացէն բեռնակառք մը կու գար: Լուսարձակները վառուած էին, կը կուրցընէին զիմացիներ: Բիշ մնաց որ մեզի գարնըւէր:

- Եկուր, գա՛րկ, մուտաց Ճոննի: Նայեցայ Ճոննիին: Մութին մէջ շատ ալ բան չէր երեւեր:

- Նորէն ի՞նչ ունիս, Հարցուցի:

- Թող վերջանայ, խերն եմ անիծեր: Բացի գրասիօնս: Դարձուցի կոճակը: Ապուշ բազիւն մը միայն լուսեցաւ: Զանձուրացած՝ դոցեցի գրասիօնս:

- Կէսօրին խանութ ուշացայ, ուսերցուց Ճոննի: Մեզ գործեցի կարծես: Հայրս ահապիս պատճառով ճանկեց: Ըսաւ թէ՛ գործի մարդ չեմ, թէ՛ մարդու երես չունիմ, թէ՛ մարդ պիտի չըլլամ: Մարդ... մարդ...: Ձեմ գիտեր թէ ինք՝

մարդ բլլալով ի՞նչ հասկցած է:
 Ճոննի կրցածին լափ կոխեց պէնդի-
 նին: «Օթոթբրտոթ» վրայ էինք: Ինք-
 նաչարժը միշտ կը սուրբար: Միշտ այս-
 պէս եղած էինք: Կը վազէինք, կը վա-
 զէինք եւ երբեք տեղ մը չէինք հասներ:
 Ոճողումի մը առջեւ ստիպուած կանգ
 առինք: Միկարէթ մը վառեցինք: Ճոննի
 րսաւ թէ Սոնային հանդիպած էր ծովե-
 դերքը: Հարցուց թէ ի՞նչ եղած էր պատ-
 մութիւնս Սոնային հետ:

- Գործս վերջացաւ կարծեմ հետը:
 - Ինչո՞ւ, հարցուց Ճոննի:
 - Այն օրը պնդեց որ հետը «Սթէրէօ»
 երթամ «Թուխթ» պարելու: Իրեն ըսի
 թէ «Թուխթ» պարել չեմ գիտեր եւ սոր-
 վիլ ալ չեմ ուզեր: Նեղուեցաւ: Լաւ է
 որ այսպէս վերջացաւ:
 - Ինչո՞ւ:
 - Լըջանալ սկսած էի:
 Ճոննի քթին տակէն կը ժպտէր:
 - Ինչո՞ւ կը խնդաս, ըսի:
 - Կ'երեւակայեմ քեզ «Թուխթ» պա-
 րած վիճակիդ մէջ:
 - Երեւակայելիք ուրիշ բան չգտա՞ր:
 Վերջապէս ճամբան բացուեցաւ: Ան-
 կրն մը երկու շարժավարներ իրարու կը
 հայհոյէին: Ճոննի հազիւ պրծաւ երկու
 ինքնաշարժերու մէջէն: Գազաքին վեր-
 ջին տունները հասանք:
 - Այսպէս ո՞ւր կ'երթանք:
 - Ձեմ գիտեր, ըսաւ Ճոննի:
- Յաճախ այսպէս ճամբայ կ'իյնա-
 լինք: Տեղ մը չէինք գտներ՝ մեր ձանձ-
 րոյթը խեղդելու: Եւ կը վերադառնայինք
 տուն ճիշդ այդպէս: Երբեմն ալ... Ձէ,
 չ'արժէր, ապուշ բան է: Փորձել, փոր-
 ւել, վերջը ի՞նչ պիտի ըլլար:
- Երթանք գաւաթ մը խմենք, ըսի:
 - Ուրեմն կրկին քաղաք վերադառ-
 նանք:
- Աւելի լուրջ ետ դարձեր ալ ունեցած
 էինք: Բայց լրջութիւնն ալ, մաս-
 ցածներն ալ, կորսնցուցած էին իրենց ի-
 մաստը: Վերածուած էին եւ ալ չեմ գի-
 տեր ի՞նչ բանի:
- «Ին աը Փէնիսին» լոյսերու մէջ

կը լողար: Ճոննի ինքնաշարժը կեցուց
 մայթին եղերքը: Տղնկ մը մօտեցաւ,
 ցնցոտիներ հագած էր, փորձեց ծաղիկ
 ծախել: Շատ ալ ականջ չկախեցինք: Հե-
 տեւեցաւ մեզի: Մի քանի դահեկան սա-
 հեցուցինք ձեռքը, չգոհացաւ, սիկարէթ
 մըն ալ ուզեց: Ճոննի ջղայնացաւ: Տղե-
 կը հեռացաւ: Ճոննի հարցուց թէ ո՞ւր
 կ'ուզէի երթալ, ըսի թէ շատ ալ կարե-
 ւորութիւն չունէր, միայն թէ տեղ մը
 նստէինք այլեւս ու վերջնաւոր սա խըն-
 դէրը:

- Գոց դրան մը առջեւ կանգ առինք:
 Ներսէն կարճբաւուն լոյս մը կը ծորէր:
 Դրան վերը, լոյսէ գիրերով «Ալատէն
 պար» գրուած էր: Կանթիկ մըն ալ դժած
 էին քովը:
- Եկուր, այսօր հոս մտնենք, ըսի,
 դուցէ Ալատէնին մոգական կանթիկը
 գտնենք:
- Ներսը ամայի էր: Կիտամութ մը կը
 տիրէր: Պարին ետեւ, աղջիկ մը կը ծը-
 խէր: Պարին կ'ըր աթոռներուն վրայ տե-
 դաւորուեցանք: Աղջիկը մօտեցաւ, փոր-
 ձեց ժպտիլ: Շատ ալ չյաջողեցաւ: Հա-
 կառակ իր երիտասարդ տորիքին, մա-
 ղած դէմք մը ունէր: Արտակարգօրէն
 ներկած էր շրթները, մազերը, գրեթէ
 ամէն կողմը: Հարցուց թէ ինչ պիտի
 խմենք:
- «Վիսքի» ըսի:
- Ի՞նչ ձեւով կը խմէք:
- «Մէք»:
- Անիմաստ նայուածք մը նետեց մեր
 վրայ:
- Ի՞նչ, դպրոցական կը կարծէ մեզ,
 վրայ բերաւ Ճոննի:
- Գաւաթ մըն ալ իրեն հրամցուցինք:
 Գոհ մնաց: Հարցուցի թէ երաժշտու-
 թիւն ունի՞ն: Անկիւնի «ճուշ պօզը»
 ցոյց տուաւ: Շարլ Ազնաւուրին մէկ եր-
 գապնակը գրի: Երբ վերջացաւ, կրկին
 նոյն երգապնակը մտիկ ըրի: Աղջիկը
 հարցուց ինչո՞ւ այսպէս տխուր երգերը
 կը սիրէի:
- Այնքան ալ տխուր չեն, ըսի:
 Միայն քիչ մը լափազանց իրական են:

Աղջիկը դաւաթը ձեռքը՝ կը նայէր ինծի: Հետաքրքրուեցաւ թէ ի՞նչ դարձ կ'ընէի:

- Մասնաւոր ոչինչ, ըսի:
- Երբեմն կը գրէ, աւելցուց ձոննի:
- Գրելը լաւ բան ըլլալու է, եղբայրացուց աղջիկը:
- Ոչ, ըսի:
- Ինչո՞ւ:
- Մտածել կու տայ:
- Լաւ, ինչո՞ւ կը գրես:
- Առանց գրելու չեմ կրնար սպրիլ:

Աղջիկը շուտաւ կ'երեւէր: Ձէր հասկցած: Եւ ալ շատ բան հասկցած չունէի: Ազնաւուրն ալ՝ որ միշտ կ'երգէր: Ո՞վ ինչ հասկցած ունէր արդէն:

Սեւամորթը մը ներս մտաւ: Գօրօրուէր, փնտրելով կ'երեւէր: Պարիսն անկիւնը նստեցաւ: Աղջիկը դաւաթ մը զիտօքն տուաւ: Ան ալ շտապ կը խօսէր: Սեւամորթը համարեց աղջիկը: Սեւ, մըստ չըթնէր կը մերժէին բաժնուիլ աղջիկին ներկուած շրթերէն: Աղջիկը մեր պարապ դաւաթներուն կը նայէր: Սեւամորթը աղջկան հարցուց թէ գիշերը ե՞րբ պիտի ձգէր գործը:

- Ժամը մէկին, ըսաւ աղջիկը:
Սեւամորթը սեղմեց աղջկան ձեռքը: Այդպէս աչքերը մեծ մեծ քայած՝ չես գիտեր ի՞նչ ըսել կ'ուզէր:

Այդ միջոցին երեք հողի ներս մըստան, - աղայ մը եւ երկու աղջիկներ: Հաւանաբար պարահանդէսէ կը վերադառնային: Աղջիկները գեղեցիկ ձեւով հագուած էին: Աղջկան մէկը քրօքն բոլորովն եղանակ մը մըմտաւով, պարի միջանի քայլեր ըրաւ:

- Հոս չե՞ն պարեր, հարցուց:
- Պատասխանող չեղաւ: Սեղանի մը առջեւ նստեցան: Տղան ձոննիին բարեւեց:
- Կը ճանչնա՞ս, հարցուցի:
- Երջանիկ աղայ է, ըսաւ ձոննի:
- Ինչո՞ւ:
- Հայրը միլիոնատէր է:

Սեւամորթը կռնակը պատին տուած, գլուխը կախ՝ կը մրափէր: Աղջիկը ժօ-

տեցաւ մեղի: Մէկ ուժգով կուշ տուաւ դաւաթը: Հարցուց թէ ինչո՞ւ այդպէս կը նայէի իրեն: Վայրկեան մը նայեցաւ սեւամորթին: Ըսաւ թէ գուցէ մաքրակեան մը չէր, թէ ստիպուած էր ընկաւ այդ գործը: Կերակրելիք կոյր մայր մը եւ կոյր եղբայր մը ունէր:

Միլիոնատէրին աղան, պոռաւով, աղջիկներուն դաւաթ մը եւս օճանաւոր սպասարկեց:
ձոննի ինծի հարցուց, թէ կը հաւատայի՞ կոյրերու այդ պատմութեան: Աղջիկը վրայ հասաւ:

- Անտանելի է այս աղան, ըսաւ: Բայց լաւ յաճախող է:
- Կ'ըսեն թէ հայրը անգղիս դրամ սունի:

Սեւամորթը արթնցաւ, ժամը հարցուց:
- Ժամը տասնըմէկ է, ըսաւ աղջիկը:

Սեւամորթը կրկին կախեց գլուխը:
- Բարի սիրտ մը ունի, աւելցուց աղջիկը: Երախայի կը նմանի:
- Կը սիրե՞ս զայն, հարցուց ձոննի:
Աղջիկը տխուր ժպիտ մը ունեցաւ: Միայն այդքան:

Իրապէս անտանելի էր այդ միլիոնատէրին աղան: Սեղանին զարնելով, իրեն համար քրօքնէլ մը սպասարկեց: Աղջիկը ետեւի սենեակը անցաւ պատրաստելու:

Ձոննի առատաւայելի կախուած կանթեղին կը նայէր:
- Ծրէտ, ըսաւ, եթէ Ալատէնին լամբը ձեռքդ անցնէր ի՞նչ պիտի ուզէիր:
- Ոչինչ, ըսի, ի՞նչ կայ որ ինչ ուզեմ:

Ձոննի ուտերը շարժեց:
- Գիտե՞ս ես ի՞նչ պիտի ուզէի, - վիլլա մը: Գեղեցիկ, շատ, շատ գեղեցիկ վիլլա մը: Վայրկեան մը կեցաւ: Ձէ, չարժեր, ըսաւ...: Վճէրափոթապէս ճերմակ քրօքնի օթօն մը, քովս ալ աղուորիկ պուպրիկ մը: Կրկին կեցաւ...: Ձէ, այդ մէկն ալ չարժեր: Հարկ է ուզել այնպիսի բան մը...: Այնպիսի բան մը...: Իսկապէս, ի՞նչ կրնամ ուզել:

Զարմացած կը նայէր կանթեղին: Փռչին ժազրելու յոգնութիւնն ալ յանձն տուած չէին: Երեք շղթաներով, աղապէս առատաղէն կախուած, խեղդուած ապուշ երազի մը կը նմանէր:

- Ի՞նչ կրնամ ուզել, կրկնեց ձոննի:
- Գաւաթ մը եւս բխոքից, ըսի:

Սեւածորթը միշտ կը մրափէր: Մի- լիննատէրին տղան միշտ կ'աղմկէր: Աղ- ջիկը միշտ իբր ժաշած դէմքը կը պտըտ- ցընէր: ձոննի միշտ կը փնտռէր: Իսկ ես... մասնաւոր ոչինչ ըրած ունէի: Պատին շուքերուն կը հետեւէի:

Աղջիկը տարաւ զքօքթէլի՞ն գաւաթը: Միլիոնաւորին տղան ուժոյ մը առաւ: Ծառ ալ չախորժեցաւ: Աղջիկը կրկին ներս մտաւ ու շերտ մը լեմոն բերաւ: Ապա մեր մօտը եկաւ: Հարցուց թէ դա- ւաթ մը եւս կ'ուզէի՞նք: ձոննի ըսաւ թէ ժամանակը անցած էր արդէն:

Գուրտ հլած ատենս, աղջիկը գիտ

կանչեց: Ըսաւ թէ աւելիով տուած էի դրամը:

- Հոգ չէ, ըսի, մօքն ու եղբօրդ դրկէ:

Աղջիկը աչքերը մեծ մեծ բացաւ:

- Կատակած էի, ըսաւ:
- Ձե՞՞մ հաւատար:

Շեշտակի կը նայէի իրեն: Աղջիկը գլուխը կախեց: Վարի շուրթը կը դա- ղար:

- Գիտե՞ս, ըսաւ, դուն լաւ տղայ ես: Այլեւս տխուր երգեր մտիկ մի՛ ը- ներ, կը հասկնա՞ս, երբեք, երբեք մտիկ մի ըներ...:

Ձայնը կը դողար: Աչքերը կարծես թրջուած էին: Զհասկցայ թէ ինչո՞ւ այդ աղջկան ամբողջ համբերեցի:

ձոննի դուրսը ինձի կը սպասէր: Ձեռքերը զբպանները՝ գրան վրայ դըծ- ուած կանթեղին կը նայէր: Ինձի դար- ձաւ:

- Իբաւ, ըսաւ, ի՞նչ կրնամ ուզել...:

Զ. Գ.



Բ. ԿՈՒՆԵԱՆ

Հանրապետության ԿԱՆԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Սեպտեմբերը կը հասնէր վախճանին:

Մէկ երկու շաբաթէն վարժարանը կը վերաբացուէր: Մարմնով սպասած էր, բայց բաւականաչափ դրամ չինայած: Գարաջը հասուցանելէ ետք, բաւական դրամ պիտի մնար ձեռքը:

Ազգականներ զինք կը հրաւիրէին Նիւ Եոթք եւ Ֆելյանիֆիա:

Գրն. Մայք զինք տարաւ մինչեւ երկաթուղիի կայարանը: Յուզումով բաժնուեցաւ բոլորէն: Հաշիւները մաքրուած էին: Ոչ մէկ դանդաղութիւն: Երէկը արդէն անցեալ էր: Վաճառումը քիչ մը մահ էր: Անդարձ մեկնումները, — այդ է մահը, — կը մաքրեն ու կը սրբազորենն էակները:

Նայուածքը չըջեց բնութեան վրայ: Ուղեց չըջապատը սպասորիչ յիշողութեան մէջ: Ամէն տեղ կը թողուր մաս մը հուժեղներ: Տիկ. Քերեզան ազի արցունք կը թափէր: Երեխաները, շունը, կատուն, հաւերն ու կովերն ալ կը բերէին իրենց մասնակցութիւնը ազմկալի եւ արցունքոտ բաժանումին:

Միայն Յրէտին մնաց անդրդուելի:

Շոգեկառքը կը սուրբար Հաստըն գետի եզերքէն: Անտառներ, լեռներ: Տերեւները սկսեցին շառագունիլ: Ամէն կողմ դոյն կը թրթորար: Ամառը կը նուազէր, դաշկացումներ եւ քաղցրութիւններ կը կաթէին միջոցին մէջ: Ազակի նման կը դիտէր: Սպունգի մը անկուշտ ծարաւով կ'ըմպէր սպասորութիւնները: Աչքերը չէին տեսներ այլեւս: Դարձած էր ներքին աւազան: Կը ճզնէր տեսնել անծանօթի մէջ: Իբր կեանքին թելը մ'ը պիտի երկարէր: Մայրը, Քաղուհին: Մինչեւ ուր:

Կախարչանք մը կը պարուրէ անիմանալին: Յոյսը եւ ըղձանքը կը դունտարեն զայն եւ անակնկալը թեւ կու տայ անոր: Զկայ անելի սազակալի բան, քան յատակութիւնը, ճշմարտութիւնը, որուն անուժով կը խօսին բոլորը: Գեղեցիկը ինքը ձգտումն է: Երբ հասար, կը մտխրանայ շարժքը: Իմաստը կը պարպուի, մինչեւ որ նոր տեսչեր հրահրեն հոգին:

Ազգականներ դիմաւորեցին զինք Կրէնտ Սէնթրըլ Սթէյշըն: Ազգականները: Բառը մարմին ու ընթացութիւն հազաւ: Մօրմէն զատ արեւմտեցից

չէր ճանչցեր: Անուն մըն էին միայն: Հիմա, շրջապատուած էր դուրսուրանքով: Մեկուսացման շրթան կտորած էր: Գոյութիւնը կ'ընդլայնէր:

Շլճած էր: Մեծութիւնը խախտած էր իր չափի զգացումը: Անխարճ աւելի մեծ էր, քան ինք կ'երեւակայէր: Գիւղի լեռներէն անդին՝ նոր ու հսկայ աշխարհներ կային: Պէտք էր ճամբորդել, կտրել տարածութիւնները:

Գլուխը վեր տնկած կը քայլէր փողոցներէն: Շէնքերուն կատարները չէր կրնար տեսնել: Կը զարնուէր անցորդներուն: Ի՛նչքան մարդ:

Գիշերը, կատարեալ կախարդանք էր: Պրոտուէյ եւ 42-րդ փողոց: Առասպելական քաղաք մը, որ ստուերներուն հետ, ամէն գիշեր երկրի ընդերքէն կը բարձրանար: Գոյներու շտապ, զթթումներ, խորհրդանշաններ: Տրոփումը մեծ քաղաքին: Սիրտ մը հղօր, որ մոլեղնորէն կը տրոփէ: Ապրելու վայրագ եւ անհամբեր տենչ, որ գիշերները գիծատուն կ'երթայ ու կը գինովնայ:

Ազդեանդրիան դիւղ մըն էր՝ Նիւ Եորքի քով: Ժամե՛ր, ժամե՛ր կը քայլէ կորսուած: Զափերը հին են, փոքր են: Իր հորիզոնը նեղ է: Կը քայլէ, կը քայլէ, տպաւորութիւնները կը խեղդեն սիրտը: Անձանօթ լարեր կ'արթնան, անյայտ տարածութիւններ կը բացուին: «Ո՛ւր են սահմանները», կը հարցնէ:

Անձը անմիջապէս շրջապատէն կ'առնէ իր չափերը եւ կը ստեղծէ իր տիեզերքը: Նոր հորիզոն մը, ու ահա կը փլի տիեզերքը: Եւ կը կերտուս նորը, աւելի լայն, վերջնական: Հասած ես անհունի ծայրը: Եւ ահա, հոյսփոյթը կը կրկնուի:

Ո՛ւր են սահմանները անձին: Ի՛նչ է կայուն տիեզերքի մէջը: «Ամենայն ինչ ոգիներով եւ աստուածներով լեցուն է»: Ու կը փնտռէ, կը փնտռուէ: Ժամեր, օրեր կը շրջի թանգարանները: Բնական Գիտութիւններու Թանգարանը, Մեթրափալիթըն Գեղարուեստի Թանգարանը: Շլացած է: Հաւատացեալը մօտեցած է Աստուածային Խորհուրդին: Ոտքերը կտրուած են հողէն:

Գիտութիւնը հիանալի է, բայց արուեստը – մարդ ինքն է: Ներքին աշխարհը:

Ռէճմպրանտը մանուանդ: Կարգացած է կեանքը: Կը կախարդէ գինք: Միշտ կը տիրապետէ, կ'առնէնէ: Կիտամութեան աշխարհը հարազատ է, այս միտախօս մթնոլորտը, ուր յանկարծ լոյսեր կը ծաղկին – լոյսեր՝ որ աւելի դոյն են, – մօտ է իր սրտին: Այս լոյսը պարզ, նիւթեղէն լոյսը չէ, ներքին ազունքէ կը ճաճանչէ: Այդ հանդարտօրէն նայող գէմքերը կը հըպոտակին թազուն ձգողականութեան մը: Երբեք կայուն չեն, միշտ կը փոխուին, տարբեր կլիմաներու մէջ կը մտնեն: Արտաբուստ հանդարտ, բայց խորունկը, յաւէտ խոռով մարդկային ողբերգութիւնը:

Օրեր կը շրջի թանգարանը: Պահուած գանձ մը գտած է: Բնութիւնը հում նիւթն է, արուեստը կը վերակերտէ դոյն, իր պատկերին համաձայն: Արուեստի մէջ մարդը ստեղծողն է, ինքնիշխան է, ազատ եւ ոչ մէկ կաշկանդումի ենթակայ:

Յետակ է այլևս իրեն համար: Իր ճամբան՝ արուեստի ճամբան է:

Օր մը Մեթրափալիթըն Թանգարանին մէջ շրջած ժամանակ, աչքերը հանդիպեցան արնաթ հին դրամի մը: Ծանօթ բան մը կար, այդ գէմքը տեսած էր տեղ մը:

«Ինչպէս չէ, խելքս սիրեմ, մեր Մեծն Տիգրանն է»:
 Յուզուեցաւ, խանդավառուեցաւ: Մեր Մեծն Տիգրանը, Արքայից Արքան... Ինչպէս անմիջապէս չճանչցաւ... Որո՞ւ մտքէն կ'անցնէր... հո՞ւ, Ամերիկեան Քանդաքարնի մէջ...:

Հպարտ զգաց, Առաջին անգամն էր նման հպարտութիւն կը զգար: Յեղաշին մեծութեան, ուրիշներէ ստորագաս չըլլալու զգացումը:

Բայց... զայրոյթը համակեց զինք մէկէն: Դրամին սակ փոքր քարքա մը, վրան գրուած... Syria: Ահա թէ ինչ, Ոչ Armenia այլ Syria: Հայն ո՞՞՞՞ է: Հայաստան ո՞՞՞ է: Ո՞՞՞ է լո՞՞՞ր:

Ուզեց երթալ Քանդաքարնի տնօրէնին, պոռալ ճշմարտութիւնը, - չզնայ սակայն: Երկչուտ էր այն ատեն եւ հիասթափուած էր: Հետազոյշին կը գրեմ, աւելի ազդեցիկ կ'ըլլայ: Անշուշտ, հետազոյշին, այդ ալ չըբաւ: Ի՞նչ է օգուտը:

Մուտրած էր Սկնթրըլ Բարքի մէջ: Աշուն էր: Դեղիններու տարուգորուն մը, մութերէն մինչեւ ամենաթափանցիկ, լուսաւոր դեղինները: Հո՞վը կը պոկէր տերեւները եւ գալարելով կը տանէր մարդերէն, ճամբաներէն ու կտուրներէն: Բազերն ու կարպաները կը սահէին լճի վրայ: Թափանցիկ ծառերու մէջէն կը բարձրանար Մէնսթընի երկնասլաց ուրուագիծը: Մանրակ թրթռացումները կը ճեղքէին օդը: Կոթական եկեղեցիք մը աշտարակները կը մխուէին երկինքի մէջ:

Համարձակ են, յանդուգն եւ խենթ այս Ամերիկացիները, կը մտածէ շէնքերու մասին: Բայց շատ անկիւնաւոր, շատ երկբաշափական: Գիծերը երբեք չեն շեղիր: Կը սիրէ պարզ մակերեսները, գոյնի խաղերը, բայց... կարծր են, շատ գործնական: Ներսը - ելիկտրական լոյս, արուեստական օդաւորում: Բնութիւնը աքտորուած է եւ արուեստականը զայն փոխարինած:

Ձեզա՛ւ, չեզա՛ւ: Ոճիր է բնութենէն հեռանալը: Բնակարանը պատշապարան էր նախապէս: Փամանակաւոր ապաստան մը, կրկին բնութեան զիրկը վերադառնալու, որովհետեւ հակը անբաժան մասն է բնութեան: Ոճիր է բնութենէն հեռանալը:

Չսիրեց ի վերջոյ Նիւ Եորքի ճարտարապետութիւնը: Կառույցները կը ճնշէին, կը փոքրացնէին, կը ճզմէին մարդը: Ասիկա անուշի սրբապղծութիւն մըն էր, եւ սահմանափակում մը: Միայն գիշերները, երբ խաւարը կը կլլէր զանգուածներն ու բարձրութիւնները, լոյսին հրաշքը կը փրկէր ազէտը:

Եւ սակայն, այս ամբողջ ժամանակը, դանդաղօրէն, աննկատ, դաւառացի կը բնաշրջուէր, մեծ քաղաքը իր մշտաարտփուն կեանքով եւ հորիզոնի լայնութեամբ կ'ընդլայնէր իր աշխարհը:

Պատանին կը դառնար յանդուգն արկածախնդիր մը:

Նիւ Եորքէն ազգականները զինք տարին Ֆիլադելֆիա, ուրիշ ազգականներու մօտ: Ֆիլդէպպէս կազդուրուած էր արդէն եւ զուարթացած միջին խի: Լաւ սնունդ, գուրգուրանք, մտատանջութեան պակաս: Եւ բացուէլը նոր հորիզոններու:

Ֆիլադելֆիա այցելութիւնը անկիւնադարձ մը պիտի կազմէ իրեն համար: Սովորական, ուրիշին համար առօրեայ պատահարներ, երբեմն, խորունկ անդադարձումներ կ'ունենան: Էութեան խորը քննարկ զգացում-

ներ կը սպասեն ճիշդ պահուն եւ Յիշդ մղումին՝ մէկէն արթննալու եւ ցայտելու համար: Եւ եթէ, իրերու յաջողակամութեան մէջ, այդ միշդ պահն ու մղումը չներկայանան, յուէտ թաղուած կը մնայ հանածոն մարդկային էութեան հանքերուն մէջ: Այ ոք դիտէ, թէ իր էութեան խորը ինչ կարելութիւններ կան թագնուած: Մարդ, ամէն բանէ առաջ, անծանօթ է ինք իր անձին: Եւ փնտռուքի իր ճիշդը ինչ ուղղութեամբ ալ ընթանան, միշտ իր անձի ճանաչումն է նպատակակէտը: Տիեզերքն ամբողջ, կեանքի հրաշքն ու ընթացքը, իր բովանդակ արտայայտութիւններով եւ կարելութիւններով, պարփակուած է մէկ մարդու մէջ: Հուսաարութիւն, որ անհուճօրէն կ'երկարի: Չկայ փորձառութիւն, որուն էական կարելիութենէն զուրկ ըլլայ անհատը: Սարսափելի արարած մըն է մարդը: Մանուկ մը ինչպէ՞ս՝ անօգնական, միամիտ, զգայուն, բայց եւ այնպէս, ամենազօր, անպարտելի եւ վտանգաւոր:

Եղբայր Քարամազով:

Հետզհետէ, աննշան կամ ցնցող պահեր պիտի գան իր անձը արթննացնելու եւ դարգացնելու: Ընդ մղումը, ճիշդ պահուն: Սխալ է ըսել, որ զմարդ այն է՝ ինչ որ պիտի ըլլար: Կամ, «Ամէն մարդ իր ճակատագիրը ինք կը կերտէ»:

Յարաբերութիւն մը կայ – ինչպէս տիեզերական մարմիններու հոլովոյթին մէջ – անհատի ուժական կարելիութիւններուն (Արիստոտէլեան ներքոյականութիւնը) եւ իրերու ընթացքին միջեւ: Հարազատ բարեխառնութիւնը, նպաստաւոր միջավայրը եւ մղումները ճշգրիտ պահուն, – այլպէս՝ կարելիութիւնները ընդմիշտ կորսնցուցած են իրենց միակ պատահելիութիւնը: Պէտք չէ ժողով, որ կհանգր ըստ պահանջի ու պահի, կը ստեղծէ միջոցը եւ մարդը: Հրուէրը միշտ կու գայ դուրսէն: Տարբեր միջավայրի մէջ, տարբեր պարագաներու եւ ժամանակաշրջանի մէջ, կեանքերը տարբեր պիտի ըլլային: Չեմ կարծեր, որ ստոյիկներու նախասահմանականութիւնը ի զօրու է հոս:

Տիւրանիքիտի իր ազգականները դինք պտտացոցին Վէլի Տորճ եւ Ինտերնետէնս Հօլլ:

Ձմայելի մարգագետիններ եւ անտառներ: Նայուածքին կտրածին չափ: Բանաստեղծական վայրեր, ուր կը լսուի հովիւներու սրինգը կարծես: Եւ սակայն... հոս, այս կանաչ հովիտին մէջ, ժող էրկու դար առաջ, ձիւնը, սառնամանիքը, սնօթութիւնը եւ հիւանդութիւնը... Աւելի ազիտային – Յուսահատութիւնը... Ամէն օր, քաղցած զինուորներ կ'իյնային սառած... Այս կանաչ, ծիծաղաւէտ հովիտին մէջ...

Յուզումով կը լքի ձորճ Ուայինկթընի բանակատեղիի սենեակները: Իր դրասեղանը, անկողինը, զգեստները: Կը վերակերտէ պահը, ողբերգութիւնը: Ժողովուրդը, որ կը պայքարի ազատութեան համար եւ պատառխանատութիւնը այս մարդուն:

Քամին կ'ոռնայ, սրտերը կը ճմուռին, ստամոքսները կը դալարուին: Արեւը երբեք պիտի չձագի, յախտնական գիշեր է: Վերջին հակումը: Այս դալարագիշտ հովիտին մէջ:

Բայց եւ այնպէս, կեանքը յաղթանակեց: Երբեմն, այն պահուն, երբ ամէն ինչ կորսուած կը թուի, մեծ ճակատամարտները կը լահուին: Յուսահատութիւնը, երբեմն, մեծագոյն խթանն է: Պէտք է վախճալ յուսահատ

ժարդէն, աւելի պէտք է վախճալ յուսանաւոր ժողովուրդէն: Կեանքը իր պահուած ուժերը ազատ կ'արձակէ ճշմարտութեան:

Յուսանաւոր ժողովուրդը ի վերջոյ շահեցաւ իր անկախութիւնը: Հապա իր ժողովուրդը: Ե՞րբ: Ո՛րք է իր հայրենիքը:

Յաղթական Ամերիկացիները հաւաքուեցան Տիլմանիֆիա, այս սրահին մէջ եւ ստորագրեցին Անկախութեան Յայտարարութիւնը: Այդ պատճառով, սրահը կոչուեցաւ «Մետերէնտէնա Հօլլըն»: Համեստ, դաւառական ոճով սրահ մը: Աթոռները դեռ շարուած են այդ հեռաւոր օրուայ նման: Նիսպահանութեան սեղանը, պատգամաւորներու տեղերը: Ամէն ինչ այն հեռաւոր օրուայ նման:

Հայը կը ջանայ վերակերտել պատմական պահը: Խանդավառ խօսքերը, բուռն վէճերը, յաղթանակին գինովութիւնը: Պատմական պահի մեծութեան գիտակցութիւնը: Այդ, մանաւանդ ա՛յդ: Գիտեն, կը զգան, որ կեցած են թուր ժամանակներու առջեւ: Ազատութեան գինովութիւնը - գինին ի՛նչ է:

Գուլէ մանակից ըլլալ խանդավառութեան, գինովալ յաղթանակէն: Այնքան ծարաւ է անոր, ինք անազատ, անհայրենիք Հայը:

Ազատութիւն, պաշտպանութիւն, ազատ արտայայտութիւն: Հող՝ ուր կրնաս արժատներդ խրել եւ տարածուիլ, ուռճանալ, ստեղծագործել: Ըլլալ անձը, զարգացնել կարելիութիւններդ: Ժառանգորդներ ունենալ եւ թողուլ ժառանգութիւնդ:

Այս համեստ սրահին մէջ, դարեք առաջ, ոչ շատ տաաջ, ծնաւ մեծ ժողովուրդ մը: Այսօր առաջնորդն է ազատութեան:

Ո՛րք է ի՛ր հայրենիքը: Իր նախահայրերն ալ կուուեցան: Նահատակուեցան: Աւելի երկար: Ազօթեցին. աւելի երկար: Արիւն, արիւն թափեցին: Ո՛րք է իր հայրենիքը: Ի՛նչը պակտեցաւ Հայերուն:

Սէ ահա, սքանչելին, Հրաշալին. Ազատութեան Չանգակը: Ճաթած Չանգակը: Վերէն վար ճեղքուած, մթին մետաղը, որ լուծ է այլեւս: Տարիներ առաջ, կախուած էր աշտարակէն, առոյգ էր, յաղթական: Հիմա, իր դերը կատարած ու լուծ է: Յաղթական ուրի մը նման, որ կախուած է պատէն: Բայց, ունի դեռ իր պատմութիւնը: Թէեւ չի հնչեր այլեւս, զանգակ մը չէ, բայց աւելի հզօր, աւելի խտացած բան մըն է - խորհրդանիշ մը: Անխոտակելի, յաւէտ:

Անկախութիւնը յայտարարուած էր եւ տօն էր երկրի վրայ: Այս համեստ աշտարակէն կ'աւետէին Ազատութիւնը երկրի չորս ծագերուն, բոլորի՛ն, բոլորի՛ն:

Հնչեցուցին ազատութեան զանգը: Խանդավառ, գինով ձեռքեր, - Թերեւս բազմաթիւ ձեռքեր, ով կրցաւ հասնիլ պարանին, - պրկուած մատներով, բոլորը միասին, քաշեցին պարանը մոլեգնորէն եւ հնչեցուցին զանգը, նորէ՛ն, նորէ՛ն, աւելի ուժգին, կատաղօրէն... Թող երկրի չորս կողմերը լսեն, լեռներէն, սվիխանոսներէն անդին, երկնքի մէջ իսկ լսեն Ազատութեան երգը:

Լեռն կ'ապրի պահը, գինով է ազատութեամբ, իր ձեռքերն ալ միացած են ուրիշներու, պաքանին վրայ, եւ խելայեղօրէն կը հնչեցնեն, եւ, զողանջներէն արշիւռ, կատաղօրէն, վայրագօրէն կը հնչեցնեն, անզազօր,

կեանքերը ազատութեան համար կրկին ողջակիզելու նուիրումով, կը հըն-
չեցնեն, կը հնչեցնեն, մինչև որ... խղում մը, թրթռացում մը, որ կը
կազայ մէկէն... եւ կը ճաթի Մեծ Զանգակը, ազատութեան ձայնը աղա-
զակիչէն, գերազոյն գինովութեան վայրկեանին, երկրի շորս ծառքը թըն-
դացնելէն... Մարաթօնի յաղթանակը աւետող գինուորին նման, իր հրայր-
քէն ճեղքուելով...

Այսպէս կ'երեւակայէ ու կը զգայ Հայը:

Այս զանգակն էր Ազատութիւնը աւետողը: Այդ է էականը: Այդ է
սքանչելին: Անխորտակելի խորհրդանիշը: Դեռ աղաղակող բերանի մը նը-
ման բաց, որուն ձայնը լեռնի ականջներուն միշտ պիտի հնչէ: Ո՛ւր ալ ըլ-
լայ, ե՛րբ ալ ըլլայ, Ազատութեան Զանգը պիտի հնչէ էութեան խորը:
Միշտ, իր կեանքի ամբողջ տեսողութեան:

Ճիւտանջիկայ մէջ կրեց ուրիշ խորունկ ողբերգութիւն մը եւս:

Հոն էր, որ ճանչցաւ ամերիկահայ կեանքը: Իր հարազատներու եւ
անոնց բարեկամներու ընտանեկան յարկերը, ապա նաեւ, հայ հասարակա-
կան վայրեր ու հաւաքոյթներ:

Ազրեցաւ նոր ողբերգութիւն մը:

Իր ազգականները հայաստ էին, բայց զաւակները, թոռները, բո-
լորը անգլերէն կը խօսէին: Մեռողները հայերէն կը խօսէին, զաւակները
անգլերէն կը պատասխանէին: Տարբեր էին նորերը, գծուար ըմբռնելի, օ-
տարական մինչեւ իսկ:

Իր թրջախօս մայրը, մինչև ողն ու ծուծը Հայ էր: Անիկա հայերէն
չէր կրնար խօսիլ, որովհետեւ թուրքերը սպառնացիր էին անոնց լեզունե-
րը կտրել: Ասիկա տարբեր էր:

Հոս, ազատ երկրի մէջ, չէր հասկնար: Տեսակ մը անախորժութիւն
կար ընտանեկան յարկերու տակ: Երկու իբարձէ տարբեր աշխարհներ, ո-
րոնք կը հեռանան իրարմէ, երբեք չմիանալու համար:

Հանրային հաւաքոյթներու, - ճիւղակած մազեր, խորշոմած դէմքեր,
մարած նայուածք: Հիները կը խօսէին իրենց հայրենի բարբառները: Լեւոն
սիրեց այս գունեղ պատկերներն ու տարօրինակ ասացուածքները: Բար-
բառներ երբեք լսած չէր: Իր հայերէնը դպրոցներու հայերէնն էր եղած:

Հազիւ քանի մը երիտասարդ ներկայ կ'ըլլային այդ հանդէսներուն:
Ընդհանուր տեսարանը ծերութեան, հիւժումի եւ հոգեվարքի երեւոյթ մը
կը պարզէր: Յեղը կը հատնէր, կ'անհետանար: Մերացեր էր Հայը, հասեր
մայրամուտի դուռը: Անցնելու վրայ էր մոմի մը բոցին նման, որ կը զո-
ղայ: Պիտի մարէր շուտով, հանգչէր յաւէտ:

Իսկական ողբերգութիւն մըն էր:

Հապա ինչո՞ւ համար կը պայտքարէին իրենք: Ի՛նչ հարկ կար լեզուն,
հաւատքը, ազգութիւնը պահելու: Հոն՝ ուր հանգիստ կեանք մը կրնայիր
ապահովել, հոն ալ հայրենիք էր Հայուն համար: Արդեօք ազգային զգա-
ցումը նախապաշարում մը չէ՞ր:

Կը տուտայէր անկողնին մէջ ու չէր գտնար պատասխանները: Տեղ մը
չփոթ մը կար:

Հոս, ազատութեան եւ ժողովրդավարութեան այս դժայիլիկ երկրին
մէջ, ջարդերէն ազատած Հայեր գտեր էին հանգիստ, ապահովութիւն,
խաղաղութիւն: Տուն տեղ էին եղեր, բարգաւաճեր, բազմացեր, կեանքէն

համ կ'առնէին: Ոչ մէկ հալածանք, շարշարանք, վախ: Աւելի ինչի կը ցանկար մարդ էակը:

Անպայման անդ մը շփոթ մը կար:

Իր հայրը, եղբայրներն ու քոյրերը, միւսները, ինչո՞ւ էին նահատակուեցին: Իր մայրը ինչո՞ւ է, որ այդքան կը տուայաէր:

Եթէ ինք եւս կարենար այս օրհնեալ երկիրը հաստատուիլ, բերել մարբը, ապրիլ երջանիկ...:

Կը դառնար անկողնի մէջ, աննդեր կը վառէին զինք, չէր կրնար պատասխաններ գտնել:

Առաւօտեան դէմ, ընդոտ արթնցաւ: Էութեան մէջ զանգակի դօղանջիւն մը կը հնչէր: Ահա թէ ինչ: Անշուշտ, ինչպէս չէր կրցեր ըմբռնել: Պատասխանը այդ էր:

Ջանգաղը:

Այս Ամերիկացիները, նախ քան զանգակի հնչելը, տուբերու, հալածանքի, ճնշման տակ կը հեծէին: Վէլի Յորձի մէջ անօթի, ցրտահար, յուսարեկ էին: Եւ կռուեցան, նահատակուեցան, ինկան պայքարի մէջ: Անտառներ տապալեցին, ճահիճներ շորցուցին: Պայքարեցան, պայքարեցան: Մեռան, մեռան սասնեակներով, հազարներով: Մինչեւ որ հնչեց Ադամութեան Ջանգը:

Ի՞նչպէս չէր կրցեր ըմբռնել:

Ջանգաղը պէտք էր հնչէր:

Դեկտեմբերի սկիզբն էր: Ամէս մըն էր դպրոցը վերաբացուած էր: Լեւոն օր ըստ օրէ մտահոգ կը դառնար: Եատոնց էր մօրմէն նամակ չէր ըստանար: Ատիկա անտոյճր բան մըն էր: Ամերիկա զալէն ի վեր, մայրը — Քաղուհիի ձեռքով — կանոնաւոր կերպով կը գրէր իրեն, միջին հաշուով տասը օրը անգամ մը: Անպայման լուրջ բան մը պատահած էր: Հիւանդ էր անկասկած:

Անձկութիւնը առաւել եւս սաստկացաւ, երբ սպասուած նամակը հասաւ, գրուած Քաղուհիի ձեռքով, բայց ոչ մօր կողմէ: Առաջին անգամն էր: Որո՞չ էր, որ մայրը ծանր վիճակի մէջ էր: Այլապէս պիտի թելադրէր իր նամակը:

Անմիջապէս գրեց Քաղուհիին, յայտնելով իր կասկածն ու մտատանջութիւնը եւ պահանջելով ճշմարտութիւնը:

Իր նամակը գեո ովկիանոսը չկտրած, երկրորդ նամակ մը ստացաւ Քաղուհիէն:

«Մայրդ ծանր հիւանդ է, քեզ կ'ուզէ. թող ամէն ինչ եւ եկուր...»

Արդէն կը սպասէր նման լուրի մը:

Շաբաթներէ, ամիսներէ, տարիներէ ի վեր կը նախազգար այս պահը: Եզիպտոսէն շմեկնած, զրացած էր յստակ կերպով, որ մայրը պիտի չգիմանար:

Որոշումը արագ եղաւ: Թոտակ էր: Գնաց տնօրէնին եւ յայտնեց լուրը եւ դիտաւորութիւնը:

Տնօրէնը լուս մնաց պահ մը, սպա ըսաւ կտրծես բարկացած շեշտով մը:

— Արդէն որոշումդ տուեր ես: Թերեւս ճիշդ է ինչ որ կ'ընես: Ան-

չուշտ կը գիտակցիս, որ ապագայ անդարձ կերպով կը խորտակես: Լաւ մտածէ: Մահը անխուսափելի է եւ անբաժան մասը գոյութեան: Միւս կողմէ, չեմ գիտեր... I am not a judge of human conduct... Որոշումը քուկդ է... ոչ ոք կրնայ օգնել քեզի... ճիշդ է նոյնպէս, որ քու տեղդ, ես կամ ուրիշը տարբեր պիտի վարուէր... Գուք արեւելքցիներդ...

Կարծես դեռ զրգոտած էր, Լեւոն չհասկցաւ ինչու:

- Good luck, - ըսաւ տնօրէնը պարզօրէն եւ նեղորտեցաւ ինքզինքին դէմ, որ հսկառակ իր տրամադրութեան, չոր եղաւ տղուն հանդէպ: Լեւոն ուշիմ ու բացառիկ ընդունակութիւններով օժտուած էր եւ խորքին մէջ, չէր ուզեր, որ խորտակէր իր ապագան: Հոն երթալով, մազ մը պիտի չկարենար փոխել իրականութիւնը: Բայց, դժուար էր բացարձակօրէն ըսել, թէ ինչն է բուն ճշմարտութիւնը: Գիտութեան մարդ էր եւ ամէն անգամ կը ջնջանար, երբ զգացական աշխարհի մէջ կ'իյնար: Կ'ստէր զգայնութիւնը, որովհետեւ ներքուստ ինք ալ զգայուն էր:

Լեւոնի համար, ուղին յստակ էր սակայն: Ապագայ, ուսում, երջանկութիւն - մէկ յայտարարի վերածուած էին: Մէկ զգացում միայն կը տիրապետէր. - Հասնիլ քանի ուշ չէ: Կը սարսափէր այն գաղափարէն, որ կրնար ժամանակին չհասնիլ եւ մայրը կը մեկնէր, առանց վերջին անգամ իրար տեսնելու: Էութեան մէջ անհամբեր տենդ մը ինկած էր, թեւեր առած էր, կ'ուզէր վայրկեան առաջ հասնիլ ժօրը: Ժամանակը եւ Տարածութիւնը վերացական ու բնազանցական դաղափարներ նկատած էր: Այժմ կը տեսնէր, որ ամենազատն իրականութիւններն էին: Պայքարը անոնց դէմ էր միշտ: Մարդկային ցեղի Պատմութիւնը, Ժամանակը եւ Տարածութիւնը նըւաճելու պայքարն էր: Ի վերջոյ, փիլիսոփաները խորունկ եւ յայտնատես մարդիկ էին:

Սակայն, մա՛րը, մա՛րը:

Ատիկա յուսահատ կանչ մըն էր, որ կը ճեղքէր սիրտը, կ'արեւնէր, կը ծուատէր: Իր եւ կեանքի միջեւ մէկ կապ կար, հաշտութեան միակ կամուրջը, որ կը տատանէր հիմա: Եթէ այս կամուրջն ալ փլէ՛ր... Մտածուածը ջանաց վանել, բայց հարցումը յամառեցաւ: Ուղեղը պարպուած էր իր բովանդակութենէն, հսկայական, անհուն ծաւալ մը ստացած էր: Հարցումը նոյն համեմատութեամբ մեծցած եւ լիցուցած էր միջոցը:

Ի՞նչ պիտի ըլլար, եթէ...

Տարիներէ ի վեր հոն էր եղած միշտ, բայց որպէս հեռուոր հաւանականութիւն, մինչ հիմա...

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

«Եւ մնաց Յակոբ միայն. եւ մարտնաս այր մի ընդ նմա միմչեւ ցառաւուս: Եւ իբրեւ Խոնս թէ ոչ յազթէ նմա, բաւան Ենար գամայլէ զքստի նարա, եւ ընդարմացոյց գամայլիլ զքստիմ Յակոբայ, ի կռուիմ իւրում ընդ նմա: Եւ սսէ ցնա. արմակեա զիս. Բանգի այց եւ նա սսէ. ոչ արմակիցից գեեզ, Եթէ ոչ օրհնեսցես զիս...»

ԵՆՈՒՆԻԲ

Նաւը կը սուրբար Առյանտեանի վրայ:
Երկինք եւ ջուր: Ուրիշ ոչինչ: Միաբը կառչելու յեռակներ կը փրկուտ:

ուէր: Աժգ ժը, ալիքի ժը ճերմակը, բայց ամէն ինչ կը շարժէր, կը փոփոխէր տեւարար: Ոչ մէկ կայուն կէտ: Մինչ ինք, զիչ առաջ, կատշած էր կէտի ժը եւ տիեզերքն համակ այդ կեդրոնին շուրջ կը դառնար: Հիմա, ելած ներքին հունէն, կը ծփար աւելի լայն տիեզերքի ժը մէջ: Ոչ թէ շրջանակը լայնցած էր, այլ ինք կեդրոն փոխած ու մտած էր աւելի ընդարձակ հորիզոն ժը:

«Սատանան տանի, կը փոխո՞ւիս յեմ», ըսաւ:

Նաւը կը սուրար:

Աւելի մօտ, աւելի մօտ: Թեւը արադօրէն կը մօտենար վախճանին: Մա՛յրը, մա՛յրը:

Գիշերը իջաւ: Ովկիանոսը սեւ է, չարագուշակ, քաշող: Ջուրերուն տակ, անդունդը, յաւիտենական խաւար ու խաղաղութիւն: Ոչ սկիզբ, ոչ վախճան: Տարածութիւն, ժամանակ գոյութիւն շունի: Յաւ չկայ:

Յաւտենական խաւարը:

Գաղափարը կայուն իրականութիւն կը դառնայ: Պաւարը սկիզբէն էր, է, եւ պիտի մնայ: Կեանքը կոյսն է: Լոյսը եւ անոր գիտակցութիւնը՝ ծնունդէ քաւ տան իրերուն, ժամանակին, տարածութեան: Ատնք կը պայք մանաւորեն ամէն ինչ:

«Կեանքն ալ ուրիշ բան չի: արդէն, քան ալիքը խաւարին՝ անկիցք եւ անվայտեան, որուն կատարը լոյսերու մէջ իյնալով, կը դառնայ տեսանելի պահ մը միայն...»

«Կը մտածեմ, ուստի կամ»:

Իայց ո՞րն է նախորդողը. մտածո՞ւմը, թէ լոյսը: Առանց լոյսի գիտակցութիւն գոյութիւն պիտի չունենար, եւ առանց գիտակցութեան ժրտածում գոյութիւն պիտի չունենար: Կոյրը յաւիտենական պարապի մէջ պիտի խաբխափէր, եթէ մարդկային փորձառութեան չկառչէր:

Երկինքը այնքան յոտակ էր: Նաւը երկինքի մէջէն կը սուրար: Աստղերը բազում էին եւ մօտ, այնքան մօտ, որ պիտի կրնայիր ձեռքդ երկարել ու բռնել: Աղուտը էր կեանքը: Նաւը վերածուած էր մոզական գորգի:

«Գիշերն անոյշ է, գիշերն եռշտագիմ,

Հաշիշով օծում ու բալասամով...»

Նաւը խաբսիսից Ադեքսանդրիոյ քարափը:

« Home, home, sweet home »: Մարտուն ժը, արցունք ժը:

Մա՛յր, մա՛յր: Ա՛խ, շո՛ւտ, շո՛ւտ: Վայրկեանները այնպէս դանդաղ են: Նաւատիները, պաշտօնատարները յուսահատօրէն դանդաղ ու անհոգ: Գարծեա բոլորը կը դաւեն գինք ջրայինացնելու: Միւրաք կը հատնի: Մաքաատան պաշտօնեային հետ վէճի կը բռնուի: Պաշտօնեան, հակառակութեան համար, աւելի կը քաշքէ: Ա՛խ, այս Արեւելքը: Ճանճերու եւ երկուտանի էլծերու երկէքը:

Վերջապէս, կը նետուի քէմսիի ժը մէջ ու կը սուրայ տուն: Ժամը կէսօր է: Բանի կը յառաջանայ, արոփիւնը կը սաստկանայ, յուզումը կը խուժէ:

Շո՛ւտ, շո՛ւտ: Ա՛խ, ժամանակը եւ տարածութիւնը: Եւ արագութիւնը:

Կու գամ, մայր իմ:

Դոււք կը բանայ նազիկը: Ել՛մած է: Աչքերը լայն բացած, յոնքերը

վեր, շնորհ է, Ձեռքով հաղիւ կը զսպէ ճիշդ: Ապա, աչքերուն խոշոր ար-
ցունքներ:

- Լեւոն, Լեւոն, եկար, հասար ժողո...
Լեւոն կը յառաջանայ դէպի իրենց սենեակի դուռը, նազիկ կը կեցնէ

զինք ու միշտ փսփսալով՝

- Սպասէ... Յուզումը կրնայ... Ես պատրաստեմ զինք...
Տղան հազար ասդի վրայ է, կը ծակծկեն ներքանները: Լաւ է, որ

կը ցաւի, կսկիծը կը թեթեւցնէ ներքին մորմուքը: Կուզէ արիւնխիլ, փարա-
տեւ միտերը:

- Մայրի՛կ, կ'ըսէ նազիկ:

Մայրը կը բանայ աչքերը, կը նայի պարապին մէջ.

- Այդ դու ես զաւակս...
- Մայրի՛կ, կ'ըսէ նազիկ, Լեւոնէն Հեռագիր եկաւ... լուսով կը

Հասնի...
Պատաւը փակած է աչքերը, չի լսեր կարծես: Մտքին մէջ, զանդադո-
րէն, կը կատարուի հրաշքը.

- Կու գա՛յ, կու գա՛յ...
Կեցած շնչառութիւնը դժուարին թափ մը կը ստանայ: Ձոյք մը ար-

ցունք, աչքերու քովերէն, փակ կոպերուն մէջէն կը սպրդին դուրս, կը սա-
հին այտերէն, կը վազեն շրթներուն մէջ. Աղի արցունքը կը քաղցրանայ:
Կոպերուն տակ ճառագայթ մը բռնած է, որ կ'ողողէ էութիւնը: Չուզեր,
չի կրնար բանալ կոպերը, կը վախնայ որ թոխ ճառագայթը: Կոպերը կը
սեղմէ: Ամիսներէ ի վեր առաջին անգամն է, որ այտերուն վրայ ժպիտի
նման պայծառութիւն մը կը տարածուի: Դէմքը կը լուսաւորուի: Ներքին
ճառագայթումը կը թափանցէ մորթէն դուրս:

- Ծ՞րբ, կը հծծէ:

- Ծուտով, շուտով, թերեւ՝ այսօր, քիչ վերջ...
- Մե՛ծ է զորութիւնդ... Ձլքեցիր զիս, Տէր... Այլ պատրաստ եմ...
Ձաւակը կեցած է անկողնի մօտ եւ կը դիտէ ժօր Հիւծած դէմքը: Որ-

քան ծերացեր է: Դար մը ամբողջ: Մագաղաթի դալուկ գոյնէր: Ոսկոր-
ները ցցուած են, այտերուն փոսեր են գոյացեր, աչքերը սուզեր են փոսի
մէջ. ձակատին՝ Հետզհետէ հատնող լոյսին նուազումները: Ծանօրէն,
հաղիւ կը Հեւայ, կարծես Հիմա պիտի Հանդի: Մատները նման են ձմեռ-
նային ծառերու ոստերուն, - անարիւն, քամիներէն զայլարուած: Կը զար-
մանայ, կ'ընդվզի անձին դէմ, որ կրնայ այսպէս տարկայօրէն դիտել
ժայրը:

Մունկի կու գայ, ձեռքը մեղմօրէն կը տանի ժօր ճակատին ու, ան-
Հան խանդաղատանքով, Հագին՝ դրած բառին մէջ՝ կը հծծէ.

- Մայր...
Տիեզերք մը ամբողջ: Անհունը եւ պահը:

Մայրը կը լսէ, - փակ աչքերու ետին, - վաղուց սպասուած ձայնը:
Էութեան մէջ հազար լարեր կ'արթննան:

- Դո՛ւ ես, զաւակս...
Դէմքին կը տարածուի երանազին ժպիտը, կը մեծնայ, կ'ընդգրկէ

էութիւնը, անսահմանը, որուն եզրին կանգնած է: Այս որքան լոյս: Աչ-
քերը կը շնչան: Վերն է, վե՛րը: Կուզէ բանալ աչքերը, չի կրնար: Կը
բարձրանայ տեւաբար, արագ, աւելի արագ: Թողէք պահ մը, պահ մը:
Ճիգ կ'ընէ, աչքերը չի կրնար բանալ: Ա՛խ, թողէք, պահ մը միայն: Թան-

քերքը կը կծկուին ցաւազին, կը ցցուին մէկէն, ապա, կը թափէ մարմինը, կը մնայ անշարժ:

Լեւոն կը վախնայ որ...

Սակայն, մայրը մեղմօրէն կը բանայ աչքերը - ճառագայթներ արածակելով - կը յառէ նայուածքը զաւկին ու կը նայի լուսնային: Զաւկին գէժքը ճերմակ, կաթնային լոյսով մը շրջանակուած է: Կը նայի երկար, երկար, զմայլանքով:

Փառք Գեղ Տէր, Փառք ի Բարձունս:

Որքան լոյս, աչքերը կը շլանան:

Լեւոն բժիշկին հետ դուրս կու գայ սենեակէն, կը դոյնէ դուռը ետեւէն:

- Պրն. Բժիշկ, ի՞նչ են ձեր նախատեսութիւնները:

Բժիշկը մէկէն կը շտկուի, կը նայի դիմացը, մասնէրը կը խաղան ժամացոյցի շղթային հետ:

- Տղաս, լաւ որ եկար... Մայրդ յոգնած է, շա՛տ յոգնած... Անշուշտ, ասրիքն ալ քոքը չէ... Ալ վերջացած է...

Կը կենայ, կարծես դեռ ըսելիք ունի, բայց կը քալէ գէպի սանդուխտը, կը դառնայ եւ, առանց ըսելիք ըսելու, կը մեկնի:

Տղան քարացած է՝ սանդուխտին գլուխը: Ուղեղը չիդ ործեր: Կեանքը կը կենայ: Յաջորդ բանը, զոր կը յիշէ ետքը, սանդուխտներու անդունդն է, որ դարձաբարձիկ զաւարումներով անհունօրէն կ'իջնէ ու զինք կը քաշէ վար: Տիեզերքը շրջած է, գլխուն վրայ կը քալէ կարծես: Արիւնը խուժած է ու ղեզին, իրերը կը դառնան շուրջը: Ականջներուն ըզզիւն մը, որ հետզհետէ կը կերպաւորուի, կը յստականայ:

Վերջացած է, վերջացած է:

Մէկէն կատարեալ պայծառութիւն եւ լռութիւն: Ու միտք մը միայն:

- Ալ վերջացած է:

Սեւ, անթափանց, անանցանելի: Յետո՞յ:

Երեկոյանն, կու գայ թագուհին: Դուռը կը բանայ, Նազիկը կը դոյնէ դիմացը:

- Եկա՛ւ, եկա՛ւ:

- Ո՞վ:

- Ով կը կարծես:

- Լեւոնը:

Նազիկը ուրախ կ'օրօրէ գլուխը՝ Հաստատական:

Աղջիկը կը զսպէ յուզումը: Կ'երթայ սենեակը, անհամբեր ու ջղախոս՝ կը շտկէ մազերը, վրայ-գլուխը: Կը յառաջանայ Լեւոնինց սենեակը: Սիրտը դուրս պիտի գայ, մոլեկնօրէն կը ծծծէ կուրծքը: Դիտէ, որ արժապանած է ու կը ջանայ շմատնել խոովքը:

Հրաշքով մը - թէ դիտումով - շատախօս Նազիկը քաշուած է իր սենեակը:

Կամաց կը բանայ դուռը: Լեւոն նստած է ժօր սնարին մօտ: Դլուխը կախ, աչքերը յառած դետին: Տժգոյն: Սիրտը կ'ոստնու: Դուռը կը փակէ ու քիչ վերջ մեղմիւ կը զարնէ:

Տղան կը ճաննայ բախիւնը:

«Թագուհի», կը շինչայ ու կը վազէ գէպի դուռը:

Կեցած են իբրբու դիմաց, անխօս: Իբար կը քաշեն ու կը հրեն միտ-

ժամանակ: Պողոթնը յոյժօրէն կը բարձրանան լեզուներու վրայ ու կ'իջնան: Աչքերը կը հասկնան զիրար ու կը պատմեն արագ, շնչատ, անհատնում: Կարօտ, կարօտ: Եւ սէ'ր:

Ալ ո՞վ ունի աշխարհի վրայ: Որո՞ւ պիտի կառնի: Նեցուկ մը այս դահլիճում տիեզերքի մէջ: Լոյս մը՝ երբ բացարձակ ըլլայ խաւարը:

- Ի՞նչպէս է... Լաւ որ եկար... Միակ բաղձանքն էր... Լաւ որ եկար... Երկար մտածեցի, ըսի՝ սպասենք, թերեւս լաւանայ... բայց... Ի՞նչպէս ես... նայիմ լաւ մը... Մեծցեր ես... Հասունացեր... Երիտասարդացեր...

Ու կը նային իրարու, երկար, կը նուաղին իրարու աչքերուն մէջ, աւելի խորը, նուիրական, մաքուր աչքերու մէջ:

- Լեւոն, Լեւոն...

Կը թռչի անունը ակամայ:

- Լաւ որ եկար...

Կը կենայ, ամօթխածութիւնը կը փակէ շրթները, բայց աչքերը համարձակ կը վառին ըզմանքով: Կարելի չէ նայուածքները զսպել, անոնք ներքին ուժերու կը հպատակին:

- Այդ ո՞վ է, տղաս:

- Թաղուհին է, պահպան Հրեշտակը:

- Աստուած օրհնէ դինք... Քու բացակայութեանդ... ամէն օր... ամէն ժամ... Ողջ ըլլայ, Աստուած սրտին համեմատ տայ... Նաղիկն ալ, չիտակը, բայց Թաղուհին ուրիշ է... Օ՛, տղաս, այնքան ըսելիք ունիմ... բայց... Քիչ մը բարձրացուր վիս...

- Մայրիկ, աւելի լաւ է...

Թաղուհին զլիտով նշան կ'ընէ: Կը վերցնեն մայրը անկողնի մէջ, բարձերու վրայ կը կոթնցնեն զլուխը:

- Օ՛իս, այդպէս... Ա՛իս, տղաս, դեռ դայիզ է վեր չկրցայ լաւ մը դիտել քեզ... Սա ակնոցս... (Լեւոն կը բերէ ակնոցը եւ կ'անցընէ մօր աչքերուն) Հա, այդպէս... Ինչ անուշիկցեր ես, դաւակո, մեծցեր, մարդ ես դարձեր... Հետզհետէ հօրդ կը նմանիս... նոյն աչքերը, նոյն կեցուածքը... Այնքան ըսելիք ունիմ, բայց ուշ է... Յոգնած եմ, ուժ չունիմ այլեւ... Օրհնուիս, օրերուդ մէջ ցաւ չզգաս... Եկար անմիջապէս որ կանչեցի քեզ... Ա՛իս, դաւակո, երանի չկանչէի, ուսումդ կէս մնաց, ապագադ խորտակուեցաւ... Երբեք պիտի չնհրեմ ինքզինքիս... Ես որ միշտ ուղեցի, որ կարենաս կարողալ... Բայց, պիտի խոտովանիմ, որ ուրախ եմ զալուդ համար, անչափօրէն ուրախ... Հիմա, կրնամ հանգիստ մեռնիլ... Այլապէս աչքս ետիս պիտի մնար... Ո՞վ ունիմ քեզմէ զսա... Քեզի համար ապրեցայ, քեզի համար շնչեցի... այլապէս վաղուց մեռած էի ես ալ... Միւսներուն հետ... հօրդ, եղբայրներուդ, քոյրերուդ... անապատին մէջ... Գիտե՞ս...

Շունը կտրուեցաւ, աչքերը մթնցան, չկրցաւ շարունակել:

- Ուրիշ անգամ, մայր, քիչ մը հանգստացիր:

- Ոչ տղաս, շուտով պիտի հանգստանամ... երկար... երկար...

Յետոյ ուշ կ'ըլլայ... Շատ ժամանակ չունիմ...

Քիչ վերջ, շարունակեց:

- Լաւ որ եկար... Աստուած երբեք չխաւարեցնէ արեւը... Ցաւ լսեանես... աւագը ձեռքիդ մէջ ոսկիի փոխուի... Միս, բազմախոս, ար-

մատներ արձակես... Նայէ տղաս, մէկ պատուէր ունիմ... մօրդ միակ պատգամը...

Հոս քիչ մը կանգ առաւ, շուշիք եւ լոյսի պակասը կը նեղէր դինք: Դէմքին ժպիտ մը կը յամենար, թէեւ շրթները ժպիտ չունէին: Աջ աչքին մէջ լոյս մը կը կայծկլտար ու կը մեծնար հետզհետէ, Նորէն կտրուած էր ներկայէն: Արդէն կը զեպերէր աշխարհի սահմաններուն: Հողին բարբառցած էր երկրէն եւ միայն մարմինն էր, որ հոս պակաս էր անկողնի մէջ: Դէմքին իջած էր մեծ խաղաղութիւնը: Զայնը վեհափառ ծանրութիւն մը ունէր:

- Զաւակս, - բարձրացաւ այդ ձայնը, - յիշէ՛, ականջիդ օղ ըրէ՛, սրտիդ տախտակին վրայ դրէ... Զիս շմոռնաս... ազգդ, լեզուդ շմոռնաս... Իմ մեռնելէս ետք, շուտով ամուսնացիր, բոյն կազմէ... Ա՛խ, ատիկա միակ երազս էր... քեզ ձեռքովս ամուսնացնելը... Քու ազգէդ աղջկայ մը հետ կապուէ... կը կրկնեմ, ըստ ազգէդ... Հօրդ մարած օճախը վերականգնէ... Այս է պատգամս... Մահը պիտի նուիրագործէ զայն... հօրդ օճախը վերականգնէ... Օրհնութիւն... ամէն...

Աչքերը փակեց, գլուխը ինկաւ: Լեւոն եւ Քաղուհի կամաց մը իջեցուցին մարմինը անկողնի մէջ: Քնացաւ: Հազիւ շունչ կ'առնէր: Մաղեմը ամբողջովին ճերմկեր էին: Գլխուն չուր՛ լոյսեր կը պտտէին: Դէմքը խաղաղ, վեհափառ բան մը ունէր: Այս աշխարհէն շէր այլեւս: Արիւնը աբազ կը պարպուէր, մարմինը կը պաղէր անդադար: Փակ կուպերուս տակ ճառագայթներ կը լողային, ականջները բացուած էին երկնային նուագներու:

Հեռո՛ւն, հեռո՛ւն, անապատին մէջ... Ամուսինը, զաւակները... Հեռո՛ւն, հեռո՛ւն... Մէկը կու լայ մեղմօրէն, լուխայն... Հեռո՛ւն, հեռո՛ւն... իրենց տունը... օճախը վառած... ուրին հորին քով, Աստուծոյ օրհնութիւնը... Լեւոն, Լեւոն... հա՛, հո՞ն ես, տղաս... մի լքեր զիս... Յոյսս, արեւս, սիրտս... մի մոռնար զիս, տղաս, մնաս բարով... Ծաւ չունիմ... Երջանիկ եմ... Վե՛ր, վե՛ր... Այս ինչքան լոյս...

Մարմինը կտրուեցաւ հողէն, վերմակը ինկաւ, ատաստաղը բացուեցաւ, բարձրացաւ օդին մէջ... Վե՛ր, վե՛ր... ամէն ինչ կը փոքրանայ վարը, ամպերու վրայ է... քաղցր զանգեր կը շնչեն... ճերմակ, ճերմակ, կը ծփայ կապոյտին մէջ... կը բացուին երկնքի զուռները... Ի՛նչ հրաշալի կայք է...

- Ընդունէ ծառայ, Տէր: Ուժասպառ, ծերացած մարմինը հաղիւ կը զգայ վարը, հողին սրդէն վերն է, երկնային ուրտաներու մէջ...

Արեւը բարձրացաւ դիմացի տան ետեւէն: Ինչպէս երէկ: Ոչինչ փոքուած է տիեզերքի մէջ: Կաթնավաճառը քիչ առաջ դուռը զարկաւ: Լեւոն լսեց, թէ ինչպէս նաղիկ բացաւ դուռը, փսփսաց մարդուն, կաթը առաւ: Քաղուհին դեռ սենեակն է: Աբաղաղ մը կանչեց: Կեանքը արթնցաւ փողոցին մէջ: Միշտ երէկուայ նման, առջի, միւս օրերու նման: Հիւանդացնող միօրինակութեամբ օրերը կը յաջորդեն իրարու: Եւ տեղ մը՝ թիւը կը փոքրի: Անաղմուկ, անիմաստ: Կեանքը կ'ընթանայ, ծառերը կ'օրօրուին, խառը կը կանաչի, օրը զիչեր կ'ըլլայ եւ լոյսը կը ծաղի: Արիմաստ կատակերգութիւն:

Պատին կախուած խարխուղ ժամացոյցը կը զարնէ թի՛ք, թա՛ք: Միշտ

ատած է ժամացոյցը: Միշտ ատած է, բայց հիմա է, որ կը գիտակցի: Ժամանակը կաշկանդած է զինք միշտ, զգացած է անոր ներկայութիւնը տառապազին ուժգնութեամբ: Թի՛ք, Թա՛ք, Թի՛ք Թա՛ք:

Իսկ հիմա՞: Ազատուած է վերջապէս: Այլեւս ժամանակը չի խոռվեր զինք: Իմաստէ եւ սպանալիքէ պարպուած է: Յիմար, միօրինակ աղմուկ մը, աներես ճանճի մը նման անհասոյ: Միայն այդ: Եթէ չլարէ, այլեւս կը կենայ: Ինչպէ՞ս չէ ժտածած այսքան պարզ բան մը: Եւ ահա կեցած է ժամանակը: Այլեւս բնաւ պիտի չհնչէ: Եւ ահա իր պարապ մը կայ, քարացած կայունութիւն մը, որ կը սպաննէ, բայց չի մեռցնէր: Կը կտրուէ, կը սեղմէ, կը սղոցէ սիրտը: Ծիշը գամուած է կոկորդին մէջ ու չի պոռթկար:

Տրտում է անձն իմ մինչ ի մահ:

Ես պիտի գամ քեզի, բայց դուն երբեք պիտի չվերազառնաս ինձի: Միակ ճամբան:

Ազատուած է ժամանակի դիտակցութենէն, չի լսեր դարկը, հրաշքը կատարուած է: Փռուած է անշարժ, տարօրինակօրէն հանդարտ: Ոչ մէկ պայքար, ոչ մէկ յուզում: Ծուրջը, կը զգայ, կենքը կը քալէ, ինք կեցած է անյուշ եւ պիտի կենայ հազար տարի, աւելի գուցէ: Հրաշքը կատարուած է:

Եթէ լարէ ժամացոյցը, կրկին՝ Թի՛ք, Թա՛ք, Թի՛ք, Թա՛ք: Բայց մօր կենքը: Այդ ալ կը բախէր: Ո՞ր էր, ե՞րբ էր կեցաւ: Զի յիշեր: Քունը տարիք էր: Լապտերը հանգած էր, քարիւղը հատեր էր: Գիշերուայ անորոշ պահ մը, մայրը հանդեր էր: Կ'ուզէր այդ պահը տեսնել, զգա՛լ: Կեանքին ծայրը, հետը ըլլալ, լսել խօսքը, տեսնել Թիլին հասնիլը: Եւ եղբը կեցած, յատել նայուածքը անդին, խաւարի մէջ: Անծանօթին վարագոյնը բռնաբարքել, ճեղքել Թուխը, ընկնել մահը:

Քարիւղը հատեր էր ու ինք հոն չէր, ջնացած էր:

Նստած է աթոռի մէջ աճքած, անշարժ: Փոքրացած է, կէտի մը վերածուած: Զի դիտեր՝ թէ կ'ապրի՞ կամ ոչ: Ծփոթ մը կայ, անհասկնալի, անթափանցելի մշուշ մը: Սահմանները կորսնցուցած է, կէտ մըն է ազդի: Կեցած է փակ դրան մը առաջ որ չի բացուիր: Հոն է անյիշատակ ժամանակներէ ի վեր, տեղ չի հասնիր: Կ'ուզէ շարժիլ, հսկայական ծանրութիւն մը կը ձնչէ զինք, կը սեղմէ ամէն կողմէ: Կամք չունի, պայքարը վերջացած է:

Ծիշը գամուած է կոկորդին, չի պոռթկար: Թոքերը ուժ չունին զայն անզուգահէն գուրս շարտելու: Զի դիտեր, կ'ապրի թէ ոչ: Զուգեր, չի կրնար աչքերն իսկ թարթել: Գամուած է տեղը, քարացած, օրէ պարպուած: Կեանքը փախած է: Եթէ միայն կարենար պոռալ:

Ահուելի է:

Գուռը զարնուեցաւ: Զլսեց իսկ: Նազիկը մեղմօրէն բացաւ դուռը եւ զլուխը երկարեց ներս: Մայրը պառկած էր անկողնի մէջ, աղան, աչքերը շուած, կծկուած էր աթոռին խորը: Կեանքի ոչ մէկ նշոյլ: Սենեակի օդը ծանրացած էր:

- Ինչպէ՞ս է, փսփսայ:

Տղան չլսեց:

- Ինչպէ՞ս է մայրիկը, - կրկնեց քիչ մը աւելի բարձր:

Տղան չէր լսեր: Նազիկ մտախաւ, ձեռքը դրաւ ուսին:

- Խեղճ Լեւոն, երեւի չքնացար գիշերը... ելի՛ր քիչ մը երկնցիք, ես կրնամ քովը... ելի՛ր...

Լեւոն նստած է նոյն դիրքի մէջ, նազիկին սիրաւ վախ մը ինկաւ: Մինչեւ հիմա, կեանքը պարզ էր եղած, ոչ մէկ խրթնութիւն:

- Լեւո՛ն, Լեւո՛ն, - կրկնեց ու ցնցեց:

Լեւոն գէժքը հազիւ դարձուց ու պարագ նայուածքով դիտեց զինք: Կինը կարդաց այդ աչքերու զարհուրանքը: Դէժքը ահամայ դարձաւ ունկողնին: Պառաւը պառկած էր խաղաղ: Մտեցաւ վախով, ահանջը ձօնացուց զէժքին - չէր շնչեր: Մէկէն մտքին մէջ ցատկեց զարհուրելի կասկածը: Աչքերը բացուեցան, քարացան իրենց ծիրին մէջ: Ձեռքը մեքենաբար նետուեցաւ դէպի կինը, բայց մնաց օդի մէջ: Վախէն ոտքերը գամուած էին գետնին: Ձէր կրնար շարժիլ: Սրունքները կը գողգոջէին: Ե՛րբ մը բարձրացաւ դէպի կոկորդը, բայց մնաց հոն: Սենեակին օդը Եանրացաւ, սկսաւ խեղդել զինք:

Ինքզինքը դուրս նետեց: Ենչապառ հասաւ Քաղուհիի դրան եւ առանց զարնելու ներս մտաւ: Քաղուհին չժամ իրեն կը նայէր: Նազիկը կաթի պէս ճերմկեր էր:

- Խն՛ր է, ի՞նչ կայ:

Պոքերը բերնէն հազիւ ելած, դիտակցեցաւ եղելութեան:

- Օ, ո՛չ, ո՛չ... ո՛չ... - մրմնջեց:

Շուարում, կսկիծ, չիոթ յաջորդեցին իրարու:

Քաղուհին մէկէն սթափեցաւ: Դէժքը վճռական արտայայտութիւն մը ստացաւ:

- Լեւո՛նը, Լեւո՛նը ի՞նչ կ'ընէ, դունց Քաղուհի եւ վազեց դուրս: Նազիկ հեռեւեցաւ: Խեղճը հետեւող մըն էր միշտ:

Լեւոն դեռ քարացած նստած էր: Թեւերուն մէջ մտած, զինք սենեակէն դուրս հանեցին: Ձընդդիմացաւ: Տարին ու պառկեցուցին Քաղուհին սենեակը, տիւնին վրայ:

Ննջեցալի սենեակին պատուհանները բացին, առաւտեան թարմ օդը խուժեց ներս, մաքրեց օդը: Թեւերու թարթալի նման ձայներ լսուեցան: Կարծես սենեակին մէջ անտես էակներ կը շարժէին:

Կիններ իրարու նայեցան չժամ: Երկուքն ալ կը վախնային մեռեալի նայելէ: Նազիկ, զողահար երեխայի մը նման, բռնած էր Քաղուհիին թեւը եւ, առանց դիտակցելու, կը սեղմէր հետզհետէ, եղունգները կը խորէր աղջկան միտերուն մէջ: Միւս ձեռքով թաշկինակը տարած էր բերանը ու կը կրծէր կերպար:

- Ձեռքդ քուչէ, կը ցաւննո զիս, - ըսաւ Քաղուհի, - այդ ի՞նչ սուր ճանկեր ունիս:

- Քա, ի՞նչ պիտի ընենք, կը վախնամ:

Աչքերը փակեց ուժգին եւ՝

- Յիսուս Գրիստոս, օգնէ՛ մեզի:

Դարձաւ Քաղուհիին:

- Ի՞նչ պիտի ընենք... դուն միշտ ուժով ես, ըրածք դիտես... բա՛ն մը ըրէ, բա՛ն մը ըսէ... Տէր Աստուած, հասի՛ր...

- Լու՛ի, Քա, նորէն կզակդ թուլցաւ:

Քաղուհին հանդարտ մտեցաւ անկողնին ու նայեցաւ պատուին, զոր մօր պէս կը սիրէր: Այնպէս խաղաղ պառկած էր, կարծես կը քնանար: Երթները պինդ փակած էին, բայց ժպիտ մը տարածուած էր գէժքին: Մա-

զերը կարծես ճանաչներ էին բռներ: Մաքուր, անզոր, երկնային բան մը կը տեսնար զէմքին վրայ:

Այդքան ալ սարսափելի չէր:

Երկուքն ալ առաջին անգամ էր, որ մահուան կը նայէին:

Այդքան ալ սարսափելի չէր:

— Նայէ, մընջեց Թադուհի:

Նազիկ վախով, դանդաղորէն շրջեց պուխը, մինչեւ որ յառեցաւ ննջեցեալին: Լեցուեցաւ երկիւղած ահով մը: արագ խաչակնքեց:

— Տէր Աստուած, լուսաւորէ հողին:

Լեւոն կաթիլ մը արցունք չթափեց:

Տարածուած էր անծանօթ, անմամանակ կայքի մէջ: Անսահման, անպարագիծ, անձեւ տարածութիւն մը: Մտքին սլաքը եկած, կեցած էր կէտի մը վրայ եւ ալ չէր շարժեր: Ծօծանակը կանգնած էր: Բուրբոսովին թուլացեր էին պրկումները, հալեր, լուծուէր էր համայնին մէջ, բայց, միաժամանակ, կաշկանդում մը կը սեղմէր սիրտը: Առանց ցաւի, առանց ճնշումի, տարօրինակ կաշկանդում մը: Բանտուած էր անհունօրէն նեղ կէտի մը մէջ: Պատեանը թափանցիկ էր, կու տար խարկանքը, որ ազատ էր ամբողջովին եւ լուծուած պարապին մէջ: Մլաքը կանգ էր առեր:

Օրուան մեծ մասը, նստած կամ պառկած, աչքերը կը լռէր, առանց արտայայտութեան: Կեանքը զինք լքած էր կարծես: Չէր խօսեր, չէր պատասխաներ:

Թադուհին սաստիկ մտահոգուած էր: Անոր հանդէպ ունեցած սէրը, — այլիւս կը խոստովանէր ինքզինքին, — տուակ է եւ կը մոլեզնէր խոռովքը: Մինչ Լեւոն կը քնանար իր սենեակը, տիւանին վրայ, նստաւ դըլխուն մօտ եւ դիտեց զայն երկար: Երբեք այսքան երկարօրէն եւ ազատօրէն դիտած չէր զայն:

Սաստիկ տոգոյն էր: Կարծես արիւնք բուրբոսովին պարպուած էր. Մահահոգիչ կերպով տոգոյն էր: Այքերուն տակ կապոյտ փոսեր ձեւացեր էին: Երթները բաց վարդագոյն, հազիւ իրարու սեղմուած, բռնած էին թառը, որ երբեք չէր ըսուէր:

Մարաւի նայուածքը յառեցաւ տղուն շրթներուն: Նոյնիսկ ըզմանք մը ունեցաւ զազտօրէն զանոնք համբարելու: Ո՞վ պիտի տեսնէր: Սահայն, վանեց անվայել ըզմանքը:

Դիտեց սիրոյն զէմքը երկար, երկար, ու երանութիւնը ճառագայթեց էութեան մէջ: Կարծես առաջին անգամ կը տեսնէր զայն: Երբեք այսպէս ազատօրէն չէր կրցած նայիլ անոր:

Երկար, սեւ թարթիչներ: Յօնքերը ուժեղ, լաւ գծուած, արեւելեան բան մը ունէին: Ծակատը լայն ու խոհուն: Սեւ, ալիքաւոր մազեր, անամպ գիշերներ կը թելագրէին: Պէտք ու մօրուքը մէկ օրուայ մէջ աներ էին: Մեծ ցաւերն ու փոթօրիկները կը փրփրեցնեն ստեղծադործական աւելչները: Մարդկային էակը աւելի կը դիմանայ անօթութեան, ծարաւի, անընտելեան, տառապանքի, արազօրէն կ'աճի եւ յոյզերը կը յորդին:

Կը դիտէր Թադուհին ու չէր կշտանար: Զեռքը ինքնաբերաբար երկարեց ու շոյեց մազերը: Իր մէջ եւս, կեանքի ուժերը թափ էին առեր, այլ ուղղութեամբ: Ետոյզ ու արրեցնող սարսուռներ կը վազէին միտերուն մէջէն: Ներքին ընդլայնումի մը դիտակցութիւնը կը զգար: Աւելի երիտասարդ աւ թարմացած էր, եւ աւելի զեղեցիկ: Մորթը սահուն ու լուսաւոր:

Անքերուն մէջ փթթող կնովականութիւնը կը կայծկուտար ու կը կախարդէր :
Միտերը կ'այրէին :

Բանի մը դրացի, տէրտէր, լուտարար :
Լեւոնի աջ կողմը՝ Նազիկին ամուսինը :
«Վերին Երուսաղէմ», խունկ, արցունք, հողի հոտ :

Երբ դադարը իջեցուցին եւ սկսան հողը լեցնել փոսի մէջ, յանկարծ
պոռթկաց Լեւոնը : Ժայթքեցաւ արցունքին քարացած աղբը : Կը հեծկուտար,
սիրտ պատռող կակիծով : Մօր մեռնելէն ի վեր, առաջին արցունքն էր : Յու-
ղարկաւորները բոլոր կ'արտասուէին հետը :

Դեռ մտածումը քարացած էր, դեռ կ'այրէր ոչինչին մէջ : Միայն
տեղատարափ արտասուքը կը հոսէր :

Նւ ահա, նոյն միջոցին, յանկարծ պատահեցաւ օտարօրինակ բան մը :
Լեւոն ձգեց դերեղմանն ու յուղարկաւորները եւ, առանց այլ եւ այլի, մեկ-
նեցաւ : Պարզօրէն ձգեց ու փախաւ :

Փախուտ մըն էր ներկայէն, ահաւոր ողբերգութենէն, ինքզինքէն :
Անգիտակցարար կը քալէր դէպի ծովը, իր մտերմը : Յաւէտ խոռով, յա-
ւէտ փոխուող, ոչինչերով եւ աստուածներով բնակուած :

Մինչ կը քալէր, կը զգար որ մէկը կը հետեւէր իրեն : Եթէ կենար,
ան եւս պիտի կենար : Ու կը քալէր արագ, հովի պէս : Իրեն հետևողը եր-
կու եղած էր, երեք, չորս, հարիւր, հազարներ : Այդ կը զգար քայլերու
ձայնէն, որ ահաւոր ժխոր մը դարձած էր : Անտառ մը էակներու, որ կը
քալէր իր վրայ : Տանսինէյի անտառը ոտքի էր հիւր :

Ու կը փախչէր հիմա, արագ, ահաբեկ : Ծիշեր, հայհոյանք, սպառ-
նալիք՝ կը հասնէին ականջներուն :

Քարացումին յաջորդած էր ցաւին ահաւորութիւնը : Մէկէն, զոց-
ուող փոսին առջև, մեծ իրականութիւնը ցցած էր կերպարանքը : Ու հի-
մա բարձր տենդի եւ զտանցանքի մէջ էր :

Ճակտին կը փալփլէին քրտինքին կայլակները : Կը քալէր առանց
զիտնալու թէ ուր : Բայց ոտքերը բնագործն կ'երթային ճամբան :

Մովը : Մեծ ցաւերու ամօքիչը : Ծոռով, ըմբոստ, անհասկնալի : Ան-
դունդը կախարդող : Թաց ու կազդուրող :

Մովուն դիմաց կազդուրուեցաւ կարծես : Հալածողները կանգ առին
մեծ ջուրերուն դէմ : Աղի ու պաղ հովը շոյեց ճակատը, որբեց քրտինքը,
ականջներուն ամօքող շոյանքներ քսեց :

Ի՞նչ էր պատահեց : Շփոթ էր դեռ : Թնկերը իրար խառնուած, թըն-
ճուկ էին : Ուրկէ սկսէր, սկիզբը կորսուած էր :

«Հիմա, - մտածեց մեծ ճիշով մը, - ո՞ւր էի երէկ» :

Ձէր յիշեր : Ժամանակը անշուքիւնը կորսնցուցած էր : Ձէր գիտեր
երազի մէջ էր, թէ իրականութեան : Արդէն, յաճախ չիոթած էր երկուքը :

Բան մը պատահած էր : Ի՞նչ : Ահաւոր, այնքան ահաւոր, որ դոյու-
թեան առանցքը խախտած էր տեղէն : Կլօր անիւնները մէկէն քառակուսի էին
դարձեր : Առաջ չէր երթար կեանքը, ոչ ալ ետ : Ահաւորը, չափերը, կշիռը
համեմատութենէ դուրս էին ինկեր :

Մէկը անդադար կը մշտէր ծոծրակը սուր բանով մը : Զուք կը ճըզ-
նէր վանել զայն : Գլուխը ետ չէր կրնար դարձնել : Վիզը դամուած էր տե-
ղը : Գիտէր՝ որ մէկը շկար հտին : Ու տեւարար մէկը կը ջղայնացնէր զինք՝
սուր խայթոցներով... :

Արեւը դէպի հորիզոն կը հակէր: Օրուայ այն պահն էր, երբ արեւին ժնտաղեայ ճառագայթները այժ կը ծակեն: Մովը հալած արծաթ էր եւ ցուփեր կ'արձակէր ամէն ուղղութեամբ: Արեւը կրակներ կը թափէր վերէն:

Աչքերը կ'այրէին, ճակատը կը ճաթէր: Այլ չէր տեսներ: Մշուշուտ, լուսաւոր ոչինչը: Ընտանի ձեւ մը կը փնտռէր: Կոպերը կ'ուզէր փակել, չէր կրնար: Ուղեղին մէջ ճանճ մը մտած էր ու կը դատնար անզառար, խննթեցնող բղղիւնին միալար թելը բռնած:

Քահանան կ'երգէր.


- Ի վերի՛ին Ե՛րուսաղէ՛մ...

Քահանային հասակը երկինք կը հասնէր: Ձեռքին մէջ բռնած էր հըսկայական կրակէ գիրք մը: Քահանային մատները կ'այրէին: Կը տեսնէր այրող միտին ծուխը ու կ'առնէր անհաճոյ հոտը, բայց տէրտէրը անայլայլ կը կարգար, ցուցամատին ու բթամատին մէջ բռնած խաչը: Անոր ձայնը վերէն, բարձրերէն կու գար:

Երկինք հասնող տէրտէրին մօտ կանգնած էր լուսարարը, դաճած մը: Հագիւ տէրտէրի ծուկին կը հասնէր: Ձեռքին բռնած էր բուրջաւորը, որ իր գլուխէն խոշոր էր, ու կը ճօճէր: Ամէն ճօճումին, ինք եւս մարմնով կը շարժէր: Բերանը այնքան լայն կը բանար, որ փոքր լեզուակը, զանգապի պէս կը կախուէր, բայց ձայնը չէր լսուեր...

Բ. Կ.

(Շար.)



ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

«Սառցահալը սկսած է»... Այսպէս կ'արտայայտուէր ռուս երիտասարդ բանաստեղծը՝ Էվտուշէնքո, երբ այս տարի Փարիզ այցելեց:

Հիմ սերունդի ներկայացուցիչներէն Էնրէնպուրկ՝ կը դատաւարուէր սքալիմեան սարսափները եւ կը հաւատար թէ ազատութեան ճարտի քաղցին» ճիւղերէն մախանջանն է:

Երեւանի մէջ, Սիպերիոյ սառնամանիքներէն վերադարձող գրագէտները հաւատում կը գրէին թէ ԼԵՆԻՆՑԱՆ ՆՈՐՄԱՆՑԸ Ի գորու են եւ թէ «օդը մաքրում է»: Գրականութիւնը, արուեստը եւ մտածողութիւնը գարնանային ծաղկում մը պիտի ունենային մուսազագոյն ազատութեան շունչին տակ:

Սահմակցուցիչ սաստը եկաւ Խրուշչեւէն եւ անոր պաշտօնական գործակիցներէն, ու... գարնան ջուրերը սառեցան:

«Շեղում կատարած են Պարտիայի ուղեգծէն»: Արուեստները, գրականութիւնը եւ ամէն տեսակ մտածողութիւնները Պարտիայի գծած նանապարեով պիտի ընթանան: Այս է երեսնամբ Սքալիմին յարգող դեկլարութեան:

«ՔԱՅԼ ՄԸ ԱՌԱՋ, ԵՐԿՈՒ ՔԱՅԼ ԴԵՊՈՒ ԵՏ» նշանաբանը, համայնավարութեան էրանիկ տագնապի յատկանիշը կը կրէ իր մէջ: Ու երբ, այսօր, աւելի էան դրսևարուած է հակամարտութիւնը Համայնավար Կուսակցութիւններուն միջեւ, Մոսկուայի եւ Փեքինի դեկլարութեամբ, անհրաժեշտ է ըստ էութեան ճնմութեան ենթարկել այդ տագնապը, որ տեսպէս իր անդրադարձներն ունի արուեստներու, գրականութեան եւ մտածումի գարգացման վրայ:

Այժմու ընկերային եւ քաղաքական կեանքի ամէնէն ուշագրաւ երևոյթը համայնավար կուսակցութիւններու առջնապն է, որ դրսևարուած կը գտնենք Փեքինի եւ Մոսկուայի հակամարտ արտայայտութեանց մէջ: Տարակարծու-

թիւնները, կարգ մը հիմնական խնդիրներու շուրջ, շատ խոր են եւ կը սպասանան ճեղքուածքներ առաջացնել համայնավար շարժումին մէջ:

Ձիսաստանի վարիչները կ'ամբաստանեն Մոսկուան (Ռուսչիւի գեկլաւ-

բուլիստներ) որպէս վերաքննական (révisionniste) եւ Հեռացած Մարքս-Լենինեան ուղեգիծէն: Աւելի առաջ երթալով՝ կը դաւանին թէ իրենք են ուղղափառ Մարքս-Լենինեան գործելակերպի զբօշակիրը: Կը թուի թէ շինացի համայնավար պարագլուխները այլեւս չեն հանդուրժեր Մոսկուայի կեդրոնական ղեկավարութեան եւ կ'ուղեն համայնավար շարժումի գլխաւոր առանցքը դառնալ:

Այս տաղանապը երկու-երեք տարիներէ ի վեր աւելի սուր բնոյթ ստացաւ, հրապարակային կրքոտ քննադատութիւններու զուտ բանալով:

Կը թուի թէ տաղանապը աւելի վտանգաւոր փուլի մը մէջ մտած ըլլալու է, որպէսզի Ռորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէն հրապարակ գոյ յայտարարելու թէ կը բաղձայ Մարքսիստ-Լենինեան կուսակցութիւններու նոր ժողով մը զուտ մարիլ, եթէ եղբայր կուսակցութիւնները նման ժողով մը օգտակար կը գըտնեն: «Պրաւտա» Փետրուար 10-ին հրատարակելով Համայնավար կուսակցութեան Կ. Կ. յայտարարութիւնը, ընդարձակ խմբագրականով մը կ'անդրադառնար տաղանապին, ուշագրաւ հրեւոյթներ մատնանշելով, որոնք շատ յատկանշական են այս պարագային:

Փեքինի ղեկավարներն էին որոնք Համայնավար կուսակցութիւններու խորհրդատոգովի մը գումարումը կը պահանջէին եւ որոնց կը պատասխանէր Ռուչիւ, Յունուար 16-ին, Պեքինի Համագումարի ընթացքին: «Օգտակար եւ անհրաժեշտ չէ անմիջապէս ելալիլով եղբայր կուսակցութիւններու խորհրդատոգով մը: Այսպիսի ժողով մը ոչ միայն մերկայիս չի կրնար առաջնորդել մեզ վերացնելու հայեացքներու տարբերութիւնները, այլ պիտի խորացնէ գոնգոնգ, ստեղծելով պառակտման վտանգը: Թողունք որ ժամանակը աշխատի: Ասիկա մեզի թոյլ պիտի տայ տեսնելու թէ ով է տրամաբանական, եւ ով՝ ապրաքաղ:»:

Ու գեւ ամիսը շտեղծած այս վճռական բանաձեւէն, նոյն Ռուչիւի գլխա-

ւորած Կ. Կոմիտէն ձեռք կը կարկառէ Փեքինին, ընդառաջ երթալով երկուստեք խորհրդատոգովի մը գումարման: Այս մեղմացումն ինքնին ցոյց կու տայ տաղանապին ծանրութիւնը, որուն կ'անդրադառնայ «Պրաւտա» յատկապէս ընդդէմ լով երկու պարագաները:

Ա. «Սթալինեան այն ճաղափակաւորութիւնը, որ կը կայանար այն բանին մէջ որ ետ կը մղէր համայնավար շարժումի անկեղծ կողմնակիցները, լքուած է ընդմիջու»:

Բ. «Մեմֆ համամիտ չեմք այն պընդումին, ըստ որու համայնավար շարժումը անդունդի եզրերը կը գտնուի»: Ըստ «Պրաւտայի» հիմքեր չկան այդպիսի երեւոյթի մը. միայն թէ տարակարծութիւնները խորապէս ազդած են եղբայր կուսակցութիւններու վրայ:

Համայնավար կուսակցութիւններու խորհրդատոգովի գումարումը մերժուեցաւ ճեղքայր կուսակցութիւններու մեծամասնութեան կողմէ, ժայնակից ներկայանալով Ռուչիւին: Որով կը մնար որ Մոսկուայի եւ Փեքինի ղեկավարները երկուստեք խորհրդակցութիւն մը կատարեն Մոսկուայի մէջ, Յուլիս 5-ին:

Մոսկուայի մեղմ ընթացքը չկրցաւ մեղմացնել Փեքինի անհաշտ ընթացքը: Ձինաստանի Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէն, Մոսկուայի հանդիպումէն առաջ՝ հրատարակեց քաննչորս կէտերէ բաղկացած տեսութիւն մը, որ հիմք պիտի ծառայէր Մոսկուայի խօսակցութիւններուն: Այդ ընդարձակ զբորութիւնը ակնյայտնի ամբաստանութիւններ կ'ընէր վերաքննական այն ուղղութեան, որ լքում մըն էր, ըստ Ձինացիներուն, Մարքս-Լենինեան ուղիին:

Ռորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան Կ. Կոմիտէն ստիպուեցաւ յայտարարութեամբ հրապարակ զալ «Պրաւտայի» եւ «Եղվեստիայի» մէջ մեղադրելով Ձինաստանի Համայնավար ղեկավարները սթալինեան հակումներու եւ նացիական ձգտումներու ամբաստանութեամբ:

Յուլիս Ե-ին Փեքինի և Մոսկուայի ներկայացուցիչները ժողովի նստեցան Մոսկուայի մէջ, և սակայն ոչ միայն հասկացողութեան մը չկրցան դալ, այլև պառակտումը աւելի խորացուցին: Այս երկու հսկաներուն միջև տեղի ունեցած անհամաձայնութիւններն ու տեսական պայքարները ընդհանրապէս իրենց քաղաքական բնոյթով նկատի առնուեցան: Անուշտ, համայնավար դրօշակով գործող այս երկու մեծերուն հակամարտութիւնը Մայրաքոյն Արեւելքի, ինչպէս նաև համաշխարհային քաղաքականութեան վրայ իր անդրադարձները ունի: Ձիւնատանը կ'ամբաստանէ Մոսկուան որ Արեւմուտքի և Ամերիկայի ձգտումներուն ընդառաջ կ'երթայ, համակեցութեան նշանադրանքն տակ: Իսկ Մոսկուան կ'ամբաստանէ Փեքինը որ անհաշտ պայքարի և պատերազմի կողմնակից է և կը ձգտի ծաւալման քաղաքականութեան, ինչ որ կրնայ յանգիլ աղէտալի պատերազմի մը որ մարդկային ցեղի բնավնջումը պիտի նշանակէր:

Այս մենամարտը սկսաւ այն թուականէն երբ Սթալին անհետացաւ Ռորչրոզային Միութեան բեմէն և Պրուշչեւը աստիճանական կերպով, մեղմ քաղաքականութեամբ, համակեցութեան բանքերը հանդիսացաւ:

1957-ին, Մոսկուայի մէջ գումարուած համաժողովի ընթացքին, տարակարծութիւնները արդէն զբսեւորուած էին և ազդանշան էին Համայնավար կուսակցութեան լուրջ սպանակին:

Այդ թուականին Պրուշչեւ աւելի յանգնեցորէն Հրապարակ եկաւ մերկացրուելու համար Սթալինի ոճրային արարքները, վերջ տալու համար անոր երեսնամեայ արիւնոտ տիրապետութեան և անհատական բռնապետութեան: Այս վրձնական քայլը բնաւ չէր համապատասխաներ Ձիւնատանի Համայնավար կուսակցութեան զործելակերպին, որ կը յիշեցնէր 1917-1922 թուականներու բուլղերիկեան շարժումները, զոտո ստեղծելու և շոտէն նոր ընկերութիւն և նոր հա-

մայնավար պետութիւն կերտելու համար:

1957-ին, առանց Հրապարակային վէճի, տարակարծութեանց վրայ քող մը քաշուեցաւ և սակայն յաջորդ վեց ամբիներուն հետզհետէ զբսեւորուեցաւ և զարձաւ թշնամական: Ձիւնատանի և Ռորչրոզային Միութեան յարաբերութիւններուն մանրամասնութեան մէջ չենք մտնել: Այդ յարաբերութիւնները միջազգային մամուլի մէջ հարիւրտոր յողուածներու և վերլուծումի նիւթ զարձած են: Եթէ քաղաքական հաշիւներով լատրան գրուած է այս հակամարտութեանց շուրջ, սակայն տաղնապի հիմնական էութիւնը մնացած է մութին մէջ:

Ինչի՞ մէջ կը կայանայ այդ տագնապը: Ինչո՞ւ համար սուր բնոյթ ստացած են տեսական տարակարծութիւնները, ինչպէս նաև զործնական քաղաքական զործելակերպը, զանգուածօրէն և հազային տարածութեամբ այս երկու Հեղանկներուն միջև, երբ Սթալինի ժամանակ ամէն ճիշդ կը թափուէր այս սահմաններէն դուրս ծաւալել խռովութիւնները, համաշխարհային յեղափոխութեան անհաշտ պատերազմը շարունակելու համար:

Համայնավարութիւնը իսկապէս տագնապի մէջ էր Սթալինի երեսուն տարուայ ոճրային տիրապետութեան ժամանակ: Բազմաթիւ գրքեր գրուած են պատկերացնելու այն անհուն տառապանք որուն ենթակայ եղաւ Ռորչրոզային Միութիւնը նիւթական, բարոյական և Փիզիքական դեմոնի վրայ: Քանի մը ատանակ միլիոն մարդիկ դուր քացին Սթալինի անզրթութեան: Համայնավար կուսակցութեան մտաւորական դասակարգը կացիտնահարուեցաւ, գրազէտներն ու գործիչները աքսորավայրերու կեդրոնատեղիներուն մէջ թշուառօրէն մահացան և սակայն ոչ մէկուն կողմէ ճիշդ մը բարձրացաւ մոնկոլական այս արիւնշայեղութեան դէմ: Կարչակարգի շղթաները իրարու օգակուած էին, ով որ ողջ էր և գործի վրայ՝ սթալինական էր, բայց կրնար յաջորդ օր բեմէն անհետանալ ողջ մնացողներու

սարսփուհեացի աշխարհի առջև:

Սթալինին յաջորդող իրուշչևի գեղափարութեամբ գործող խմբակը, Սթալինի դատապարտութիւնը բանաձեւած ժամանակ, կը խոստովանէր թէ երեսնամեակ մը կորուստ ունեցած է ընկերփար Հասարակակարգը իր բուն նպատակով տառջնորդելու գործին մէջ, ինչ որ ինքնին կը նշանակէր թէ Համայնավար Կուսակցութիւնը գերազանցօրէն տալնապալի չըջնա մը բոլորած էր: Սթալինի մահէն ետք, քանի մը տարի պիտի անցնէր որպէսզի անոր յաջորդող ղեկավարութիւնը, իր ոտքերուն տեղը ամբարձրէ ետք, յանդիմութիւնը ունենար քսաներորդ Համազումարին մէջ մերկացնելու Սթալինի արարքները եւ անցեալի աղէտալի, արիւնոտ ղէպքերը: Այդտեղ պիտի դատապարտէր անհատի պաշտամունքը եւ հետեւաբար՝ Սթալինի ամբողջ գործելակերպը:

1959-ին, «Սովետական Աշխարհի տալնապալ» վերնագրով յօդուածաշարքով մը մենք անդրադարձած ենք Սթալինի կործանման արարողութեան, այդ առթիւ ցոյց տալու Համար թէ տալնապալ վարչակարգի տալնապալ մըն է, անհատէ աւելի:

Որուշչևի ղեկավարութիւնը ամէն ճիշդ թափեց վարչակարգի արտաքին երեսնամեակ անխախտ պահելու Համար, որպէսզի Սթալինի անկումն ու վարկաբեկումը՝ չնկատուի վարչակարգի անկումն ու վարկաբեկումը, որովհետեւ իրենք բոլորը գործակից ու Համախա գտնուած էին բունակալին ու եթէ թոյլ տրուէր օգտաւորութեան ձգտող ժողովուրդին որ, Սթալինեան կոչմանէն ազատուած, իր իսկական արտայայտութիւնը ունենար, վարչակարգը փուռ պիտի գար խելագարած ամբողջներու շարժումներուն առջև: Միջին ճամբան նախընտրելի նկատուեցաւ: Բռնութեան եւ սաստի մականը իր ձեռքին մէջ պահեց Որուշչև, բայց արիւնի եւ ոճիւրներու չկրցաւ վերադառնալ, ինչ որ պիտի նշանակէր Սթալինի գործելակերպի շարունակութիւնը:

Անցնող աստիճանակի ընթացքին,

աստիճանական մաքրագործումներով, Որուշչև եւ իր կողմնակիցները առանց իրենց ուղղութիւնը վտանգելու, կրցան Համազում գոյացնել թէ Սթալինեան տիրապետութիւնը արմատախիլ եղած է եւ անոր վերադարձը անկարելի է Որուշչևը դալին Միութեան մէջ:

Եթէ վախի աղբեցութեան տակ, Որուշչևի Միութեան մէջ, Սթալինեան տարրերը չկրցան դուրս բարձրացնել եւ տալալի Որուշչևի խմբակը, այսուհանդերձ՝ որպէս ներսի ընդդիմութիւն, կաշկանդող վտանգ մը եղան անցնող տասնամեակի ընթացքին: Այս ընդդիմութիւնը սնունդ կը ստանար արտաշխարհի սթալինեան տիրական մտայնութենէն որ կար հսկայական Ձինաստանի ու այլ եղբայր կուսակցութիւններու ըմբռնումներուն մէջ: Երեսուն տարի այդ կազմակերպութիւնները վարժուած էին ու կազմակերպուած Սթալինի գործելակերպով եւ մտայնութեամբ: Այն մեծ յեղաշրջումը, որ տեղի կ'ունենար Սթալինի փոշիացումով, չէր կրնար անմիջապէս ընդունելի ըլլալ նոյն մեթոտներով դիրք եւ աղբեցութիւն շահած կազմակերպութիւններու եւ խմբակներու կողմէ: Տասնամեակ մը պէտք եղաւ որպէսզի Մոսկուայի վարիչները կարողանան իրենց շուրջը Համախմբել արանեակ պետութիւններու Համայնավարները եւ արտաշխարհի կարգ մը Կ. Կոմիտէները դաշնակից դարձնել Մոսկուայի նոր ջազականութեան:

Ձինաստանի Համայնավար Կուսակցութիւնը անխախտ մնաց իր սթալինական ըմբռնումներուն մէջ եւ իր շուրջ Համախմբեց Ասիոյ եւ Աֆրիկէի յետամընաց տարրերէն բաղկացած Համայնավար Հոռանքները, պզտիկ արբանեակ մըն ալ Ադրիականի եղբրքին՝ յանձին Ալպանիոյ ինվէր Հոնայի: Ու ահա, վեցեօթը տարիներէ ի վեր Որուշչևի, ինչպէս նաեւ միջազգային մամուլի մէջ բանավէճ մը շրթալազերծուեցաւ երկու հսկաներու միջև, տեսարանական պիտակին տակ, ուր մեծերը քոյին տակ կը մոային եւ յարձակման թիրախ

կը դառնային Ենկոսյաւիան եւ Ալպանիան Զինատանի Համայնավար զինվարները Թիթոն եւ իր Համախոհները կը նկատէին դաւաճան Մարքս-Լենինեան ուղղութեան եւ զանոնք կ'ամբաստանէին որպէս վերաքննական եւ գործիք՝ դրամատիրական ուժերու: Փոխադարձաբար Մոսկուայի վարիչները անխնայ քննադատութիւններու առարկայ կը դարձնէին Ալպանիոյ վարիչները, որպէս ըստ թայնականներ եւ Համայնավար շարժումին մէջ պառակտում ստեղծողներ, որոնք կը քաջալերուէին Զինատանի Համայնավար կեդրոնին կողմէ: Այս փոխասացութիւններն ու լուսանքները ամէն մարդ կը Հասկնար թէ ուղղուած էին, Թիթոյի անուան տակ՝ Խրուշչեւի Հասցէին, իսկ էնվէր Հոճայի փոքրիկ Հովանոցին տակ Մա-Յէ-Քոնսկին էր իր եօթը Հարիւր միլիոն բազմութեամբ: Բընականաբար այս փոխասացութիւնը պիտի յանդէր բաց պայթարի մը Մոսկուայի եւ Փեքինի միջեւ, որոնք մենք Հանդիսանա ենք այժմ, երբ Յուլիս Ե-էն սկսած՝ Մոսկուայի մէջ Համայնավար շարժումի Հակամարտ այս երկու մեծերը խորհրդակցութեան նստեցան, լուծում մը գտնելու եւ առաջը առնելու Համալսարանային Համայնավարութեան պառակտումին:

Մինչ ժողովը կը շարունակուէր, Փեքինի եւ Մոսկուայի պատասխանատու օրկանները պառակտումը կը խորացնէին ծայրայնութիւններով: Փեքինը սթալինեան թաղաքականութեան ջատագով կը Հանդիսանար այն Հասկացողութեամբ, որ անխնայ պայքարը պէտք է շարունակուի կայսերապաշտութեան եւ դրամատիրութեան դէմ եւ պատերազմով պէտք է կործանել արեւմտեան ուժերը, Համայնավարական ընդհանուր տիրապետութեան ի խնդիր, նոր աշխարհ մը ստեղծելու Համար: Մինչ Մոսկուան, Խրուշչեւի ղեկավարութեամբ, խաղաղութեան եւ Համակցութեան նշանաբաններով կ'ընթանար, զստակարգային պայքարը շարունակելով Հանդերձ: Մոսկուայի դիրքը վճռական է այն յայտա-

բարութեամբ թէ, սքալինեամ մեքառնիրը եւ անհատի պաշտամուծը արմատապէս վերացուած են եւ այդ ուղղութեամբ վերադառնալու խօսք չի կրնար ըլլալ:

Մոսկուայի վարիչները կը գտնեն թէ, Խորհրդային Միութիւնը եւ իր արբանեակ պետութիւնները քառասուն եւ վեց տարուայ փորձերէն հոսք տող մը Հասած են, ուր իրենց անտեսական, քաղաքական եւ Համայնավարական դիրքերը պիտի ամբացնեն խաղաղ միջոցներով եւ կէս դարէ ի վեր խոտոտցուած բարեկեցութիւնը եւ երջանկութիւնը պարտաւոր են տալ բազմութիւններուն, որոնք երեք սերունդ արեւան տառապանքի մէջէն անցնելով, բուլչեթեան բարեկեցութեան կը սպասեն անհամբեր: Մինչդեռ Զինատանի եւ իրենց շուրջ Համախոհներու Ասիոյ, Աֆրիկէի եւ Հարաւային Ամերիկայի Համայնավարները, որոնք հազիւ թէ տասը-տասնըհինգ տարուայ փորձի շրջան մը ունին իրենց պատմութեան մէջ, կը ձգտին ծաւալուն խոտովութիւններու, արիւնալի զինուորական գործողութիւններու եւ կ'ուզեն անհաշտ պայքարը շարունակել Արեւմուտքին դէմ, ինչպէս ժամանակին Խորհրդային Միութիւնը, Սթալինի ղեկավարութեամբ, երեք տասնամեակ շարունակած էր դործել Համայնարհային յեղափոխութեան դրօշին տակ: Զինատանի, Ասիոյ եւ Աֆրիկէի յետամնաց Համայնավար տարբեր անհամբեր են Հաննելու Խորհրդային Միութեան աստիճանին եւ կը կարծեն թէ Մարքս-Լենինեան տեսաբանութեան հարազատ ներկայացուցիչը իրենք են, երբ կը ջատագովեն Համաշխարհային անհաշտ յեղափոխութիւնը: Իրենց բաղձանքն է որ Խորհրդային Միութիւնը իր արբանեակներով հա նահանջէ երեսուն տարի եւ շարունակէ քայլ բռնել Զինատանի, Աֆրիկէի եւ Հարաւային Ամերիկայի շարժումներուն Հետ: Այս Հոտանքի կեդրոնական ղեկավարութիւնը անշուշտ Զինատանին կը պատկանի եւ Զինատանը Համայնավարական կայսերապաշտութեան մը ձգտումն անէ, ինչ որ

անկի չափով մը գեղին վտանգի ուրուականը կը ցուցադրէ Մայրադոյն Արեւելքի հորիզոնին վրայ:

«Իզվեստիա» քննադատելով չինական տեսութիւնները, կը յայտարարէ թէ անոնք գեղին եւ այլ գոյնի ազդերու եւ ցեղերու առեւտրութիւնը կը շղթայազերծեն ներմուծներու դէմ, նոր տեսակ նացիական խոբորում մը մտցնելով Չինաստանի համայնաւար շարժման մէջ: Հիմնուելով Ձիւնաստանի համայնաւար արտայայտութիւններուն վրայ, Իզվեստիա կը յայտնէ թէ, ըստ Ձիւնաստանի ղեկավարներուն, «Կայսերապաշտութիւնը կրնայ տապալուիլ քաղաք երկիրներու երկտասարդ յեղափոխականներուն միջոցաւ, որոնք բան մը չունին կորսնցնելիք եւ որոնք պիտի է միաման առանց նկատի առնելու Արեւմուտքը»:

Ձիւնաստանի վարիչները, որոնք «Իզվեստիայ»ի կողմէ կ'անուանուին համայնաւար շարժումը պատակաւորներ, Ասիոյ եւ Աֆրիկէի ժողովուրդները կը հակադրեն ներմուծներուն եւ Արեւմուտքին, բնկով թէ՛ Արեւմուտքը կը մնայ Արեւմուտք եւ ներմուծները՝ ներմուծ: Պարզ է թէ Ձիւնաստանի վարիչները այս ընթացքով ազգայնամուտական, համայնաւարական եւ անհաշտ յեղափոխական խառնուրդ մտածողութիւն մը ունին, Մարքս-Լենինեան անուան տակ: Մարքս-Լենինիզմի զբօշակով գեղին կայսերապաշտութիւն մը:

Ու այս բոլոր փոխադարձ ամբողջանութիւնները եւ լուսանքները կը փոխանակուէին Մոսկուայի եւ Փեքինի միջև, երբ Մոսկուայի խորհրդակցութիւնները վերջ կը գտնէին ձախողութեամբ:

Ճ

Պաշտական և տեսաբանական տանաձեւայ վէճերուն համառոտ պատկերը տուինք, անդրադառնալու համար տաղանայի իսկական դրդապատճառներուն:

Մէկ կողմ թողունք տեսական անվերջանալի կրկնութիւններն ու ուղղափառ երեւնալու ձգտումները, որոնք սին եւ կեղծ տեսութիւններ են, թաքուն մտա-

ծումը ծածկելու համար: Փաստօրէն մարքսիզմ, լենինիզմ, սթալինիզմ գործածուած են ըստ պատշաճութեան եւ ոչ թէ ըստ ընկերային հիմնական դիտութիւններու: Նոյն իզվեստիա երեսուն տարի Սթալինի հետեւորդները հարիւրաւոր զիրքեր եւ հազարաւոր յօդուածներ գրած են. նոյն բանը այսօր Ձիւնաստանի համայնաւար ղեկավարները կ'ընեն Մարքսի եւ Լենինի անունով, ցոյց տալու աշխարհին որ համայնաւարութեան (Մարքս-Լենինեան) անշեղ ըմբռնումները միայն իրենք ունին, իսկ Մոսկուայի լենինեան հրապարակին վրայ խօսող Որոշչեւը արդէն դաւանանած է Լենինի եւ Մարքսի ու վերջնութեան նեթարկելով մարքսեան հարիւրամեայ տեսութիւնները, կը նահանջէ դէպի դրամատիքական Արեւմուտք, Թիթոյի նըման:

Ետ դառնալ անհրաժեշտ է ղէպի 1917-1920 թուականները, ըմբռնելու համար թէ առաջին Լենինն էր որ մարքսեան տեսութեան խօսելով, ընկերային անհաշտ յեղափոխութեան կը դիմէր Ռուսաստանի ընդարձակ արածքին վերայ եւ իր սեփական տեսութիւնները եւ գործելակերպը հաշտ կը գտնէր մարքսիզմին: Մինչդեռ Ռուսաստանը յետմընաց երկիր մըն էր եւ, ըստ ընկերվարական հիմնական մտածողութիւններու, այդ երկրին մէջ ղէպի ընկերվարութիւն անցնելու հիմնական տուեանները կը պակսէին: Եթէ Լենին իսկապէս հետեւած ըլլար Մարքսի եւ անոր յաջորդող ընկերվարական տեսութիւններուն, որոնք ընկերարանական տուեաններու վերայ հիմնադրուած էին, գրոմափրուձ թենէն ղէպի ընկերվարութիւն անցնելու գործողութենէն միայն Եւրոպայի եւ Ամերիկայի զարգացած դրամատիքական երկիրներուն մէջ կրնար տեղի ունենալ:

Լենին անսուսեց այդ մարքսիստական զգիտական ճամարտութիւնը և Ռուսաստանը մատնեց անօրինակ զարգացիական պատերազմի մը, երբ 1917-ի Փետրուարեան յեղափոխութեամբ, ընկերվարական կուսակցութիւնները իշ-

խանութեան արագած էին եւ սահմանադրական ընտրութեամբ Սոցիալիստ-Յեղափոխականները, Սոցիալ-Դեմոկրատները (փոքրամասնական), ինչպէս նաեւ փոքր ազգերու ընկերակցական կուսակցութիւնները բացարձակ մեծամասնութիւն կը կազմէին Սահմանադիր ժողովին մէջ: Լենինի բուլեւարտի ապստամբութիւնը իսկապէս ուղղուած էր ընկերակցական այս հոսանքներուն դէմ: Լենինի ապստամբութիւնը, փոքրամասնութեան մը շնորհիւ, կրցաւ տիրանալ իշխանութեան եւ շղթայագործել քաղաքացիական կռիւնները ամբողջ առաջնական անձայրածիր տարածքին վրայ, տապալելով ոչ միայն ընկերակցական հոսանքները այլեւ կոտորածի ենթարկելով ձաբը եւ ձարիկները, ինչպէս նաեւ նորահարս զբաղաւորութիւնն ու աւատակետութիւնը: Այդ երկրի քաղաքական եւ ընկերային կառոյցը կործանեցաւ մինչեւ յատակ եւ ինչ որ մնաց անձայրածիր կրկնամաս մըն էր եւ երկու հարիւր միլիոն մանրկային զանգուած, այր-բռնէն սկսելու եւ նոր աշխարհ մը կերտելու համար: Պատմական այս զործողութիւններու ընթացքին, օրէնքէ դուրս հռչակուեցան բոլոր ընկերակցական կուսակցութիւնները եւ բնաջնջուեցան:

Բուլեւարտի այս բռնապետութիւնը գինու զօրութեամբ իր արքայապետութիւնը տարածեց Ռուսաստանէն ազատագրուած բոլոր ազգերուն վրայ, խորտակելով անոնց նորահաստատ անկախութիւնը եւ ձգտեցաւ խոտովութիւններն ու քաղաքացիական կռիւնները տարածել Թուրքիոյ վրայով մինչեւ Մարոք, Պապից Մովուզեղբէն դէպի Պարսկաստան եւ Մոնկոլիոյ վրայով դէպի Չինաստան:

Լենինի իշխանութիւնը կ'անցնէր Սթալինին եւ իր հետեւորդներուն եւ բռնատիրութիւնը կը դառնար մոնկոլական արշաւանք մը, մասնաւորապէս դէպի յետամնաց երկիրներու ժողովուրդները եւ մոնկոլական անգթութիւն մը երկրէն ներս չհնարեալ անարդկային կեղծակերպութեամբ: Ու այս կը տեսէր երեսուն տարի անընդհատ, յանուն ըն-

կերվարութեան եւ յանուն համայնակարութեան, մարդկութեան երջանիկ ապագայ մը շնորհելու խոստումով: Այսպէսով, Ռուսաստանի բուլեւարտը եւ համայնակարութիւնը յանուն Մարքսի, ու ապա նաեւ յանուն Լենինի, վրադիր ըլլալով նաեւ յանուն Սթալինի, ստեղծեցին զործնական կեանքի մէջ տեսութիւն մը, թէ կարելի է դրամատիրութիւնը տապալել եւ ընկերակցութիւն կառուցանել յետամնաց, թշուառ եւ անձլակոյթ երկիրներու մէջ, նկատի ունենալով որ այդ երկիրները բան մը չունին կորսուցրեցիկ, ինչպէս այժմ կը կրկնեն Մաս-Յէ-Յունկի գործակիցները:

Բամ մը չունին կորսուցրեցիկ...
 Կարծես թէ ընկերակցութիւնը իր հարիւրամեայ ըմբռումներով ու զործնակերպով բան չունեցող հասարակարգ մը ստեղծելու ընկերային իտէալ մը ըլլար: Եթէ այս տրամաբանութեամբ դատելու ըլլանք, Չինաստանի այժմու ծաւալուն շարժումը, հետեւողութեամբ Լենինի եւ Սթալինի, փանջումիական շարժում մը կը դառնայ: Ըմբռում մը որ հիմնապէս կը տարբերի ընկերակցական հասարակարգի մը ձգտումներէն:

Ճ

Համայնակար շարժման տազնապը պայթեցաւ, երբ Յրուշչեւ Սթալինի անհատի պաշտամունքը կը խորտակէր եւ անոր երեսնամեայ մենատիրութեան աննկարագրելի աղէտներէն ազատած կը հռչակէր Խորհրդային Միութիւնը. եւ սակայն Յրուշչեւի գլխաւորած խմբակը չհամարձակեցաւ վարչակարգը արժատական փոփոխութեան ենթարկելու, նոր կեանքի արշալոյսը բանալու համար Խորհրդային հասարակարգին վրայ, Երեսուն տարիներու ամէնօրեայ զործնակերպը եւ մտայնութեան կրկնութիւնները կոշկոտ կապած էին վարէն մինչեւ վեր: Պէտք եղաւ վեց-եօթը տարիներու անընդհատ պայքարի մը, սթալինականութեան դէմ, մինչեւ հնարաւոր զարձաւ բռնակալին անունը կրող բոլոր յիշատակարանները ջնջել Խորհրդային

Հաստատութիւններէն: Վերջին տասնամյակը Պանաբոնի բարձունքէն Սթալինի արձանը պիտի ըլլար, որուն ծանր կուրծքին տակ կրկար ժամանակ տնքաց հայ ժողովուրդը:

Համայնավար կուսակցութեան տաղանապը շարունակուեցաւ հակառակ Սթալինի անհետացման: Աշատութեան շունչը, որ սաւառնեցաւ Նորհրդային Միութեան վրայ, իր տրամաբանական վախճանին չհասաւ, որովհետեւ եթէ Սթալինի արեւնոտ բռնակալութիւնը տապալած էր, անոր վարչակարգի բռնատիրական բարձրը կը շարունակուէին: Եթէ բաղդատական պատկեր մը գծենք 1956-1963 թուականներու գիկզակներուն, ջերմութեան աստիճանը նշանակելու ձեւով, պիտի տեսնենք որ մասնակի ազատութիւններ երբեմն վերելք մը կ'արձանագրեն, սակայն պարբերական նահանջները վերագարձ մը կը դժն զէպի սթալինական բռնատիրութիւնը, առայժմ առանց արեւնի:

Այս ուղղութիւնը հաւատարմութիւն մըն է Լենինի այն պտուղամբին որ կը թելադրէր— «Մէկ քայլ առաջ, երկու քայլ ետ»: Անշուշտ այս պատգամը երբ կը դնուէր 1917-1923 պատմական ժամանակաշրջանին մէջ, ըմբռնելի է, նկատի առնելով այն արեւնոտ վերիվայրումները որոնք տեղի կ'ունենային այդ ժամանակաշրջանին: Սակայն մօտ կէս դար «Լեւինի վարկան հասարակարգ» կոտորոցը Համայնավար կուսակցութիւնը երբեք չէր ըմբռնում մը պատկերը կը պարզէ նոյն մեթոտը գործադրելով:

Պատկերագրող պատմութիւնը Նորհրդային գրականութեան, արուեստի և մատար շարժումին, ցոյց կու տայ թէ քաջայերուած ու զնահատուած ազատ արտայայտութիւնները զօրուեցան ամէնէն կողմէ կերպով, արժանապատուութենէ զրկելով եւ զբողոքող, եւ արուեստագէտը, եւ մտաւորականը, սթալինեան ստրուտի մը արտածելով ամէն կողմ: Սարտափի այդ աւիթը արագօրէն կը հասնէր նոյնիսկ Հայաստան, ուր զեռքանի մը ամիս առաջ գրողականները կը

կարծէին թէ զօրը մաքրուած է՝ ու վերագարձ չկայ Սթալինի անօրինակ սարսափներուն: Բայց Նորուշչեւի եւ իր գործակիցներուն սաստը բաւական եղաւ որպէսզի հայ բանաստեղծն ու գրողէնը անմիջապէս արձանագրէ մամուլին մէջ թէ— «Նս սխալուեք նե՛ս... Առայժմ զըլուխը չկտրեցին այդ գրողէտներուն, բայց անհատական հպարտանքէ եւ արժանազատութենէ զրկեցին զանոնք, ինչ որ մահէն աւելի բան մըն է:

Եթէ Համայնավար տաղանապը այսպէս կը դրսեւորուի գրականութեան եւ արուեստի կալուածին մէջ, որպէս Պորհրդային Միութեան ներքին տաղանապ, եւ միւս կողմէ կ'արտայայտուի Պինաստանի եւ Ասիական երկիրներու Համայնավար կուսակցութիւններու հակադրութեամբ Մոսկուային, միջազգային ընդարձակ ծաւալ մը տալով Համայնավար պոստիւտմին, իսկապէս տաղանապը Մոսկուայի ընդհանուր ղեկավարութեան մէջ գոյութիւն ունի մօտ քառասուն տարիէ ի վեր եւ Նորուշչեւի ներկայ վարչութիւնն է որ խորապէս կը գիտակցի տաղանապին, բայց վճռական ելք մը չի կըրնար գտնել:

Սթալինի եւ սթալինականութեան երեսնամեայ մենատիրութեան տապալումը իսկապէս վարչակարգի մը տապալումն էր, սնանկացած գործունէութեան մը վերջակէտը: Եւ ըստ Նորուշչեւի՝ նոր այրուբնէ մը սկսելու հարկադրանքին տակն էր ներկայ ղեկավարութիւնը: Եւ սակայն Նորուշչեւ վարչակարգը անխափու պահեց, որով ստիպուած եղաւ ընկերային եւ քաղաքական գիկզակներու ղիմել Համակցութեան բանաձեւին տակ: Փաստօրէն վերաբնակաւ ուղղութիւն մը կ'որոշուէր առանց հիմնական քայլեր տունելու: Միջազգային բարդ խնդիրներ, ազգեցութեան շրջաններու զասաւորում մը, շինական հակամարտութիւնը, որ իր ետեւէն կը քաշէր կը տանէր ասիական բազմաթիւ Համայնավար կուսակցութիւններ, որոնք ծայրայեղ խառնակութեանց եւ վերիվայրումներու ընթացքին քան մը չունէին կոսմոսմիք, կը

հարկադրէին զգուշանալ ընկերային անմիջական փոփոխութիւններէ եւ սահմանափակուիլ քաղաքական հաստատարակըչութիւնը պահպանելու մասնազուբեամբ:

Զարմանալի ճկունութեամբ, Պրուչչիւ կը յայտարարէր թէ ընկերավարութիւնը արդէն կառուցուած է խորհրդային տարածքին վրայ ու իրենք ձեռնամուխ կ'ըլլան համայնավար աշխարհի մը հիմնադրման: Ուրեմն, Սթալինի շրջանը կը վերջանաւ ընկերավարութիւնը կառուցանելով: Իբր թէ երեսնամեայ կոտորածներ, անօթութիւններ, չնկայական մարդասպանութեան համայնավար դործիչներու քնաջնջումը եւ հարիւր հազարաւոր մարդոց սիպերիական սառնամանիքներու մէջ աքսորման արիւնալի պատկերը եւ սորկական թշուառութիւնը ընկերավարութիւն նշանակէր:

Համայնավարութիւնը կառուցանող խրաչչեւեան ղեկավարութիւնը 1957-ին կը յայտարարէր թէ հօթնամեայ ծրագրով Պրուչչիւային Միութեան անտեսական կեանքը պիտի հասնէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու աստիճանին: Երկիրը՝ բնակարաններով եւ ժողովուրդը՝ ապրելակերպով պիտի դին անցնին զբաժանորդական բոլոր երկիրները: Այս շնորհալից յայտարարութենէն արդէն վեց տարի անցաւ եւ մենք այսօր կը տեսնենք որ բնակարանի եւ բարեկեցիկ ապրուածի սաղնապը կը շարունակուի: Ժողովուրդը, որ պահ մը յուսացած էր լուսազոյն ապրուածի եւ նուազագոյն աղատութեան արժանանալ, տեղ քայլ կ'ընէ հետաւոր ապագայի յոյսով, բայց միշտ գժգոհ:

Ճ

Ինչո՞ւ համար այս սուսայտանքը, այս զիկզակները, այս անարդիւնք փորձարկութիւնները, երբ արդէն թոտատունհինգ տարուայ փորձառութիւն մը կայ իրենց ետին:

Հիմնական պատճառը համայնավարութեան սաղնապն է, որուն անունը չիփ-չիտակ առլ չեն համարձակիր:

Համայնավարութիւնը հետանալով ընկերավարական սխտեմաթիք եւ մարդկային իրական գաղտփարներէն եւ դործիակերպէն, ՄԵԱՆԿԱՑԱՄ Է ՈՐՊԻՍ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ, համայնավարական բանաձեւումներով, մարքսեան, չնիքեան կամ սթալինեան տեսններով եւ սասնեակ տարիներու կեղծ ու անընդհատ կրկնուած անտրանութիւններով, իսկական ընկերավարութենէ շտա հետու մնացած են, մանաւանդ գործնական դեանի վրայ: Եթէ ընկերավար հաստատուած կարգի մը տակ երկու հարիւր միլիոն մարդ զժբախտութեամբ պիտի վերջացնեն իրենց կեանքը, ընկերավարութիւնը կը դառնայ թշուառութեան փիլիսոփայութիւն մը: Մինչդեռ, անդին, դրամատիրական հըռուակ ունեցող Միացեալ Նահանգները, թշնամի ըլլալով համայնավարութեան եղէժ ըլլալով ընկերավարական կազմակերպութեան, աշխատաւոր ամբողջ դասակարգը այնպիսի բարեկեցիկ եւ ապահով վիճակի մը հասցուցած են, որ իրաւամբ կրնայ յայտարարել, թէ ընկերավար հասարակակարգ մը գործնական կեանքի մէջ արդէն իրականացուած է:

Ընկերային կարգերու աստիճանական զարգացումը կէս դարէ ի վեր թելադրական է ընկերային դիտութիւններու եւ կեանքին նոր ձեւ մը տալու փորձարկութեան անսակէտէն: Մոսկուայի վարիչները քառասունհինգ տարիներ ըրտնապետութեան տակ պահելով հարիւր միլիոնաւոր բազմութիւնները, աղատութիւնը քաղքենի ըմբռնում մը հաշուեցին եւ քաղաքական վերիփայլումները, պայքարները, խռովութիւնները ծաւալելու տեսական քաղաքականութիւն մը վարեցին: Այն կառուցը որ ունեցաւ եւ անի ետքիւղայիմ Միութիւնը ոչ ընկերվար է, ոչ համայնավար եւ ոչ ալ մարդկային: Եւ սակայն կառույց մըն էր զօրաւոր՝ բունութեան շղթայով, ղինուարական հըռուակայ մեքենայով, հիւլէական սւժով, դերադանց: Այս կատայց կրնար կայսերական բունատիրութեան մը լուսազոյն յեւարտեղ նկատուիլ, կրնար Հիթլերի նը-

ժան մէկուն աշխարհը սարսափեցնելու գործիք մը ըլլալ, ինչպէս որ այսօր կրնայ Համայնավար կուսակցութեան ձեռքին մէջ, աշխարհի խաղաղութիւնը վտանգել եւ իր գինու զօրութեամբ մըրջիլ գրամատերական ամէնէն հզօր պետութեանց հետ, որպէս աշխարհակալ պետութիւն. բայց դէպի մարդկային քրտնալուծիւն ձգտող ընկերային կարգ մը չէ եւ չի կրնար ըլլալ:

Բռնատիրութիւնները անկման ենթակայ են: Պատմութեան քաղմաթիւ փաստերը վկայութեան բերելու պէտք չկայ: Մինչդեռ, ոռոտական համայնավար յեղափոխութիւնը ճամբայ ելած էր աշխատաւոր բազմութեան եւ մարդկութեան երջանկութիւնը կերտող Հասարակարգ մը ստեղծելու նշանաբանով:

Նպատակի, գործելակերպի եւ իրականացումներու հակասութիւնը կը տեսնուի, կը տեսնուի քառասունեւհինգ տարիներէն վեր, որոնցմէ կը ծնի այն տազնապարհ մը այսօր սուր բնոյթ ստացած է, կուշած մնալով միշտ բռնատիրական վարչակարգին:

Այս տազնապարհ փոխերէն անցան դրականութիւնը, արուեստները, փիլիսոփայական ըմբռնումները եւ ընկերային գիտութիւններու տարրական ճամբարութիւնները, միշտ շրջուած ձեւով: Կեղծ պատմաբանութեամբ, մարքսեան, լենինեան կամ սթալինեան կեղծ տեսութիւններով, բառակոյտերու անսահման ծաւալ մը, որոնց տակ թաքնուած էր մէկ անվիճելի ճամբարութիւն. — Համայնավար բռնապետութեան վերջնական օրհանգստի ընդունումը: Եթէ բռնատէր ղեկավար եւ կամ ամենակարող չեկայի պետք փոխուէր, տեսական վճիռն ալ փոփոխութեան կ'ենթարկուէր, միշտ Մարքսի կամ Լենինի անունով: Բայց... անտարակի ճամբարութիւն: Այսպէս սուրբ կը դառնար ամէնէն վճռական տեսարանութիւնը, ստանափրա ճամբարութիւնը:

Համայնագիտարաններու մէջ նոր տպագրութեամբ, անհատներու գնահատումը ըստ օրուայ տիրապետողի կամ

քին շատ յաճախ փոփոխութեան ենթարկուեցաւ: Ընթարտութիւնը որ կ'արձանագրուէր այնքան տիրական հրահանգով, կը սրբուէր՝ տեղ տալու ուրիշ ճամբարութեան մը, բնականօրէն կեղծ:

Այսօր տակաւին այդպէս է Պրուշինսկի մեղմ Ժպիտին տակ, բայց բռնատիրական մտրակը ձեռքին մէջ:

Անշուշտ Համայնավար կուսակցութեան տազնապարհ խորապէս կը գրան աշխարհայ վարիչները եւ ելք մը գտնելու անկեղծ փորձեր կ'ընեն, ներկայ իրենց կացութիւնը բարեփոխուած հիմքերու վրայ շինելու համար (բարեմտութեամբ այսպէս դատենք): Մակայն հիմնական նահանջը որ պիտի կատարէին ետ դառնալու գէպի ընկերվար բնականօրէն մտածողութիւնը, կ'ուշանայ երբ ուժի տեսակէտէն արդէն Հասարակութեան մը ունին այդ նահանջը կատարելու համար, որ ինքնին յառաջդիմութիւն մը պիտի նշանակէր: Եթէ Պրուշինսկի ղեկավարութեան տասնամեայ գործունէութիւնը եւ արտայայտութիւնները նկատի առնենք, պիտի գտնուէր այն համոզման, թէ այլեւս անկարելի է վերադարձ մը դէպի սթալինեան վարչակարգ: Եթէ այս Հասարակութեան ճիշդ է, կը մնայ ուրիշ վերադարձ մը՝ դէպի ընկերվարութիւն, ազատութեան, մարդկային արժանապատուութեան եւ երջանիկ բարեկեցութեան մը ձգտող ընկերվարութեան որդեգրումը:

Ահա երկընտրանքը որուն առջեւ կը գտնուին Մոսկուայի վարիչները:



Երկընտրանքը, որուն առջեւ կը գտնուին Մոսկուայի Համայնավար ղեկավարութիւնը, դիւրութեամբ նախընտրութիւն չի կրնար ընել, նկատի առնելով որ, քառասունեւհինգ տարիներու ընթացքին իր որդեգրած պայքարի ձեւերը ծանր ու թշնամական մթնոլորտ մը ըստեղծած են իր եւ արեւմտեան աշխարհի ընկերվար կուսակցութիւններու միջեւ:

Բողոքիկեան շարժման օրերէն իսկ, թիւ մէկ թշնամին ընկերվար կուսակցու-

թիւները եղան, որոնք Ռուսաստանի եւ քաղկեացնոց ազգերու ղեկավարութիւնը ստանձնած էին: Այդ թուականէն ի վեր, Համայնավար կուսակցութիւնը Ռուսաստանէն ներս անողոք եղաւ ընկերվարականներուն հանդէպ եւ հետզհետէ այդ պայքարը սուր բնոյթով տարածեց նւրոպայի մէջ, պառակտելու եւ քանդելու ընկերվարական կուսակցութիւնները եւ անոնցմէ կողոպտած բեկորներէն վերակազմելու Համայնավար կուսակցութիւններ, որոնց պիտաւոր դերը պիտի ըլլար ըլատել Ընկերվարական Միջազգայնականը, սենտիքաները, նոյնիսկ գործակցելով դրամատիրական հոսանքներու եւ յետադիմականներուն հետ, պարտութեան մատնելու Համար ընկերվարական այն մեծ կուսակցութիւնները որոնք մինչեւ այդ թուականները աշխատաւոր ժարդկութեան դրօշակիրը կը հանդիսանային:

Օր մը եթէ Համադրուի 1917-1937 թուականներու տիւր դերը որ կատարեց Համայնավար կուսակցութիւնը ընկերվար եւ աշխատաւորական կառոյցները քանդելու Համար, յստակօրէն պիտի տեսնուի թէ աշխատաւոր ժարդկութեան յառաջդիմութիւնը կէս դարով ետ մնաց, քաղաքատմաբ այն ընկերային ընդհանուր զարգացումին, որ այժմ ունի դրամատիրական աշխարհը:

Համայնավարները Բ. Միջազգայնականէն բաժնուեցան եւ կազմեցին Գ. Միջազգայնականը, Համայնավար դրօշին տակ: Այսպէսով բանուորական եւ աշխատաւորական կազմակերպուած զանգուածը, որ դերազանց ոյժ մը կը ներկայացնէր ընդդէմ քաղքենի հոսանքներու, երկուքի բաժնուեցաւ եւ այդպէս շարունակուեցաւ ահա քառասուն տարիներէ ի վեր: Այս կորուստը, բարոյական եւ կազմակերպական, Համայնավարները իրենց յաղթանակի հաշուին արձանագրեցին: Գիտնական Համաշխարհային յեղափոխութեան եւ խռովութիւններու ծաւալումէն, Համայնավարները ամէն շարժում եւ ընտրական պայքար օգտագործեցին զաշխակցելով երբեմն յետադիմա-

կաններու, երբեմն նացիներու, երբեմն նոյնիսկ կղերականներու հետ, ընդդէմ ընկերվարական հոսանքներու, իրենց ծաւալումին ի խնդիր: Գործելակերպի այս ընթացքէն պարզ էր, թէ Համայնավարութեան Մարքս-Լենին-Սթալինեան սեռութիւնները ձեւական էին եւ ամէն միջոց ներքի կը հաշուուէր իրենց ծաւալուական քաղաքականութեան համար:

Այս խառնակութիւններու ընթացքին, երբ Մուսոլինիի Փաշիզմը եւ Հիթլէրի նացիզմը կազմակերպուեցան, երկուսորի պայքարի դրօշով, մէկ կողմէ ընդդէմ հզօր պետութիւններու, միւս կողմէ ընդդէմ Համայնավարութեան՝ Բ. Համաշխարհային Պատերազմը պարթեցաւ, որուն հետեւանքները ներկայ սերունդը լաւ դիտէ: Կեանքի ու մահուան այդ ծանր պատերազմի ընթացքին իսկ, Համայնավար կեդրոնը ձգտեցաւ վերջնակափոխել քայքայել ընկերվարական կուսակցութիւնները, միշտ ի մտի ունենալով թէ իսկական մրցորդը Համաշխարհային ընկերային կառոյցին կը հանդիսանային ընկերվար կուսակցութիւնները եւ Սենտիքաներու Միջազգային Ընդհանուր Միութիւնը:

Արդ, տասնեակ տարիներու այս վերվարումները անուշտ զնաւ հասցուցին ընկերվար կուսակցութիւններուն, բայց շկրցան քայքայել զանոնք, որովհետեւ անոնք իրական արդիւնք ունէին դրեթէ հարիւրամեայ ընկերային զարգացման եւ պայքարին եւ կը Համապատասխանէին աշխատաւորական լայն զանգուածներու տնտեսական եւ բարոյական ձգտումներուն:

Ի՞նչ պատահեցաւ եւ ի՞նչ արդիւնք ունեցաւ քառասնամեայ այս պայքարը: Իրողութիւնները այսօր կը հաստատեն թէ ընկերվարական հոսանքները եւ դեմոկրատիկ ազատ ըմբռումները արդական մնացին դրամատիրական երկիրներու մէջ, իսկ Համայնավարութիւնը ընդունելութիւն գտաւ յետմահայ ժողովուրդներու զով: Այսօր մեր աչքերուն առջեւ նոր կեդրոն մը կը կազմաւորուի Զինատանի շուրջ, Համաշխարհային Ծա-

ւալողական քաղաքականութիւնը շարունակելու համար: Մոսկուան չի քաշուիր այդ հոսանքը որակելու որպէս սթալինական կամ թրոցքիական: Նոյնիսկ կը նախատեսէ Դ. Միջազգայնականի մը կազմութիւնը Մայրադոյն Արեւելքի մէջ: Աւելին, արդէն այս օրերուն Պինաստանի վարիչները կ'որակուին կայսերապաշտութեան ջրանցքին ջուր հոսեցնող եւ հետեւարար՝ թշնամի համայնավար ընդհանուր շարժումին:

Նոյն օրակումները եւ աւելի ծանր ամբաստանութիւններ ըրած էին քառասուն տարիներէ ի վեր ընկերվար կուսակցութիւններու հասցէին: Բայց այդ բոլորէն վերջ, ներկայիս Մոսկուայի կեդրոնը երկրորդանգի առջև է:

Երկրորդանգ ի՞նչ ուղղութիւնով:

Նախապէս ըսինք թէ համայնավար խրուչչեւեան ներկայ հոսանքը սթալինականութեամբ դառնալու ոչ մէկ հաւանականութիւն ունի:

Բռնատիրական ըլլալով հանդերձ, ձարակամ բռնակալութեամբ վերադարձ չունի:

Դրամատիրական մար Ռուսաստան մը կերտելու ոչ մէկ հաւանականութիւն կայ, թէեւ իր տնտեսական ներկայ կառոյցով ճարտարարուեստական զրեթէ հաւասար հիմքեր ունի, գրամատիրական երկիրներու նման:

Ուրեմն, երկրմարմէք, մերկայ պարագաներում, կը մնայ վերադարձ մը բնկերվարութեամբ, ազատութեամբ եւ ժողովրդավարական կարգերու: Այս քայլը ընելու հնարաւորութիւն ունի Խորհրդային Միութիւնը քանի մը հիմնական պատճառներով: Նախ՝ գինուորական հսկայ ուժ մը ունի իր տրամադրութեան տակ, որպէս ընդհանուր ապահովութիւն: Երկրորդ՝ տնտեսական, մանաւանդ ճարտարարուեստական զգրաւոր կառոյց մը ու-

նի որ ընկերվար ազատ կարգերու տակ կրնար դերազանցապէս աւելի զարգանալ: Երրորդ՝ ոչ միայն կ'ապահովէ Խորհրդային Միութեան եւ իր արբանեակներու ազատ զարգացումը, այլև ընդհանուր ընկերվարական համակարգով, կրնայ զսպել դրամատիրական երկիրներու վտանգաւոր ձգտումները: Գորրորդ՝ Պինաստանի թաւալողական վտանգը կը հեռացնէ իր դռներէն:



Միամիտ չենք այն աստիճան թէ Մոսկուայի կեդրոնը մէկ օրէն միւսը կրնայ հրատարել իր Մարքս-Լենինեան կոչումէն: Բայց այդ անունը պահելով հանդերձ եւ պայքարի բառարանը գործածելով տեւաբար, ստիպուած է, համակեցութեան իր ներկայ քաղաքականութեան բերումով, մեծ թուած պարագաները նկատի առնել: Այլապէս, ներքին խմբական հակամարտութիւնները եւ դեկլարութիւնը ձեռք ձգելու տենչանքները կրնան օր մը քառսի վերածել Խորհրդային Միութիւնը, որ պիտի ըլլոր վերադարձ մը բոլլեւիկեան բարբերու, ինչ որ փափաքն է Մաո-Յէ-Յոու-կի:

Ու այդ պիտի նշանակէ կործանումը բոլլեւիկեան բռնակալութեան:

Այսօրուայ զեկավարները իմաստութիւնը եւ խոհեմութիւնը պիտի ունենան արդեօք կոռչելու ընկերվարական ազատ բմբոնումին եւ դեմոկրատիկ կարգերուն, վերածնունդի նոր ճամբայ մը բանալով մեծատարած Ռուսաստանի, եւ զայն բազկացնող բազմաթիւ ազգերու առջև:

Հարցումին պատասխանը կախուած է խրուչչեւեան հոսանքի վճարականութեան:

Կ. Ս.

ՄԵՐ ԲԱՆԱԿԻՍՈՒԹԵԱՆ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԳԱՆՁԵՐԸ

Գրեց՝ ԱՐՄԷՆ ՍՆԻԱՆ

Գրաբարով դրուած մեր բանաստեղծական ստեղծագործութեանց մէջ, ըլլան անոնք ոտանաւոր թէ արձակ, կան ղեղկերիկ էջեր, բայց անոնց նիւթերու զանազանութիւնը սահմանափակ է եւ առանելազէս կը կրեն կրօնական, պատմական, վարդապետական եւ երբեմն ալ պիտական ու իմաստասիրական ընոյթ:

Այդ բոլորէն քիչերը միայն ինքնատիպ են եւ կը հանդիսանան հետեւողութիւն մը իրենց ժամանակին ընդհանրական դարձած տեսութիւններու: Այդ զԸրութիւնները ռակայն կ'արժէ քաւորուին՝ երբ հեղինակը օժտուած ըլլալով ինքնուրոյն օճով ու զրելու տաղանդով, զանոնք սարկական հետեւողականութենէ մը կը փրկէ վերածելով ինքնազրոյժ ու ինքնատիպ երկի մը, եթէ ոչ մտածման՝ զոնէ արուեստի ընդհանրութիւն մէջ:

Հայ հողի ճշմարիտ, ազատ եւ բազմազան արտայայտութիւնը հանդիսացան այն տաղերը, հեքիաթները, առակները եւայլն, որոնք գրուեցան ռամկական հայերէնով միջին դարէն սկսեալ եւ որոնց յայտնարարութիւնն ու ուսումնասիրութիւնը հազիւ երեք քառորդ դարու հնութիւն մը ունի:

Միջնադարեան հայ քերթողութիւնը, որ մեզի կը ներկայանայ զանազան կրօնական եւ աշխարհական հեղինակներու անուններով, եւ որոնցմէ ոմանց հեղինակի սեփականատիրութիւնը կը մնայ վիճելի, կը կազմէ մեծարժէք զանձ մը

մեր քերթողական գրականութեան համար եւ կու գայ ցոյց տալու թէ անկախ կրօնական իր կեանքէն հայը ունեցած է նաեւ իր ազատ, աշխարհիկ սպրումները, շնչուածօրէն ցեղային, իր սիրտն ու հողին բանալով մարդկային բոլոր ներքին փոթորկումներուն, փորձելով նոյնիսկ յանդգնութիւններ ազատ մտածողութեան գետնին վրայ, որոնք խոտոր կը համեմատին դարուն նեղմիտ մտածողութեան:

Միջնադարեան մեր տաղասացներու նիւթին եւ արուեստին ու ժողովրդական բանահիւսութեան միջեւ կան խորունկ յանդիտութիւններ եւ կարելի է ըսել թէ անոնք կը բխին նոյն ստեղծագործ աղէն՝ որ Հայ ժողովուրդի սիրտն է:

Մեր տաղասացներու գործերուն յայտնարարման եւ ժողովրդական բանահիւսութեան գոհարներու հաւաքման եւ գրի առնելուն, հետեւաբար զանոնք կորուստէ փրկելու գործին մէջ արժէքաւոր աշխատակիցներ են՝ Գ. Կաստանեանցի «Միջնադարիսմ հայ տաղերու ժողովածուները», Արիստակէս վարդ. Տէվկանցի «Հայերգը», Ճանիկեանի «Հնու-քիւնք Ակնաճ, Շերենցի «Վառայ Սագ» երկու հատորները, Գար. Յովսէփեանի «Փշրամբներ ժողովրդական բանասիրութիւնից», ինչպէս նաեւ «Սասնա Մաեր» հատորները, Արիստ. վարդ. Սեդրակեանի «Բնար Մշտուց եւ Վանցուցը»,

Տրդատ եպ. Պաշեանի «Հայ աշուղներ» գործը՝ Երկու հատորով, Արշակ Զօպանեանի «Նահապետ Փուշակի դիւանը», «Նոպաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան Ոկարիչը», «Հայրէմներու Թուրատանը», Մ. Արեղեանի «Հին գուսանական ժողովրդական երգեր»-ը եւ նման այլ արժէքաւոր աշխատութիւններ:

Այս գետնին վրայ գնահատելի աշխատանք կատարած են նաեւ Հայր Ներսէս Ակիւնեան, Հայր Մկր. Պոտուրեան, Գար. Եպ. Սրուանձտեանց, Ե. Լալաբեան, Տիգ. Զիթուշի, Վահան Գուլումեան եւ ուրիշներ:

Հայաստանի մէջ ալ այսօր եռանդուն աշխատանք կը տարուի այս ուղղութեամբ եւ լոյս կ'ընծայուին արժէքաւոր հատորներ, ինչպէս Սասունցի Գաւրիի աւելի քան քառասուն տարբերակները, Մայեաթ Նովայի, Աշուղ Ճիւղանի եւ այլ ժողովրդական հին ու նոր երգիչներու եւ աշուղներու գործերը, ինչպէս նաեւ ազգագրական բնոյթ կրող այլ հրատարակութիւններ:

Յիշատակուած բոլոր հեղինակներուն եւ անոնց նմաններուն ճիշդ եղած է կրօնատէ փրկել մեր ժողովրդական բանահիւսութիւնը՝ որմէ կարեւոր մաս մը գրի առնուած շքլալով, սպրսւծ է միայն ժողովուրդի բերնին մէջ եւ փոխանցուած՝ սերունդէ սերունդ: Մեր բանահիւսութեան դանձերէն մաս մը եթէ հաւաքուած է տաղարաններէ, բայց անոնցմէ կարեւոր մաս մըն ալ փրկուած է Հայ գեղջուկին բերնէն շնորհիւ ու հաւաքելով: Իրիւ օրինակ յիշենք Ակնայ անտունիներն ու հայրենները, Սասունցի Գաւրիի ազգավէպը, որուն կմախքը առաջին անգամ յայտնաբերուած էր Գար. Եպ. Սրուանձտեանցի կողմէ եւ յետոյ միայն ամբողջացաւ նոր հետախուզութեանց հետեւանքով:

Գտնածէ դուրս է թէ, շուրջ երեք քառորդ դարու ընթացքին կատարուած աշխատանքը եթէ շատ բան փրկեց մեր ժողովրդական բանահիւսութիւնէն, շատ զուարներ ալ անհետ կորան եւ այլեւս

հնար չկայ զանոնք գտնելու, որովհետեւ անդարձ կերպով կորաւ Արեւմտեան Հայաստանի հայութիւնը՝ Հայ գեղջուկը՝ որ աղբերակն էր հայ հոգիին, սրտի եւ մտքի զուարներուն: Առաջին Աշխարհամարտի նախօրեակին Սանասարեանի ուսուցիչներէն Վ. Գուլումեան որ Ակնայ գիւղերը շրջելով Հայ բանահիւսութեան զուարները հաւաքելու հետամուտ եղած էր, կը յայտնէր թէ Անտունիներու եւ Հայրէններու լուսագոյն նմոյշները գտած է իմ ծննդավայր գիւղիս՝ Մաշկերտի մէջ:

Եւ իսկապէս, մանկութեան օրերէս կը յիշեմ թէ, ինչքան երգեր կ'երգուէին հարսնիքի, մահուան, Բարիկենդանի եւ այլ սոճական օրերու, ինչքան օրօրներ, զարիպի նուիրուած երգեր՝ որոնցմէ շատերը կորսուած են այսօր եւ չեն երեւար մեր բանահիւսութեան զուարները ամփոփող հաւաքածոներու մէջ:

Այդպիսի նմոյշ մը իր ատենին տըւի Սօֆիա հրատարակած «Մասիս» տարեգրքիս Բ. հատորին մէջ (1935), բայց անկէ յետոյ հրատարակուած որեւէ հաւաքածոյի մէջ չտեսայ զայն, որով աւելորդ չեմ նկատեր վերահրատարակել «Բարիքի» մէջ, զայն մտապահեմնէ կամ անտեսուելէ փրկելու համար:

Մայրս, լուսկեաց եւ զեղեցկապաշտ հօգի, մեր գիւղին հաղուազիւտ վերապրողներէն, օր մը իր թոռնուհիին օրօրոցին մօտ օրօր կ'ըսէր հազիւ լսելի ձայնով: Մօտեցայ իրեն. երգը զաղբացուց. ինչպիսի որ շարունակէ: Զարմացաւ հետաքրքրութեանս. գտկամակեցաւ. չէր գիտեր արժէքը իր երգին եւ իմատը՝ յամառ պնդումիս: Ինք գեղացի կին էր, երգածն ալ զեղացու երգ...: Ինչո՞վ կրնար հետաքրքրական ըլլալ:

Ի վերջոյ տեղի տուաւ պնդումիս եւ պեղելով իր յիշողութիւնը ամբողջացուց Օրօրը՝ որուն քանի մը տողը կրկնելով բաւականացած էր:

Ահա՛, զուրգուրանքի, սիրոյ, քնքրութեան այդ քերթուածը, անխաբախ ընտանք մեր ժողովուրդի արուեստագէտ հոգիին:

Օ Ր Օ Ր

Ձագո՛ւկս, օրօր կանչեմ օրերուդ,
Թեիկս դէմ դնեմ գալած չարերուդ.
Ձարերո՛ւդ, չարերուդ, ինչ վատ օրերուդ.
օրօր, օրօր:

Օրօր, օրօր, իմ մտան հատիկ,
Իմ նրան հատիկ, խնձորի մորմիկ,
Խնձորի մորմիկ՝ նարնջի կտիկ,
Նարնջի կտիկ՝ որ նոր է մորճեր,
Որ նոր է մորճեր՝ պրտուդ չէ տուեր.
օրօր, օրօր:

Օրօր, օրօր, իմ հոգում հոգեկ,
Իմ հոգում հոգեկ, իմ նորտունկ եգեկ.
Իմ նորտունկ եգեկ՝ որ նոր է ժմներ,
Որ նոր է ժմներ՝ խաղող չէ տուեր.
օրօր, օրօր:

Օրօր, օրօր, օրը՛դ շատանայ.
Օրեկըդ շատանայ, տարեկդ երկընմայ.
Տարեկդ երբայ հարիր տարուան մօտեմայ,
Օրօր, օրօր, իմ գարնան գառնուկ,
Իմ գարնան գառնուկ, աշնան պրլպրուկ,
օրօր, օրօր:

Արդրուկս պաղջամերու կիւլմ ես դում.
Պրգտըտիկս, շափախիմ պիւլպիւլմ ես դում.
օրօր, օրօր...:

Արեւմտահայաստանի բնակչության մասին խոսելիս ինչպես ենք մենք պատմում իրենց մասին, ինչպես ենք մենք պատմում իրենց մասին, ինչպես ենք մենք պատմում իրենց մասին, ինչպես ենք մենք պատմում իրենց մասին...

բով կրցաւ փլատակներու վրայ վերա-
չինել, մտածման ու արուեստի նոր հը-
րալայիքներով զեղազարդել իր հայրե-
նիքը ու խաւարի ուժերուն դէմ բարձրա-
ցրենել լոյսին բոցավառ ջահը՝ որուն սկ-
նազրիւրը իր սիրտն էր ու հոգին, իր
բեղմնաւոր ընթերցը:

Թուրքը, ամէն զեղեցկութեան թըշ-
նամի, բնաջնջելով արեւմտահայութիւ-
նը, նիւթական արժէքներու հետ ցամ-
քեցուց նաեւ անոր հոգեկան զեղումնե-
րու ակնադրիւրը:

Այլեւ Անտոնիներու եւ Հայրէնե-
րու ոսկի աղբ ցամքած է իրենց բնագա-
ւտին մէջ իսկ, եւ ինչ որ ունինք այսօր
արեւմտահայ ժողովրդական բանահիւ-
սութենէն՝ անցեալի ծով զեղեցկութիւն-
ներու մնացորդներն են միայն, թանգա-
րաններու զարգ՝ որոնք կոչուած են ար-
թուն պահելու նոր սերունդներուն մէջ
մեծ ողբերգութեան մը սահմակեցուցիչ
իշխատակը եւ կորուսեալ մեծութեան,
փառքի ու զեղեցկութեան կսկիծն ու հը-
պարտանքը:

Մանր եղաւ ոսոխին հարուածը բայց
վրիպեցաւ իր վախճանական նպատակէն՝
որ հայ ժողովուրդի ամբողջական բնա-
ջրնջումն էր:

Եթէ մեր հայրենիքին մէկ մեծ մասը
աւերակ է ու անմարդաբնակ, անդին՝
Արաբսի, Հրազդանի ու Սեւանի եզերք-
ներուն, հոգ չէ թէ դժուարին պայման-
ներու մէջ, Հայը կը շարունակէ ապրիլ,
աճիլ ու բեղմնաւորիլ, բունուած ստեղ-
ծագործական հզօր երկունքով մը՝ ծաղ-
կեցնելով արուեստի ու գիտութեան ա-
ծուները հրաշք ծաղիկներով եւ իր վը-
րայ հրաւիրելով աշխարհի հիացումը ու
թշնամիին ալ բարի կամ չար նախանձը:

Հայը կը մնայ անպարտելի իր սպ-
րկու կամքով:

Այդ կամքը զբաւականն է կորուս-
եալ արժէքներու եւ փլատակուած փառ-
քերու վերանստեղծումն:

Ա. Ս.

Պաւելուս Այրէս

Սթէնպլէի Փարիզ գտնուած ժամանակամիջոցին իրեն կը հաբցենն-
- Կը սիրէ՞ք Անգլիացիները:
- Վերջին պատերազմի ընթացքին սորվեցայ զերեսը սիրել: Աւելի պիտի սիրէի
զերեսը եթէ տանելի ըլլային իրենց ճաշերը:
- Ինչպէ՞ս կը գտնէք Փարիզի ցոյց տուած ընդունելութիւնը ձեզի:
- Աջանչելի: Մտնուածը ամերիկացի զբաղէտներու համար, քանի որ Ամերի-
կայէ մէջ, նախանձելի չէ զբաղէտին զրուսիւնը, ամենաշիտին պարուհիին որունքներն
սեղամ կրնան զինք խուարումի մտանել:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

« ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ » Ը

(ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՏԵՍԱՆԿԻՒՆԷՆ)

Պատճառները.— Նիւրբ.— Թատերական սեպտեմբեր.— Տեսարան առ սեսարամ ԲՅՈՒՐԻՆԸ.— Տուրքահամաճամ սեսարամները, ճիւղը զարգացնող սեսարամը, զագարմուկտը, նոր հուսարակաբուսիւնը.— Թատերական տրուեստի ընթացումով գիտաւոր թերթիները բաւերակցեցին (Միուրիանս պակաս, կերպարներուն կառկանը) մասիննական զարգացմամբ յառաջացող պատճառներուն մը պակասը, կապակցումի եւ բնականութեան օրոք պակասներ, *սեմպուրիտի* եւ իրականութեան սեղ սեղ տնայարող կապակցում, ժամանակներու ստրկութեան առաջ թեւով զուտարիւնները, եղիմակիմ ճօթի սեպական միջաճարիւնները)։ Թատերակիմ զրտկան կողմերը.— Ի՞նչ փոփոխութիւններ աւելի ուժեղ պիտի ընէին բաւերակը.— Հին Աստուածներու տրեւէր ճերկայ իր ձեւին մէջ։

Մինչ Թատերակիւնները սովորաբար կը զփուտարանան իրենց Նիւթի ցուցահանումը Թատերականօրէն տանելի դարձնելու աշխատանքին մէջ ու յաճախ կը ձախողին, Շանթ կերտած է ուժեղ, կուս ցուցահանման տեսարաններ։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ.— Տեսարան առաջին, երկրորդ եւ երրորդ.— Այս արարուածի երկու տեսարանները ոչ միայն հիմնական Նիւթը մէջտեղ կը բերեն, ապաւորող, ուշադրու ձեւով, այլ նաեւ որոշ յառաջադասք կ'ապահովեն զէպքերուն, ապրումներուն, առաջացնելով այդ ձեւով խտացում մը, ուժգնութեան յաւելում մը։

Այս ձեւով, Նիւթի զարգացումը, որ պիտի յաջորդէր ցուցահանումին, սկըսած է արդէն։ Թերեւս այդ է պատճառը արեղայի եւ կոյր վանականի տեսարանին առաջին արարուածին մէջ տեղաւորուելուն, հեղինակին կողմէ, հակառակ այդ տեսարանին այլեւս զարգացող Նիւ

թին մաս կազմելուն եւ ոչ թէ ցուցահանումին։ Պէտք է ընդգծել թէեւ, թէ ընդհանուր առումով, ի. Շանթի արարուածները չեն համապատասխաներ Նիւթի աստիճանաւորումի մը, կամ ժամանակադրական հանգրուաններու։

Առաջին արարուածի երրորդ տեսարանը իր մէջ կը պարունակէ Թատերական երկու տեսարաններ՝ կոյր վանականի ու արեղայի տեսարանը, արեղայի ու Մեղայի տեսարանը։

Այս երկու տեսարաններուն մէջ զարգացողը արեղայի շրջանակն է միայն, կապուած վանահօր շրջանակին՝ միմիայն կոյր վանականի Ներկայութեամբ ու արտայայտած մտքերով։ Արեղայի ապրումներուն, վարանքներուն եւ վանահօր աշխարհին միջեւ չկայ ոչ մէկ ուղղակի կապ։ Կապը ընթերցողը կամ հանդիսատեսը կը ստեղծէ, սակայն մտքի ճիւղով մը։

Ինքն իր մէջ առած սակայն, տեսարանը Թատերական տրուեստի շատ յա-

ջող կիրարկում մըն է, մարմաւորում մը: Ունի տրամաբիւժ մուտք մը, մէկ տող, որ կ'ամփոփէ, կը խտացնէ տեսարանը ամբողջ. բոլոր Հարցերն ու Հարցականները կը զնէ մէջտեղ, կրկնակիօրէն սուր ձեւով, քանի որ Հարցումը կու գայ կոյր մարդէ մը, որուն արտաքին աչքերը չեն կրնար տեսնել արեղային դէմքը, մտածկոտ ու ընկճուած արտայայտութիւնը՝ «Ո՛րք եմ մտքերդ արեղայ. Ոորէ՞ն, Ոորէ՞ն»:

Հարցումը արդէն կը պարունակէ պատասխանը: Հանդիսատեսին Համար այդ մէկ Հատիկ տողը կը բանայ ամբողջ ներաշխարհ մը, խոսվայոյզ հոգեկան վիճակ մը, ուր իրար կը բախին, պիտի բախին Հակասական ուժեր - Հողեկան մաքուր Թուիջը արեղային, եւ իր տկար մարմնին ցանկութիւնները:

Տեսարանի տեւողութեան, զիտակից կամքի եւ քնազդական կեանքի մղումները կ'ընդհարին իրարու եւ՛ զէպքերով, եւ՛ Հակադրուող նախադասութիւններով կազմուած կուտ տրամախօսութեամբ մը: Ընթերցող կամ Հանդիսատես Հեւ ի Հեւ կը Հետեւին բեմին վրայ կոյրին Հետ տեղի ունեցող Թէ՛ ներքին, եւ Թէ՛ արտաքին պայքարին, ու կը սպասեն, կը սպասեն որ արեղան Նկարագրէ ծովու փոթորիկին մէջ իր ունեցած ապրումը: Տեսարանին պարտադիր տեսարանն է այդ ապրումին նկարագրութիւնը՝

«Կը յիշեմ, ամբողջ էալքիւմբս կը ցանկայի որ ալ վերջ չունենար այդ քաց նամբամ, ալ վերջ չունենար այդ վայրկեանը...»

Գաղաթնակէտը տեսարանին, արեղայի լոկիտայն խոստովանութիւնն է իր մէջ արթնցած զգացումին՝ «ԳՔա իմծի, անզոքն նախադասութեամբ»:

Տեսարանի վերջաւորութեան նոր Հաւատարակչութիւն մը կը Հաստատուի, որքա՞ն ժամանակի Համար, որքա՞ն Հաստատուն, անորոշ է, եւ այդ անորոշութիւնն իսկ աւելի սուր կը դարձնէ ներքին տագնապը, Սեղայի Հետ արեղայի զրոյցը:

Տեսիլքն է արեղային, անկասկած, Սեղան՝ Թաց մազերով, սպիտակազգեստ Սեղան, որ քանի մը բողբոջ մէջ կը սըըրէ, կը քշէ մէկ կողմ կոյր վանականի բոլոր խրատները, բոլոր աղօթքները, կը պահանջէ արեղայի վերարկուն (Յորհրդազանիչը արեղայի վանական կեանքին ու Հաւատքին) ու կը ստանայ:

Վարադրը կ'իջնէ խոսվայոյզ արեղայի մը Հեծկրտանքէն ցնցուող ուսերուն վրայ:

Ի՞նչ կը բերէ տեսարանը ընդհանուր Թատերակին: Զարգացում մը կայ նիւթի, որ արեղայի շրջանակինն է: Հանդիսատեսը դեռ տեղեկ չէ վանահօր ներքին խոսվելին մանրամասնութեանց. դիտէ միայն, Թէ՛ ան ալ ունի անկասկած ներքին պայքար մը (ճերմակատը) եւ որովհետեւ արեղայի մօտ ալ կեանքի պայքարն է, կեանքի ներխուժումն է վանքէն ներս, կրնայ Հանդիսատեսը եզրակացնել Թէ՛ արեղան վանահօր ներքին պայքարներու արտայայտումն է որ կը բերէ, քիչ մը աւելի լեչուած ձեւով ըրկարագրուած: Կրնայ ըլլալ որ արեղան կազմէ առանցքը Թատերակին, իր միջոցով արտայայտուի Հեղինակը. կըրնայ ըլլալ որ արեղան լքէ վանահայրը, կըրթայ Սեղային ետեւէն: Այս բոլորը կը մնան եւ պէտք է մնան անշուշտ դեռ տարտամ մշուշի մը մէջ: Ինչ որ որոշ է այս տեսարանէն ետք, այն է, Թէ՛ արեղան ինկած է արդէն ճանկը կեանքին: Որոշ է Թէ՛ իր շուրջը կը մղուի, պիտի շարունակուի մղուիլ պայքար մը երկու Հակադիր ուժերուն միջեւ՝ կեանքն ու վանքը, անպատը: Յստակ է իր ներսը տեղի ունեցող փոթորկումը. տաղնապ մը կազմաւորուելու վրայ է արեղային մէջ: Ուրեմն, եթէ արեղան պիտի ըլլայ առանցքը Թատերակին, կարելի է ըսել Թէ՛ տաղնապ մը կազմաւորուելու վրայ է ամբողջ Թատերակին մէջ:

Վերջին բախումը չէ՛ դեռ, կամբուրու զերագոյն ընդհարումը չէ՛, գաղաթնակէտը չէ՛. սակայն Հաւատարակչութիւնը որ գոյութիւն ունէր, խախտած է արդէն: Անկայուն, դժուար պահպան-

ուող հաստարակչուութիւն մը կայ միայն այս տեսարանէն ետք, եւ սպասումը՝ նախկին հաստարակչութեան կամ վերահաստատման, կամ վերջնական խորտակումին, եւ նոր հաստարակչուութեան մը հաստատումին:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ.— Տեսարան առաջին: Հին Աստուածներու երկրորդ արարուածի առաջին տեսարանը իր մէջ կը պարունակէ թատերական երեք տեսարաններ՝ վանականները առանձին, երբ իրարու հետ կը խօսակցին իրենց վախերէն, յիշատակներէն, խորովածի ու խաչի երազներէն. վանականներն ու վանահայրը՝ ուր վանահայրը կ'աշխատի հետո վանել անտի հաւատքները, սարսափները՝ իր վանականներուն մէջէն. ապա, վանհօր եւ արեղայի առանձին տեսարանը, ուր արեղան, կցկտուր քառերով, ծոփէն, այլքներէն, փոթորիկէն խօսելով, կը զգացնէ վանհօր թէ իր հոգեկան վիճակը չունի նախկին խաղաղութիւնը, թէ կասկածը, ցանկութիւնը տեղ գտած են հոն, ու կ'առաւելցնէ վանհօր շոր, խիստ, կտրուկ պահանջը՝

«Գնա՛, եղի՛ր մօրեմ այնպէ՛ս, ինչպէ՛ս որ էիր, ե՛տքը եկուր ինձի: Այնպէ՛ս, ինչպէ՛ս որ էիր. այնպէ՛ս, ինչպէ՛ս որ էիր...»

Վանականներու շրջանակը, որ մաս կը կազմէ անշուշտ թատերակի աւելի լայն եւ ընդհանուր շրջանակին, յառաջխաղացք մը կ'ունենայ այս տեսարանով: Հանդիսատեսը աւելի լաւ, աւելի մօտէն կը ծանօթանայ անոնց. ու իր տեսածը հետո է հոգեկան սլացքէ, թոփէքէ: Խաչ ու խորոված կ'երազէ, ինչ որ բնական է, մարդկային է, կարելի է նոյնիսկ ըսել՝ կենդանական է: Գայ, անշուշտ, թեթեւ, շուտ մոռցուող, անզօրութեան դիտակցութեամբ շուտ տհարացող պայքար մը ներքին, նաեւ այս վանականներուն մէջ՝ շարին ու բարբին դիտակցութիւնը, պայքարը շարք վանելու համար: Մական այդ անզամ տարտամ է իրենց մէջ, եւ նախնականի սահմաններէն ան-

դին չ'անցնիր, ինչ որ բնական է անշուշտ: Վանահայրը կը փորձէ յաղթանակել սալ հոգիի ուժը: Վանականներու եւ վանհօր միջեւ թաւալող խօսակցութեան ընթացքին յառաջխաղացք մը կը կրէ վանականներու գիծը — եւ ընդհանուր թատերակը —, երբ ծերունի վանականի բառերուն մէջէն կը զգանք թէ չեն կրցած կտրել աշխարհի ու կեանքի հետ իրենց ունեցած կապերուն ամբողջութիւնը:

Վանահօր հոգիին ու մտքին մէջ այլ եւս առաջուայ ինքնավստահութիւնը չըկայ. սկսած է արդէն մտածել ճերմակաւորի ըսածներուն մասին՝ սեւաւորները դուրս, աշխարհին զրկելու մասին. ի Հարկէ ոչ թէ ճերմակաւորի ըսած ձեռնով անոր տուած իմաստաւորումովը բառերուն, այլ պարզապէս կամաց կամաց զգալով թէ իր շուրջինները, զինք շրջապատողները կրնայ ըլլալ որ յունենան պէտք եղած հոգեկան կտրուկը: Առաջին տեսարանին վճռական էր վանահայրը, հիմա կ'ըսէ՝

«Ով մարդ է ու միայն մարդ, ամիկա աշխարհիմն է ու քող դառնայ աշխարհիմն. ահա պատրաստ է հայր Անտանի լսուողը ու նոյնիսկ, կը ստիպուի խօշոր բարձրացնել որպէսզի վանականները ուշքի գան...»

Հաղիւ վանականները կարգի բերած, վանահայրը ինքզինքը կը գտնէ այս անգամ իր միտքանութեան ամենազաղտփաքականին տկարացումին գէժ յանդիման. կը ստիպուի անոր անգամ յիշեցունել՝ «Դուք մայր երկիմք, որդի, երկիմքը միտքն է բնութեամբ, խոր ու խաղաղ»: Կեանքը ներխուժած է արդէն արեղայի հոգիէն ներս. վանահայրը յաւերեալ պայքար մը ունի տանելիք՝ արեղան փրկելու համար: Իր եւ ճերմակաւորի կամքերուն ընդհարումը աւելի եւս կը սրուի, կը մօտեցնէ հարցը առաջնայի մը, թերեւս զազաթնակէտին...

Այս տեսարանով, արեղայի ցարդ իր շրջանակին մէջ միայն ունեցած տաղանջը կը հանդիպի վանահօր տաղանջին եւ երկուքը կը կազմեն այլեւս մէկ ամ-

թողնութիւն մը, միակ տապանայ մը, արտայայտած զանազան ձեւերով, զանազան պահերու, զանազաններու մօտ - կենդանականին ու մարդկայինին բախու- մի տապանապար:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱՄ ~ Տեսարան երկրորդ. — Երկրորդ տեսարանը կը պարունակէ թատերական շորս տեսարաններ, որոնց կեդրոնը միշտ արեղան է: Արեղանն է միակնունքը, արեղանն ու ճղնաւորը, արեղանն է Անդան, արեղանն է քանի մը վանականներ: Արեղանի երազն է այս տեսարանը, կամ տեսիլը. կը զրացուի ատիկա տեսարանի վերջատրուիթեան, երբ Միմոնն ու Աղամ վանականներ, սունկ հաւաքելու ելած, կը զաննեն արեղան՝ ուշակորոյս:

Առաջին մասը, միզանուշներու տեսարանը հանդիսատեսին դիմաց կը բանայ արեղանի ներքին բորբոքումներուն աւելցած ըլլալը, դրեթէ մտահալածանքի մը վերածուած ըլլալը. իր դիմը քայլ մը ետ առաջ գացած է, իր հետ յատուցեցնելով թատերակը: Ըզնաւորի տեսարանով արեղանի հողեկան տապանապարակի ետ կը շնչատարուի: Փորձ մըն է արեղանին կողմէ, հողեկանին կատչելու. երկու խօսք ճղնաւորին կողմէ, թեթեւ թեթեւաբար մը անգամ թէ պէտք է — կ'արժէ կեանքը թողուլ ու քաշուիլ առնպատ, աղօթելու հողիին փրկութեան համար — պիտի բաւեն արեղանին, վերազանելու ինքզինքը, նախկին հաւատօքով, նախկին հաւատարակչութեամբ: Ըզնաւորը սակայն — իր ներքին ճայնը — կ'ըսէ իրեն ճիշդ հակառակը, թէ ունայնութիւնն է ամէն ինչ, իսկ մարդուն իմաստութիւնն ալ ունայնութիւններուն ունայնութիւնն է:

Հանդիսատեսներուն համար ամէն ինչ պարզ է այլեւս ու բնական, սպասելի: Կը զգան անոնք թէ հեղինակին զըլ- խաւոր հերոսը արեղանն է, թէ անոր միջոցով պիտի արտայայտուի հեղինակին ըսելու ուղածը. արդէն իսկ կը լսեն յընտարարէն թէ ինչ կ'ըսուի, կամ պիտի ըսուի շուտով՝ Վարսիլի չէ փախել կեանքէն, իմաստ չունի փախուստը կեանքէն: Կեանքը ամէն տեղ է, լերան կատարին, անապատին մէջ, ծովուն փոթորկումն- ըուն մէջ, մահուան դիմաց անգամ:

Ինչ կը վերաբերի ուղղակի արեղանին, հանդիսատեսը կը զգայ այլեւս թէ անել վիճակի մը հասած է անն է Ծանր երկընտրանքի մը առջեւ կը գտնուի: Եթէ հանդիսատեսներուն կարծիքը հարցուի, թատերակի այդ տեսարանին վերայ կանգ առնել տալով խոյզը, մեծ մասը պիտի պատասխանէ. «Ի՞նչ է կեցիկ արեղան. ինչո՞ւ վրայէն չի նետեր այդ սեւ զլետը ու չի վերադառնար կեանքին, ուր իրեն կը սպասեն իշխանական ձի, իշխանական կեանք ու Անդան: Այլապէս պիտի խենթենայ, կարելի չէ այսպէս շարունակել յաւիտեան...»

Հանդիսատեսներու արտայայտած այս երկու տեսակէտներէն մէկը, պարզ է, պիտի ըլլայ պարտադիր տեսարանը թատերակին, որուն զարգացումը տեսած են հանդիսատեսները, որուն անխուսափելիութիւնը տակաւ առ տակաւ զգացած են, եւ անխուսափելիութեան զազափարին հետ հաշտուած են հիմա:

Արեղանին անմիջապէս սքեմը թողնելուն, կամ անմիջապէս խենթենալուն առաջը առնողը, տապանապար մը ձեռով երկարաձողղը, Անդանն է, (արեղանի միւս ներքին ճայնը) եւ իր բերած նորութիւնը, թէ կեանքի ունայնութիւնը կարելի է լիութեան վերածել երազներով ու պատրանքներով:

Տեսարանին վերջին մասը, վանականներուն սունկի ու ճաշի մտածումներով, սքանչելի հակադրութիւն մըն է, եւ ցնցումով կը տանի հանդիսատեսը իրականութեան, շոր, տափակ, առօրեայ իրականութեան:

Ոչ միայն ատոք կը ծառայէ կարճ այդ տեսարանը, այլ նաեւ թատերակը առաջ կը տանի, զգացնելով ընթերցողին, կամ հանդիսատեսին, թէ այլեւս անհասկացողութիւն մը տեղաւորուած է արեղանին եւ զինք շրջապատող պարզ վանականներուն միջեւ. թէ հասանարար անկարելի պիտի ըլլայ նոյնացման գետին

մը դտնել միմիայն սունկի ու ճաշի մասին մտածող վանականներու եւ Հոգեկան անձկութիւններով, Հարցականներով, տաղանդներով Հարուստ արեղային միջեւ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՐՄԱՐ — Տեսարան քերթիք — Երբորդ տեսարանը վանահօր եւ իշխանուհի տեսարանն է, որ կը պարունակէ երեք մաս՝ իշխանուհի ու գործավար, իշխանուհի ու վանահայր, վանահայր եւ ճերմակատար:

Այս տեսարանով նոր դիմ մը կը բացուի Հանդիսատեսին դիմաց, նոր շրջանակ մը երեւան կու գայ, — իշխանուհին շրջանակը: Հանդիսատեսը անցողակի լեռած է իր անունը, առաջին արարուածին, սակայն մինչեւ երկրորդ արարուածի այս երրորդ տեսարանին վարագոյրին բացուելը՝ ո՛չ մէկ տուեալ ունի կարծելու թէ այդ իշխանուհին մէջտեղ պիտի գայ, թէ ան ալ կարելոք դեր մը ունի խաղալիք: Իշխանուհի գործավարին հետ ունեցած խօսակցութեանց ընթացքին է որ Հանդիսատեսը կը սկսի ծանօթանալ իշխանուհին, ո՛վ է, ինչե՞ր է թողեր իր ետին, ինչո՞ւ է եկեր ցամաքամաս... տեսակ մը ուշացած ցուցահանում տեղի կ'ունենայ, որուն կը յաջորդէ անսպասելի անակնկալ մը՝ իշխանուհիի ու Յովհաննէսի — վանահօր աշխարհական անունը անշուշտ — միջեւ գոյութիւն ունեցած հին սիրոյ մը յայտնութիւնը, որ մարած կարծուած է, սակայն կը թուի թէ անթեղուած է միայն, եւ որուն արդիւնքը կը թուի ըլլալ միջեւ անզամ վանահօր կառուցած եկեղեցին...

Իշխանուհիի ու վանահօր այս տեսարանը եւս, ամբողջական թատերակի մը նման, ունի իր ցուցահանումը, իր զարգացումը, իր պարտադիր տեսարանը (իշխանուհիին պահանջը՝ «Հայր սուրբ, եղի՛ր շիտակ ու պատասխան տուր: Այսօր պէտք է մաքրուին մեր Հաշիւները») եւ իր զագաբնակտը՝ իշխանուհիի քերթիքով կատարուող խոստովանութիւն —

յայտարարութիւնը, «Ո՛չ, չմարեցան այդ կայծերը»:

Տեսարանը նորութիւն մը կը բերէ, եւ առաջ կը տանի Հեղինակին ընդհանուր մտածողութիւնը, զիչ մը աւելի կը շեշտէ, տարբեր տեղ մը երեւան կը բերէ կեանքի կանչին ուժը, Հոգեկան մեղումներուն դժուարին պայթարձ՝ վեր մնալու Համար քնազդներու քաշկուտութիւն: Սակայն, եթէ թատերական արուեստի տեսանկիւնէն քննենք Հարցը, անհրաժեշտ մանրամասնութեամբ ու խտասպանանլութեամբ, իշխանուհիին գոյութիւնը, ապրումները, ՉԱՓՅԵՆ ԱԻՆԵԼԻ ԱՆԱԿՆԿՆԱԿԵՆ Հանդիսատեսին ու ընթացողին Համար, Թատերակին ընկղղնական, ցուցահանման տեսարանները չեն պատրաստած Հանդիսատեսը այդ կարելիութեան, Հաւանականութեան: Որով, բռնադատիկ ձեւով, վերջին վայրկեանին ներս թխուած տեսարանի մը տպաւորութիւնը կը թողուն՝ իբրեւ վանահօր ներաշխարհին մէջ փոթորկումներ առաջացնելու կոչուած արուեստական միջոց: Տեսարանը ինքն իր մէջ առած, որպէս առանձին ամբողջութիւն, զեղեցիկ է անկասկած, եւ շատ լաւ կառուցուած՝ կը կազայ՝ երբ ամբողջութեան հետ կապել կը փորձենք:

Որպէսզի թատերական տեսարան մը արուեստականորէն ներմուծուած չհամարուի, անհրաժեշտութիւն է Հեղինակին Համար, որ յաւելիալ ճիշտով ու աշխատանքով, երբեմն ի գին որոշ տկարացումի, ՅՈՒՅԱՀԱՆՄԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԶԵՆԵՐԿԱՅԵՆ Կարելիութիւններու Համար անհրաժեշտ անմատուցութիւնները, իրենց ապրումներուն Հաւանականութիւնը ցուցադրող բառերով, կամ տողերով: Թատերակի մը ինքնին, իր երկու ժամուան կամ երեք ժամուան տեսողութեամբ իսկ որոշ չափով անբնականութեան վրայ հիմնուած է, քանի որ կեանքի մը, կամ կեանքերու, կամ զէթ տարիներու, օրերու խտացում մը կը կատարուի Հեղինակին կողմէ, որով յաւելիալ խտացում մը ցուցահանման տեսարաններուն չի

կրնար մեասել, կրնայ միայն նպաստել թատերակի կառույցի ուժեղացման, ամբողջական ձևով դնելով հանդիսատեսին դիմաց, արծարծուելիք բոլոր հարցերուն, կամ մտածումներուն սկզբնատարբերը:

Կարելի էր, օրինակի համար, (միայն կ'արձանագրենք՝ առանց յաւակնութիւնը ունենալու թատերադրութեան) առաջին արարուածի մէջ, լաստին վրայ՝ իշխանին ու Սեդայի կողքին դնել նաեւ Մարիամ իշխանուհին ու կողի բերել զայն: Ոչ մէկ անընկան երեւոյթ դոյութիւն պիտի ունենար, ընդհակառակը, իր բացակայութիւնը անընկան է, քանի որ իր եղբայր իշխանն է որ կ'երթայ տեսնելու, իր, Մարիամ իշխանուհի չինել տուած եկեղեցին:

Իր ներկայութիւնը չի բաւեր, անշուշտ, ապագայ տեսարանը ընդունելի, մինչև անգամ որոշ չափով սպասելի դարձնելու համար: Կարելի էր, հետեւեալ նախադասութեան մօտ նախադասութիւն մը դնել իր բերնին մէջ, իշխանի շշտենէի՞ր անգամ մը քրոջ սեղանին, չհամբուրէ՞ր անգամ մը սուրբ սեղանը՞ խօսքէն հտը:

— Իշխանուհի.— Վամահայր հայր սուրբը գիտէ հարկաւ, եիմ օրերէն գիտէ — կրք մեր դիպակիմ մէջ միասին էիմք, այս սքեմը դեռ վրան չառած — թէ եղբայրս որպէս պատրուակ է որ կը գործածէ իր բրաք նկնդեցիմ տեսնելու ու սուրբ սեղանը համարելու փափաքը. ծածկելու համար, այստեղ գեթ, իր արկածախնդրութեամ ծարաւը, իր յանդրգնութիւնը, կեանքի ու կռուի սէրը...

Քիչ հտը, դառն շեշտով մը, իշխանին ուղղուած վանահօր խօսքէն հտը՝ «Եթէ քեզ չես խնայեր, պէտք է խնայես զաւակդ»:

— Իշխանուհի.— Եմայիլ գաւա՞կը... տղամարդը իմայէ իր սիրած էակի՞ն... Վամահայր հայր սուրբը մտոցեր է դարսի աշխարհը, մտոցեր է իր անցնա՞լմ տլ...

Այս ձևով, ընթերցող կամ հանդիսատես, սկիզբէն իսկ տեղեակ կ'ըլլան

ե՛ւ իշխանուհիի զոյութեան, ե՛ւ անցեալի մէջ անոր եւ վանահօր ծանօթ ըլլալուն: Կը ծնի սպասումը, կարելի, հաւանական նորութիւններու, իշխանուհիին հետ կապուած իրադարձութիւններու, ինչ որ հետագային տեղի ունեցող հանդիպումը իշխանուհիի ու վանահօր, առանց բախումը կը վերածէ բնական, ըսպաւելի տեսարանի մը — պարտադիր տեսարան մը՝ իշխանուհիի ու վանահօր շրջանակին համար:

Իր ներկայ ձեւին մէջ իսկ, սակայն, տեսարանը, անգամ մը իւրացնելէ հտը անակնկալը, տաքնապ մը կը գրոհուրէ, կ'առաջացնէ հաւասարակշռութեան խախտում մը, այս անգամ վանահօր դիմ մէջ: Արեղայէն հտը, վանահայրն է հիմա ենթակայ կեանքի յարձակումին: Մէկը կէս մը խելագարած անյուժելի իր տաղնապներուն հետեւնէն, միւսը՝ ծառայած, լարուած կամբով: Այս տեսարանէն հտը թատերակը հեք մը կը ստանայ, իր կշռոյթը կը փոխուի, կ'արագանայ, կը լարուի սպասումը հանդիսատեսներուն, եւ կը ծնի զգայնութիւնը՝ թէ հետո չէ դերագոյն տաղնապը, որ ամէն ինչ պիտի սրբէ տանի, ու վերահաստատէ հաւասարակշռութիւն մը, որ հրեք չի կրնար այլեւս նախկինը ըլլալ:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ.— Տեսարան տառաջիմ.— Վանահօր եւ վարպետին, վանահօր ու արեղային խօսակցութեանց տեսարանը: Աղուոր ու արագընթաց տեսարան մը, կուռ, խորիմաստ տիպով մը: Վանահօր տաղնապի կազմաւորումն է. ներքին հարցականներ կան, մտորումներ... կը խօսի վարպետին հետ արտասերն բաներու մասին, մինչ իր ըսածը ներքին իմաստաւորում մը ունի: Վարպետը չի հասկնար թէ ի՞նչ տեղի կ'ունենայ, ի՞նչ կ'ըսէ վանահայրը ի՞ր իսկ շինածը քանդելու մասին. նոյնիսկ հիւանդ կը կարծէ զայն:

Հանդիսատեսն է միայն որ դիտէ թէ ինչ կ'անցնի կը զառնայ վանահօր հոգիին մէջ: Այս տեսարանով վանահօր դիմը

ստուամ մը կը կատարէ, անոր ներքին տաղանդը կը հասունայ արտգործէն, իր սպարաւորութիւնով ու մտածածնեմով, որով ամբողջ խաղը կ'արագանայ: Միւս կողմէ պարտադիր տեսարան մը կը պատրաստուի հանդիսատեսին համար, որը կը զգայ ատոր կարելիութիւնը, կը սկսի բնական գտնել՝ շինած եկեղեցիէն ձեռք քաշելը, դռնը քանդելը նոյնիսկ:

Արեղայի հետ վանահօր ունեցած գրոյցը աւելի զգալի կը դարձնէ վանահօր մտածականութիւնը, և վարանքը արեղային: Հոս կը սկսի բացայայտ դառնալ երկուքին ճամբաներուն բաժանումը, իրարմէ հեռացումը: Հոս կը պատրաստուի կարելիութիւն մըն ալ, որ կրնայ տեղի ունենալ կամ ոչ - բախում մը արեղային ու վանահօր միջեւ, եթէ արեղան ինքզինք գտնէ, վարանքը փարատի, և անցնի կեանքին: Երկուքն ալ նեղն են, երկուքն ալ կորսնցուցած մաքի ու հոգիի խաղաղութիւնը: Որոշ է այլեւս թէ ընդհանուր է կեանքի յարձակողականը, թէ այսպէս չի կրնար շարունակուիլ, թէ ահաւոր փոթորիկ մը կը սպասէ բոլորին:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ.— Տեսարան երկրորդը.— Արեղայի և Սեղայի տեսարանն է, ուր Սեղա արեղան կը կանչէ զէպի մեհեան, ապա մեհեանական տեսարանն է, կոշտեքի, Հին Աստուածներուն պաշտամունքի տեսարանը, ուր արեղայի ներքին պահանջները երեւան կու գան, ուր կուտով կը իւէ իրաւունքը մասնակցելու կեանքին, և ի վերջոյ կ'երկրպագէ Հին Աստուածներուն:

Տեսարանի վերջաւորութեան, արեղայի մարկումով ու վանականներու իրարանցումով պարզ կը գտնայ, թէ ամբողջ տեսարանը տեսիլք մըն էր, մասհալածանք մը, արեղայի շարժարտող ու զեղին արդիւնքը:

Հակասակ իբր ուղադրաւութեան, որպէս ևս ճանի, գոյներով հարուստ, տեսարանը ամբողջութեամբ վիճելի է թատերական արուեստի անկիւնէն դիտած. այս մասին պիտի անդրադառնանք թա-

տերակի թերիներուն մասին խոսած մասնակ: Տեսարանի բերած միակ նպատակը ամբողջութեան, միակ նորութիւնը, և անշուշտ կարեւոր նորութիւնը, արեղային ենթարկուելն է Հին Աստուածներուն, երկրպագելն է անոնց. այսինքն վերջնական պարտութիւնը կեանքէն. այսինքն հանդիսատեսներուն մեծ մասին սպասած եղբակացութիւնը՝ արեղայի գծին համար:

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ.— Տեսարան երկրորդը.— Վանահօր և իշխանուհիի խոր գումէ իշխանուհիին յատակագիծը պատուելու սքանչելի տեսարանն է:

Տեսարանին այս երկու մասերն ալ, անդամ մը իւրացնելէ հոգ իշխանուհիին գիծը, կը գտնան շատ կարեւոր, անհրաժեշտ ու սպասուած տեսարաններ: Կը ճշդուին դիրքերը, վանահօր մտածականութիւնը գործնականի կը սկսի վերածուիլ, ճգնելով ամէնէն թանկարժէք արարածներն ալ: Կամքերը մաս մաս կը բառիին իրարու, կը ճղմն իրար, կամ ինքզինքնին, կ'արբեանեն դիմացիներն սիրաբ ու կը քաշեն զէպի որոշ կէտ մը, զէպի վերջնական հաշտութեամբ:

ՁՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ.— Տեսարան աստիճան.— Արեղային խուցը, շուրջիններէն կարուած, երազանքի մէջ, գրեթէ դառանցանքի մէջ ինկած արեղան. մէկ երկու վանական՝ որոնք զինք չեն հասկընար, ու կոյր վանականը, գուրդուրտ պահանջկոտ:

Վանահայրը կու գայ արտաքսման միջոց յայտնելու համար իրեն: Սեղան կու գայ քաշելու համար զինքը զէպի ծովը՝ «Լենց որ ջրերը յուզուին...»:

Պարզօրէն զգալի է, տեսանելի, թէ արեղան մեկնած է արդէն մաքով ու հող գիւղով: Իր խոստովանութիւնը՝ երկրպագած ըլլալու Հին Աստուածներուն՝ իբր շրջանակին պարտադիր տեսարանն է. իր տաղանդը լրացած է այլեւս, նոր հոգ ատարակալութիւնն է սր զեռ կը պոկուի, զեռ հաստատուած չէ. գիծը դադարաւորակէտին զեռ հասած չէ, սակայն

հարցը փակուած է իրեն համար, այլևս պարտաւոր է ընտրութիւն մը կատարել, միայն երեք օր ժամանակ ունի:

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ.— Տեսարան Իրկրորդ.— Վանականներու շփոթն ու դժգոհանքը վանաւորմէն, անոր հեղեղեցիէն խռոված ըլլալէն. արեղայի մարմնով ներկայ՝ հոգիով սակայն մեկնած ըլլալը, ակննը ծովու ջրերու ձայնին. վանաւոր ու վանականներու ընդհարումն ու խզումը. վանաւոր ու արեղայի վերջին հանդիպումը, վերջին առիթը, անկարելի առիթը արեղային համար՝ փրկուելու. անխուսափելի մերժումը արեղային կողմէ. նոյնքան անխուսափելի մերժումը վանաւոր կողմէ:

Տեսարանը դրեթէ ամբողջութեամբ վանաւոր կը պատկանի: Այդպէս ալ պէտք է ըլլար. անոր դիմն է միայն որ իր լրումին հասած չէ դեռ, իր պարտադիր տեսարանը ունեցած չէ դեռ: Ազատուած պարտադիր տեսարանը վանականները, այդ թռիչքի անատակ մարդիկը իրենց ճակատագրին լքելն է, եկեղեցին քանդելու որոշումը տալը: Վանաւոր գծի զազաթնակէտն է՝ ձեռք քաշելը եկեղեցին քանդելու մտածումէն, և զգալով որ առանձին մնացած է, միւս մինակը վերելքի դժուարին ճամբան բռնելը:

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ.— Տեսարան Իրկրորդ.— Թատերակին տաղնապները աւարտած են, զազաթնակէտը անցած է արդէն, հանդիսատեսին համար նոր հաւասարակուութեան մը հաստատումն է հիմա որ էականն է, տեսակ մը խաղաղեցումը փոթորկի: Արեղայի անձնապանութեամբ ալ փոթորիկը կը զառքի: Կոյր վանականին ակնններուն հնչող ձայնը ընդ որ հանցիկը աչքերը՝ կը թուի եզրակացութիւն մը ըլլալ. սակայն թատերակին վերջին տողը այդ չէ, հարցական մըն է, որ պատասխանի մը ուժը ունի, կամ դէ՞ վարանքը վերակսելու կը մղէ հանդիսատեսը՝ ընդ որ, ըստած կոյր վանականի բերնով, որ միակ անասանն ու անվարան տիպարն էր ամբողջ թատերակին, մինչև այս վերջին ճակատագրական դէպքը:

Պէտք է ընդգծել, մանաւանդ որ յաջորդ զլուխը կը վերաբերի թատերակին թերիներուն, թէ այս տեսարանի սղզբնաւորութեան դրուած ալիքներու խօսակցութիւնը, ոտանաւորի ձեւով, անլըջութիւն միայն կը բերէ տեսարանին: Բարեբախտաբար բեմադրիչները կը ջընջեն դանձք, առանց վարանքի:

Բ. Փ.

(Շար. 2)

ԴԷՊՐԵՍԻՎ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Պոլիս, Համլէրի Ռերկայացման մը ընթացքին, յանկարծ ուրուակամի դերը խաղցող կ'անձնագտանայ, և սակայն դեռ պէտք է բնի բարձրանայ, երեւի իր գաւկի՞մ՝ Համլէրիմ. թէկուզ և լաւ, ամիսն տեսարան՝ պէտք է ուրուակամ մը բնի էլի:

Ճարտեստ, դերասանները կը համազօն բեմին նստե աշխատակներն մէկը. որ ձերմակ ստան մը առած գլխուն և ուսերուն, դամազ ճայլերով մտնէ բեմ, կամզ տան էջ մը առիք տալու համար Համլէրիմ որ իստի իր հօր ուրուակամին հետ, տղա, մոյ՞նէն զանդաղ ճայլերով գաւրն էլլէ միւս կողմէն:

Վարագոյրը կը բացուի, կը հասնի ուրուակամին տեսարանը, Համլէր իր մեմախօսութիւնը կը կատարէ՝ իստի ուրուակամին ազգելով. ամէն ինչ հիանալի ընթանալ կը բաւի, ուրուակամը ամշարժ է, վեհաշուք, ու յանկարծ... զեկփշու... եկփշու...> փանգտոցները իրար կը յալոգրեն: Ուրուակամը կը փանգտար...:

Ձ. ՄԻՐԱՅԵԱՆ

**ՕՍԱՐ ԽԱՅԵԱՄԸ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՆՈՐ ԼՈՅՍԻ ՏԱԿ**

Օժար Խայեամի կեանքի մասին ըստ այդ տեղեկութիւններ շատ քիչ կան: Նոյնիսկ նրա ծննդեան թուականը ենթադրական է: Գիտենք, որ նա ծնունդ է Նէշարուրում, մի վրանագործի ընտանիքում (որտեղից եւ նրա ԽԱՅԵԱՄ «Վրանագործ» մականունը) որից եւ կարելի է վստահօրէն եզրակացնել, որ Օժարը իր գիտական բարձր ձիրքը պարտական է իր բնատուր տաղանդին եւ ոչ թէ զաւորական կրթութեան:

Փորձել են Խայեամի ծննդեան ճշգրիտ թուականը որոշել աբխազական յիշատակած ժամագէտով (հորոսկոպ): Ըստ այդ տուեալների, Խայեամի հնդիկ թարգմանիչ եւ ստուգարան Սվամի Գովինդա Քիրթան եզրակացնում է որ Խայեամը ծնունդ է 1048 թուի Մայիս 18-ին: Այդ թուականը վերջինն էլ եւ հաստատել է Սովետական Միութեան Գիտական Կուսակցության ակադեմիկոս Սվամի Գովինդա Քիրթանը:

Իր հանրահայտական շարագրութեան յառաջաբանում, Խայեամը յիշատակում է, որ պայմանների ճշման տակ ստիպուած է եղել հեռանալ Նէշարուրից, ճամբորդել Սամարղանդ, ուր նա վայելում էր ժամանակի մեծ հոգեւորական-զատաւորի (ՂԱՁԻ) ձեռնարկի եւ անդադրազանցելի, Դասաւորներ-Դասաւոր Խմամ Արու Քահէրի հովանաւորութեանը: Արու Քահէրի մահուանից յետոյ, Խայեամին հովանաւորում է Բուխարայի Պաղան Շամս ալ-Մուլաքը, իսկ 1074 թուից յետոյ՝ նա արդէն պաշտօնապէս նախադասութեան է մտնում Սելջուկ Սուլթան

Մալէք Շահի մօտ եւ իր ժամանակը նշարում է «Մալէք Շահեան Տոմարացորդի» պատրաստութեան: Դրա համար Խայեամը ուղեւորում է Սֆահան, ուր գտնուում էր Մալէք Շահի արքունիքը: Պատմագիր էրն ալ-Ասիրը գրում է, որ 467 Հէլլի թուին (մ. թ. 1074) Նէշամըլ-Մուլաքը եւ Սուլթան Մալէք Շահը ի մի հաւաքեցին լաւագոյն աստղագէտներին: Այդ աստղագէտները զբաղուեցին նոր տոմարացոյցի պատրաստութեամբ Սուլթան Մալէք Շահի համար կառուցեցին մի աստղադիտարան, որի կառուցմանը մասնակցեցին մեծազոյն աստղագէտները: Օժար էրն էլ իրբահիմ աբխազական, Արու Մոզաֆֆար աբխազարին, Մամուան էրն էլ Նալիր աբխազներին եւ այլք: Մեծ գումարներ ծախուեցին աստղադիտարանի կառուցման համար:

Այդ դիտարանը, որը ղեկավարում էր Խայեամը, գտնուում էր Սֆահանում: Այդտեղ տարուած աշխատանքների արդիւնքն էր նոր տոմարացոյցը (ՁԻՁԷ ՄԱԼԷՊԻ):

1077 թուին Խայեամը աւարտում է ձեռագրութեանը ի ներածութեան մէջիդոսի աշխատանքը: Այս շարագրութեան վերջում, Խայեամը յիշատակել է. «Այս ներմակ թղթի խճրճուած աւարտուեց ի քաղաք... (պահատում է. հաւանարար՝ Սֆահան) այնտեղի զբաղաւորանում, 470 թուի Ջամադի աբ-Օուլտ ամսի վերջին (1077 թուի Դեկտեմբեր կէսին):

Նոյն շրջանին է պատկանում էրՅԷ Սիմայի «Քարդոզի» (ԽՈՒՔԷ) թարգմա-

նութիւնը, որը խոստովանում էր իր անբարեբախտութիւնը և իր անբարեբախտութիւնը։ Այս թարգմանութեան նախաբանում յիշատակուած է՝ «Այսպէս ասաց Տիեզերքում միակ' Օմար էրնէ էրբահիմ ան-նէշարուրի խոստովանումը։ Միջանում մի քանի ընկերներ խնդրեցին ինձնից 472 թուին (մ. թ. 1079) թարգմանել Յովհաննէս, որը յորհեւր է Շէյխ ար-Ռէիս Արու Ալի էրնէ Սիւնան, եւ հանութեամբ ընդունեցի այդ ատաղաբիւր»։

1080 թուին խոստովանում, արգարացնելու համար իր հակա-կղերական դիրքը, Յարս Նահանգի դատաւոր Արու Նասր ան-Նասափիի նամակին պատասխանում է իր «Յաղագս Գորութեան և Կրօնական Պարտականութիւններին» շարադրութեամբ։ Եռասով նա լրացնում է իր այդ շարժականը «ն պատասխան եւեակ հարցերին» յօդուածով, որը, ըստ երեւոյթին, բաւարարում է կղերականներին, և նրանք ժամանակաւորապէս հանգիստ են թողնում խոստովանումը։

Նէզամուլ Մուլլի և Մալէք Եահի մահուանից յետոյ (1092 թուին) խոստովանումը դեռ շարունակուած է կապուած մնալ Սելջուկեան արքունիքին։ Մալէք Եահի մահուամբ աստղաչիտարանը զբոհւում է տեսնական նպաստից և ջիշ յետոյ փակուած է։ Այդ ժամանակ է, որ խոստովանումը դրում է իր յայտնի «Նոմոն-Նոմոն»-ն։ Դա պատմական մի շարադրութիւն է, որով խոստովանումը ցանկանում է հրաւիրել Սելջուկ արքայազների ուշադրութիւնը՝ հին Իրանի աւանդական Ամանորին։ Այս զբոյսում խոստովանումը մանրամասնօրէն բացատրում է արեղականային տոմարացոյցի առաւելութիւնները, Նորուրի տօնակատարութեան հետ կապուած հին ծէսերը և նկարագրում է բազմաթիւ աւանդութիւններ զանազան իրերի և կենդանիների կապակցութեամբ։ Այս պատմութիւնների մէջ, պատմական փաստերի, բժշկական խորհուրդների և լուրջ գիտությունների կողքին՝ զրուներում են բազմաթիւ առասպելներ, հեքիաթներ և սխալ բացատրութիւններ։ Առասպելների և մտացածին պատմու-

թիւնների գոյութիւնը «Նորուր Նամու»-ում շատերին յանդեցրել է այն եզրակացութեան, որ այդ աշխատութիւնը չէր կարող արդասիրը լինել խոստովանումի պէս լուրջ մի գիտնականի և փիլիսոփայի մտքի։ Բայց չպիտի մոռանալ, որ Մալէ-Նասրեան գիտական գրականութեան մէջ այդ երեւոյթը եղակի չէ, որովհետեւ մի սահման գոյութիւն չունի գիտական փաստի և աւանդական ամուսնի մէջ։ այդ բանին յանդիպում ենք ինչպէս արեւելեան, նոյնպէս և արեւմտեան միջնադարեան գիտական գրականութեան մէջ։ Դա հաւանաբար արուած էր համեմելու համար գրութեան չոր բովանդակութիւնը և այդ մարտիի զարմանելու համար օրուայ աշխուսակների համար, որոնք մեծամասնաբար անզբազէտներ էին։

Մալէք Եահի յաջողեցնելով Քորթան խոստովանումը (Մալէք Եահի կնոջ), Սուլթան Բարդուէյուդի և Մուհամմադի թագաւորութեան շրջանները նպատակաւ չէն եղել խոստովանումը։ Նա վերադառնում է Պարսսան և հաստատուած է Մարուում։

Ըստ ան-Նէզամի աւ-Սամարղանդիի մի պատմութեան, Օմար խոստովանումը, 1114 թուին (Նէշրի 508) գտնուած էր Մարուում, ուր ծառայում էր Սուլթան Մահմուդի և նրա համար աստղաբանական և օդերեւութարանական գուշակութիւններ էր անում...

Սելջուկ վերջին հզօր Սուլթան Սանջարը նոյնպէս չէր սիրում խոստովանումը։ Հոգեւորական դասը, բնականաբար, հետեւում էր ժամանակի պայմաններին։ Քանի գեռ խոստովանումը գտնուած էր այս կամ այն հզօր անձնաւորութեան կամ թագաւորի հովանաւորութեան ներքոյ՝ չէր համարձակուած բացայայտ կերպով մեղադրել նրան հակա-կղերականութեան մէջ։ Բայց հենց որ փոխուած էր արքունիքի դիրքը խոստովանումը հանգէպ կղերականները քինախնդիր կերպով թափուած էին հրապարակ և սկսում էին հալածել մեծ փիլիսոփային։ խոստովանումի կեանքի վերջին տարիներում այդ հալածանքն-

րը մի աստիճանի էին հասել, որ նա, ինքնարդարացման համար, ստիպուած է լինում ուխտի գնալ Մեքքէ: Դրա մասին Ջամալ էդ-Ռին էրն ալ-Ղէֆթին իր «Գիտնականների Պատմագրութեան» մէջ գրում է:

«Երբ ժամանակակիցները այսպէս-ցին նրա հաւատքը եւ բացայայտեցին այն գաղտնիքները, որոնց նա թաղցնում էր, նա վախեցաւ իր արեան յեղումից եւ սանձեց իր լիզուն եւ գրիչը եւ ուխտի ուղեւորուեց իր սեփական կեանքի վախից եւ ոչ թէ աստուածավախութիւնի... Երբ նա հասաւ Բաղդադ, նրա ծօռ շտապեցին զաղափարակիցները Հին դիսուլթեան մէջ, բայց նա փակեց իր դուռը նրանց առջ փականքով մեղանշման... Ինչ որ վերադարձաւ իր քաղաքը, առաւօտ ու գիշեր յստախելով աշօթքի եւ երկրպագութեան վայրերը եւ թաղցնելով իր զաղտնիքները, որոնք անխուսափելիորէն կը յայտնադարձուէին մի օր: Նրան հաւասարը չկար աստափառութեան եւ փիլիսոփայութեան մէջ եւ այդ մարդու նա օրինակ էր Հանդիսանում օտարներին: Օհ, իցէ շնորհուած լինէր նրան ունակութիւն՝ խուսափելու մեղանշումներից եւ գայթակղութիւններից...»:

»

Տարբեր թուականներ են բերուած Քայնամի մահուան համար: Այդ տեսակէտից ամենավստահելի սկզբնաղբիւրը Նէզամի Արուզի Սամարղանդիի «Չախար Մաղալէ»-ն է, ուր Հեղինակը նրա մահուան թիւը նշանակում է 1131-ը (Հէջրի 526): Չնայած այս թուականը դեռեւս վերջնականապէս չի ընդունուել բոլոր էրանագէտների կողմից, բայց դա ամենից աւելի հաւանականն է թւում: 1961 թուին Հրատարակուած ասերէն «Օմար Խայնամի Եարադրութիւնները» գրքի նախաբանում, որը պատկանում է Բ. Ա. Ռազենֆէլդի եւ Ա. Գ. Իւչիւեիչի պէս մեծ հեղինակութիւնների գրչին, Քայ-

նամի մահուան թուականը, աստարագիտական վերլուծումների հիման վրայ, արուած է 1131 թուի Գեկտեմբեր 4-ը, մի բան՝ որ համապատասխանում է Հէջրի 526 թուի Մահարամ ամսի 12-ին: Պարսիկ բանասերներ, տարբեր աղբիւրների դիմելով, այդ թուականը 10 ասորի յետ են դրում:

Քայնամի մահուան մասին Հետեւեալն է գրում ալ-Քէյխաղիմ, պատմելով Քայնամի ջրով ամուսնու, Մահամադ ալ-Բազդադիի բերնից:

«Մի օր, նա մտքում էր աստմեները սովեայ փորձելով եւ սաւազութեամբ կարգում էր էրնէ Մինայի «Յաղագս Բուժման» (Աշ-Շաֆա) գիրքը: Երբ նա հասաւ այն բաժնին, ուր խօսուած է միակ եւ բազում էակների մասին, զրեց աստափորձը երկու էջերի միջեւ եւ ասաց. «Կանչիր վկաններին, որպէսզի կըտակա պատրաստեմ»: Յետոյ նա ստրիկանցից, աղօթեց եւ դրանից յետոյ չկերաւ եւ չսեց: Երբ նա աւարտեց երեկոյան վերջին աղօթքը, խոնարհուեց մինչև գետին եւ դէմքը հողին դարձրած՝ ասաց. «Ո՛վ Տէ՛ր, Դ՛ՈՒ ԳԻՏԵՍՄ, Ո՛ր ԵՍ ՔԵՁ ԱՇԵՆԱՏԵՑԻ ՃԱՆԱՉԵՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՍ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ՆԵՐՈՒՐ ԻՆՁ, ՔԱՆՁԻ ԱՅՆ՝ ԻՆՁ ՔՈ ՄԱՍԻՆ ԳԻՏԵՄ, ԴԱ ԻՄ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ Է ԴԷՊԻ ՔԵՁ»:

Ըստ սկզբնաղբիւրների տուած տեղեկութիւնների, Քայնամը երբեք չէ յակուած չէ եղել բնասնեկան կեանքի եւ իրենից զաւակ չի թողել:

Քայնամը մեռել եւ թաղուել է Նէշաբուրում եւ նրա գերեզմանը, որի վերայ վերջերս կառուցուեց Հոյակապ մի դամբարան, գտնուած է Էմամ Մահրոբի կոչուած մէկի գերեզմանի կողքին, աստարթախիւս եւ գեղեցիկ մի պարտէզում:

ՆԱԽՆԱԳՈՑՆ ՅԵՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽԱՅԵԱՄԻ ՄԱՍԻՆ-

Պարսկերէն կենսագրական Հնագոյն աղբիւրը, «ՉԱՀԱՐ ՄԱՂԱԼԵՆ» (ՉՈՐՄ ՃԱՌՔ) երկու տասնմէն պատմութիւն-

ներ նուիրել է Օմար Քայեսամին, որին նա դասել է անուանի աստղագետների շարքը, առանց որեւէ ակնարկ անելու նրա բանաստեղծութիւններին:

Դրանք հետեւեալ երկու պատմութիւններն են.

տուրքերն Ապացոյց Օմարը, ես չէի նկատել նրա մէջ որեւէ հաւատք զէպի աստղագիտական գուշակութիւնները. ոչ էլ ես տեսի կամ լսել կամ այլ մեծ գիտնականների մասին, որոնք Հաւատային այդ բանին»:

Ա. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հեփթաթ)

«Հէջրի 506 թուին (1112-13) Քալէ իմամ Օմար Քայեսամին եւ Քալէ իմամ Մոգաֆֆար Աֆարադին իջեանել էին Բայի քաղաքի ստրիավաճառների թաղում, Ամիր Աբու Ասադի յարկի տակ եւ ես միացայ նրանց ի ծառայութիւն: Ընկերական այդ հաւաքոյթում լսեցի, որ ձշմարտութեան Ապացոյց Օմարը ասաց. «Ո՞ր չիբիմը մի տեղ կը լինի, որ ամէն գարուն հիւսիսի քամին իմ վրայ երկու անգամ ծաղիկ կը ցանի»: Այդ խօսքը ինձ անկարելի թուաց եւ գիտէի թէ Օմարի պէս մէկը ի զուր չէր յիսորտայ: Երբ ալլսէյն թուականին (Հէջրի 530), մ. թ. 1135-36) Նէշարուր ժամանեցի, չորս տարի էր արդէն, որ այդ մեծ մարդը թագցորել էր զէմըը փոշու քողի տակ եւ որր էր միացել անցողիկ աշխարհը, եւ քանի որ նա վարպետի դիրք ունէր իմ հանդէպ, մի Աբրաթ գնացի նրա դամբանին ուխտի եւ ինձ հետ տարայ մէկին, որպէս ուղեցոյց: Նա ինձ դուրս տարաւ Հէրէյի գերեզմանատունը եւ երբ ձախ դարձայ՝ տեսայ նրա չիբիմը մի պարտէզի պատի տակ եւ տանձենիներն ու զնդձենիները դուրս էին պարզել այդ պարտէզից եւ այնքան ծաղկեկոկոն թերթիկներ էին թափել նրա հողի վրայ, որ նրա չիբիմը ծածկուել էր ծաղիկների տակ եւ ես յիշեցի այն խօսքը, որ Բալխում լսել էի նրա բերնից: Սկսեցի լացել, քանի որ աշխարհիս երեսին եւ մարդկային այս բնակարանում գեռ չէի տեսել նրա պէս մէկին: Թող Բարձրագոյն եւ Օրհնեալ Արարիչը ողորմի նրան իր Թապտիթամբ եւ Ծնորհով»:

«Ըն չնայած ես վկայ եղայ այդ նախադուշակութեան, որ արել էր ձշմարտ-

Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

508 թուի ձմրան (մ. թ. 1114-15) Թաղաուորը (Հաւանաբար Սուլթան Մուհամադ կամ Սուլթան Սանջարը) ուղարկեց իր մանկաւիկներից մէկին Մարւ, նախաբարպետ Մազրուդ Դին Մուհամադը. իրնէ ալ Մոգաֆֆարի մօտ - Աստուծոյ Ողորմութիւնը եղիցի նրա վերայ -, հրամայելով նրան ասել Քալէ իմամ Օմարին որ ընտրի բարեպատե՛հ մի ժամ որսի ելնելու համար, այնպէս որ անձրեւոտ կամ ձիւնոտ եղանակ չլինի: Քանզի Քալէ իմամ Օմարը դունուում էր նախարարի մօտ եւ քնակում էր նրա յարկի տակ:

Աւրեմն նախարարը պատգամ յղեց եւ կանչեց նրան եւ պատմեց եղելութիւնը: Քալէն հեռացաւ եւ երկու օր քննեց այդ խնդիրը եւ ուշադիր ընտրութիւն կատարեց. եւ նա ինքը զնայ եւ հսկողութեան տակ առաւ Աբջայի պատրաստութիւնները, իր որոշած բարեպատե՛հ ժամին: Երբ Աբջան հեծաւ իր ձին եւ զիչ ճանապարհ էր կտրել, երկինքը ծածկուեց ամպերով, բարձրացաւ ուժեղ մի քամի եւ դրան հետեւից ձին եւ մառախուղ: Բոլոր ներկաները սկսեցին ծիծաղել եւ Աբջան ցանկանում էր վերադառնալ. բայց Քալէ իմամ Օմարը ասաց. «Մի անհանգստացիր, քանզի զիչ յետոյ կը վարատուեն այս ամպերը եւ հետագայ հինգ օրերի ընթացքում կաթիլ իսկ անձրեւ չի տեղայ»: Հետեւաբար թաղաուորը շարունակեց ճամբան եւ ամպերը ցրուեցին եւ հետագայ հինգ օրերի ընթացքում կաթիլ իսկ անձրեւ չտեղաց եւ ամպ իսկ չերեւաց երկնքում:

Բայց նախադուշակութեանը աստղերի միջոցով, չնայած ընդունուած զիտութիւն է, չի կարելի վստահել եւ ինչ

որ աստղագէտները կանխագուշակեն՝ դրա լրումը պիտի թողնեն ճակատագրին»:

Արուզին որան յաջորդող Պատմութեան մէջ նորից յիշում է Օմարի անունը, երբ պատմում է թէ ինչպէս Մալէք Շահի աստղագէտները, ապացուցելու համար իրենց կանխագուշակութեան ճշմարտութիւնը, Թագաւորից խնդրում են որ իրենց յայտարարութիւնները գրի առնելով՝ ուղարկի Ռորասան եւ Հարցնի Խալէ Էմամ Օմարի կարծիքը դրանց վերաբերմամբ. դա բաւական է լինում, որ Մալէք Շահը համոզուի իր աստղագէտների գուշակութիւնների ճշմարտութեան մէջ:

Սա Խայեամի միակ ժամանակակից վկայութիւնն է, ուր խօսուում է նրա մասին միմիայն որպէս հաշակաւոր մի աստղարաշխի եւ բոլորովին չեն յիշում նրա բանաստեղծութիւնները:

Մլանից յետոյ, մօտ 100 տարի, ըսկըղնադքիւրները լուռ են Օմար Խայեամի վերաբերեալ: Ձեւհար Մաղալէից յետոյ առաջին անգամ հանգիպում ենք Խայեամի անունն 1223 թուին գըրուած «Մէրաւալ ոլ Երախ»-ում որը պատկանում է Սուֆի գրող Նաջմադ Դիմ Ռազիի գրչին: Այս Սուֆի խորհրդապատկերը Օմարին անուանում է «գոյրախ մի փելիստփայ, անկրօն եւ նիւթապաշտ» եւ այդ ապացուցելու համար օրինակ է բերում նրա երկու քառեակները (առաջին յիշատակութիւն Խայեամի քառեակներին), որոնք զայսպէս ըստ են շփոթութեան եւ սխալականութեան ծայրայեղութիւնը: Այս մատենում հետեւեալ երկու քառեակներն են յիշուած, որոնք պատկանում են այն հազուագիւտ քառեակների թւին, որոնց պատկանելիութիւնը Խայեամին անուրանալի է:

Ժամանակն ուր լինում է գայմ ու երթայն ամէնի -

Այդ քաւալի ոչ բոկիզըմ ու ոչ վախճանն է յայտնի:

Ոչ ոք դեռուա աշխարհում մեզ չըպատմեց անխալ,

Թէ արտեղից է մեր գայմ, եւ դէպի օւր՝ մեր երթայն:

Նա, որ բնութեամ պատկերը գծեց, ինչու՞ է ջնջում դրամ ամէն օր. Եթէ լաւ է դա, ինչու՞ կործանել, Իսկ եթէ վատ է, ո՞վ է մեղաւոր:

(Թրգմ. Յ. Միրզայեանի)

Հետագայ յիշատակութեան հանդէպում ենք ալ-Լէֆթիի «Գիտումների Պատմութեան» մէջ, որը գրուել է 13-րդ դարու երկրորդ քառորդում: Օմարն այստեղ ներկայացուած է որպէս յոյն փիլիսոփայութեան հետեւորդ, որը հակադրում է իսլամական փիլիսոփայութեան: Այստեղ եւս Խայեամը ներկայացուած է որպէս «բացառիկ գիտուն աստղագիտութեան եւ փիլիսոփայութեան մէջ» բայց չափազանց ազատամիտ մէկը, որը իր լեզուն եւ գրիչը սանձում էր մի միայն իր կաշուի վախից: Ալ-Լէֆթին անկասկած է, որ հետագայում Սուֆիները Խայեամի քերթուածների արտաքին բնոյթի մէջ որչա՞նչ նմանութիւններ գտան իրենց վարդապետութեան հետ եւ վերլուծում էին այդ քերթուածները իրենց դադարի հաւաքութիւններում «մինչդեռ այդ քառեակների ներքին միտքը խայթող օժիւր էին կրօնական Օրէնքների համար»: Այս յիշատակութիւնը վերջանում է Օմարի արարերէն չորս քերթուածների մէջբերումով, որոնք մասն են կազմում ընդարձակ մի բանաստեղծութեան:

Ալ-Շահրազուրիի «Նուհաթուլ Ար-Ֆան»-ը նոյնպէս գրուել է 13-րդ դարում եւ այդ մատենում Յ էլ Նուիբուած է Օմարին: Օմարը այստեղ նկարագրուած է որպէս էրնէ Մինայի հետեւորդ, ջղաջին, անհիւրընկալ եւ խտտաբարոյ մարդ: Խայեամի յիշողութիւնը այնքան ուժեղ է եղել, որ Սֆահանում կարողաւով մի գիրք եօթ անգամ, նէշարուրում նա վերաբարտադրում է այդ գիրքը բառ առ բառ: Նա ուսումնասիրել էր Ղարսը եւ տիրապետում էր արաբերէնի: Ալ-Շահրազուրին էլ, իր գրքի պարսկերէն բնա-

գրում, երկու օրինակ է բերում Պայեամի քառակներին, որոնցից մէկն է .

Պատմում եմ քեզ, որ չիցէ մնաւ արտիս անձամբ,

Եւ որ ձանձրոյք չուենա՝ տեա իմ խօսքն համառօտ .

Ակրոյ կապուած արտիս հետ ես հոգի տակ կը տանեմ,

Եւ սիրոյդ հետ միասեղ՝ գլուխս հոգից կը հանեմ :

(Քրդմ. Յ. Միրզայեանի)

Փամանակագրական կարգով, Հետադայ մատենանք ուր յիշուած է Պայեամը, դա այլ-Ղազարիի Ասարու Բէլագո-ումն է (Աշխարհի Գոթողները) : Այստեղ նմանակէս Օմարը յիշուած է որպէս «մարպետ ամենայն փիլիսոփայութեանց եւ յատկապէս թուարանագիտութեան մէջ» :

14-րդ դարու կարեւոր աղբիւրներից մէկն է Ռաշիդուդ Դիմ Ֆազլիլահի «Ճամի»-ն որ թաւարիլիքը որը Մոնղոլների պատմագրութիւնը եւ Իրանի արձակագրական կոթողներից մէկն է : Այստեղ է, որ առաջին անգամ յիշուած է Երեք Ընկերների Նշանակաւոր պատմութիւնը, որը Օմար Պայեամին վերաբերող ամենահետաքրքիր աւանդութիւնն է : Պատմութիւնը Հետեւեալն է .

«Նշանակաւոր Մուլքի 1) եւ Հասան Սարբաւի 2) միջեւ դոյութիւն ունեցող թըլ-նամութեան եւ անվստահութեան պատճառը նրանումն էր, որ երբ նրանք Օմար Պայեամի Հետ միասին յաճախում էին

Նշարուրի դպրոցներից մէկը, պատանեկան ոգեւորութեամբ, մտերիմ ընկերութեան հիմքեր դրեցին, որը սրբազոր-ծեցին իրենց սեփական արեամբ եւ Հանդիսաւոր երդումով, ըստ որի եթէ երբեքից նրանցից մէկն ու մէկը Հասանն բարձր դիրքի, պաշտպանեն եւ օգնեն միմեանց :

«Արդ, այնպէս եղաւ, որ պարագաների բերմամբ, որը մանրամասնօրէն նկարագրուած է «Սելջուկ Հարստութեան Պատմութեան» մէջ, Նշանակաւոր Մուլքը Հասան նախարարապետի պաշտօնին : Օմար Պայեամը ներկայացաւ նրան եւ յիշեցրեց իրենց պատանեկան շրջանի երդումը : Նշանակաւոր Մուլքը, ընդունելով այդ համաձայն երդման առկայութիւնը, սասց . «Ես տալիս եմ քեզ Նշարուրի եւ նրա շրջակայքի նահանգապետութիւնը» : Բայց Օմարը, որը մեծ մարդ էր, եւ առաւել գրան՝ փիլիսոփայ եւ իմաստուն, պատասխանեց . «Ես չեմ ցանկանում կառավարել մի նահանգ կամ բանցնել իմ Հեղինակութիւնը օտար մարդկանց վրայ : Աւելի լաւ կը լինէր եթէ ինձ Համար մի թոշակ նշանակէիր» : Հետեւաբար Նշանակաւոր Մուլքը նշանակեց նրան վճարել տաս հազար դինար Նշարուրի գանձարանից, որ պիտի արուէր նրան ամէն տարի, առանց տուրքի կամ Հարկի պահանջման» :

Պատմութիւնը շարունակուած է Հասան Սարբաւի այցելութեամբ Նշանակաւոր Մուլքին : Հասան Սարբաւը (Իսմաիլիների «Էլեոների ծերունին» որին վիճակուած էր դառնալ այս շրջանի քաղաքական ամենաազդեցիկ գէմքերից մէկը) փառասենչ մէկը լինելով, չի ընդունում Ռէյի կամ Աֆանի նահանգապետութիւնը այլ բարձր պատօն է պահանջում արքունիքում : Ապա նա չարաշահուած է իր դիրքը, աշխատելով գրաւել իր բարեբաւրի «Էլեոների ծերունին», որին վիճակուած բայց ձախողելով իր ծրագիրների մէջ, ստիպուած է լինում փախչել Պորասանից եւ ապաւինել Գահիրէ, ուր նա ընդունուած է Իսմաիլի աղանդի շարքերը եւ վերադառնալով Իրան, դրաւում է Ալամուբը եւ բազմաթիւ այլ ամբողջուած դըր-

1) Նշանակաւոր Մուլք Սելջուկ հարստութեան «Նեմազն» թախարարութեան էր, որը 50 տարի պաշտօնավարեց եւ փաստօրէն մեծակ կառավարեց այդ ձեւից կայսրութիւնը : Նա ուղանեց Համալի պաշտօնատեղիի «Նեմազն» 1062 թուին :

2) Հասան Սարբաւը Համալի պաշտօնի գերագոյն պետ էր եւ զեկավարն էր Արեւիկի Միջնադարեան ամենայայտնի սեպեհկալամ կազմակերպութեան : Արեւմտեփն թա ծամօր է «Էլեոների ծերունին» անունով եւ թա սեպեհի ինքնաբերական ամենայայտնի շարքերից կամ յախճապետ «Նեմազն» անունով :

եակներ: Նրա ահարկիչներէ ձեռքով է, որ սպանուած է Նէզամուլ Մուլքը եւ դրանով վերջ է դրնում Սելջուկեան հարբատութեան ոսկէդարը:

Պատմական ճշմարտութիւնից հետոս է այս տառապելը, քանի որ գործող անձանց ծննդեան թուականները չեն համապատասխանում իրար: Բայց դրա մէջ կայ նաեւ իրականութեան մի սաղմ, որը դեռ լիովին չի ուսումնասիրուել: Դրան է, որ Օմար Պայեամը եւ Հասան Սարբազը համարեա թէ հասակակից են հղիլ եւ հաւանական է որ դասընկերներ եղած լինեն մի ա՛յլ նախարարի՝ Անուշիրւան Էրնէ Պալիդի հետ, որը ՀԱՇԻՇԻՆՏԻՆՏԻ մասին գրած իր գրքում, յիշատակում է իր դասընկերներից մէկին որը զեկից էր Բէյից, եւ ճամբորդելուց յետոյ ամբողջ աշխարհում, դարձել է համայնիւնների ղեկավար: Զփազանց հաւանական է, որ դա Հասան Սարբազը լինի:

Հանդիպում ենք մի ուրիշ հետաքրքիր պատմութեան «Մարիխէ Ալֆի» (Պատմագրութիւն Հազարեակի) մէջ, որի հիման վրայ կարելի է հզարակացնել որ Պայեամը հաւատում էր հողեփոխութեան (մի րան՝ որ անդադար կրկնում է նրա բանաստեղծութիւնների մէջ տարբեր ձեւերի տակ):

«Բազմաթիւ յիշատակութիւններից յայտնում է, որ նա (Պայեամը) հետեւորդն էր հողեփոխութեան վարդապետութեան: Պատմում են, որ Նէշարուբում կար Հին մի Դպրոց, որի նորոգութեան համար էջերի վրայ բարձած աղիւններ էին բերում: Մի օր, երբ իմաստունը (ՀԱՔԻՄԷԷ) Քայլում էր մի խումբ ուսանողների հետ, աւանակներից մէկը ոչ մի պայմանով չէր համաձայնում մտնել Դպրոց: Երբ Օմարը այդ տեսաւ, ժպտաց, մտնեցաւ աւանակին եւ յանդարտաւորից հետեւալ քառեակը արասանեց.

Ով ոգի, զնացած եւ վարադարձած եւ ղեւ աննարակ,
Զնրուած անունդ չի պարունա-

կում եւ ոչ մի տեսրակ,
Հետայլիդ բուսել աւ պոչ է դարձել մորուսդ տես,
Իսկ եղունգներդ միացել իրար, դարձել եմ տրակ:

Այս աւանակը մտաւ դպրոց եւ ուսանողները Օմարից հարցրին դրա պատճառը: Նա պատասխանեց. «Այն ոգին, որ այժմ մտել է այս աւանակի կազապարի մէջ, նախապէս բնակւում էր այս դպրոցի ուսուցիչներից մէկի մարմնում, հետեւաբար նա մերժում էր մտնել դպրոց բայց երբ իմացաւ որ գործակիցները ճանաչել են իրեն՝ ստիպուած եղաւ համաձայնուել եւ ներս գնալ»:

Այս փոքրիկ անեկդուսը զեղեցիկ կերպով արտայայտում է Օմարի տաճած արհամարհանքը իր ժամանակի իմաստակների վերաբերմամբ:

ԽԱՅԵԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Մենք այստեղ հրկար կանգ առնել չենք կարող Պայեամի գիտական աշխատանքների վրայ: Բայց քանի որ դրանց թիւը եւ բովանդակութիւնը անծանօթ է հայ ընթերցողների մեծամասնութեան, օգտուելով Բ. Ա. Ռոզենֆելդի եւ Ա. Պ. Իւլկեւիչի վերում յիշած ուսումնասիրութիւնից, այստեղ տալիս ենք այդ աշխատութիւնների կրճատ ցուցակը, առանց մանրամասնանալու նրանց բովանդակութեան վրայ: Այդ գիտականփիլիսոփայական հրկերի լրիւ թիւը չուրջ 15-ի է հասնում: Դրանցից կարեւոր տեղ են գրաւում.

- 1.— Եարադրութիւն յազազս հանրահարուական եւ ալ՝ ժողաբայա ինդիքների ապացուցման (արաբերէն):
- 2.— Բացատրութիւններ յազազս զժուարութեանց Եւկլիդեսի գրքի (հրկարաշարական երկ, արաբերէն):
- 3.— Կլեոք իմաստութեան (միզան ալ Հէքամ) Փիլիկայի մասին:
- 4.— Եարադրութիւն յազազս Գոյութեան եւ Պարտականութիւնների (փիլիսոփայական, արաբերէն):
- 5.— Պատասխան եռեակ հարցերի (փիլիսոփայական, արաբերէն):

6.- Իմացականութեան ըոյսը Ընդհանուր գիտութեան վերաբերմամբ (փիլիսոփայական, արարերէն) :

7.- Շարադրութիւն յաղագս Գոյութեան (փիլիսոփայական, արարերէն) :

8.- Մալէքշահեան ատոյադատական ցուցատախտակներ (Զիլէ Մալէքշահ) :

9.- Շարադրութիւն յաղագս զոյութեան ընդհանրութեան (փիլիսոփայական, արարերէն) :

10.- Նորուգ-Նամէ, պատմական շարադրութիւն, պարսկերէն

Բացի վերի տասը աշխատանքներից, գոյութիւն ունի նաև հանրահաշուական անվերնագիր մի ձեռագիր եւ շորս տարբեր թուարանպիտական, երաժշտական, աշխարհագրական եւ Ֆիզիկական շարադրութիւններ, որոնք յիշուել են սկզբնաղբերներում, բայց որոնց ձեռագրերը չեն գտնուել դեռեւս :

Այս արձակ երկերից մեզ հետաքրքրում է միայն ինչպե՞մի ՎՆՈՐՈՒՁ ՆԱՄԷ՝-ն, «Գիրք Ամանորի» որը պատմադրական, բժշկական, ազգագրական և առասպելաբանական գիտելիքների մի ժողովածու է, գրուած զեղեցիկ եւ յղկուած պարսկերէնով : Այս գրքից թարգմանաբար տալիս ենք երկու հատուած 3), առաջինը նուիրուած գինուն եւ երկրորդը «զեղեցիկներին» : Մրանով աւելի եւս պարզում է ինչպե՞մի զանաւաններ մէջ արտայայտուած գինու, հանձնքի եւ զեղեցկութեան վերաբերմամբ արուած յիշատակութիւնները, որոնց մեծ մասամբ պիտի ընդունել բառացիօրէն : Այս արձակ մտքերը շեշտում են այն հանգամանքը, որ ինչպե՞մի զգինու» կամ «զեղեցկուհուհու» մասին գրելիս՝ հասկացել է պարզապէս ըմպելի գինին եւ շոշափելի զեղեցկութիւնը, առանց խորանալու որեւէ խորհրդապաշտական նկատառումների մէջ :

3) Քարգմանքիւնը կտտարւել է Մոյրաբա Միճուկի հրատարակած «Նորուգ Նամէ»ից, որը պարսկալուծ է ընդարձակ եւ հետաքրքիր Եմոքագրութիւններ (Թեհրան, 1933) :

1. «ԵՍՍՐԳ ԳԻՆՈՒՆ ԾԳՈՒՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

«...Պորաթափանց մարդիկ գինին անուանում են խիզախ մարդու փորձաբար : Այլէ՛ ալ անուանում են իմացականութեան քննազատ, ոմանք - գիտութեան շափանիչ, ոմանք - կշիռ տաղանդի : Մեծ մարդիկ գինին կոչում են ցուրտ ամոքիլ իսկ սմանք - ապաքինութիւն վշտերի : Ով որ խմի մաքուր գինուց հինգ բաժակ, կը ցուցադրի իր ներսում թաքնուած չարն ու բարին, ամբողջ իր էութիւնը : Գինին անծանօթին շարձընում է ընկեր ու ընկերներին բոլորակում է իրար շուրջ : Գինին շատ հանելիք մի ըմպելի է : աշխարհի բոլոր ուտելիքները, լինեն դրանք ճարպոտ, ջաղջր, թթուաչ՝ յղփայնում են մարդու, իսկ յղփայնումից յետոյ կերածը դառնում է զգուշի : Մինչդեռ որքան էլ որ խմես գինի՝ կը ցանկանաս աւելին : Մարդը չի յագնում գինով, ջանդի դա արքան է ըմպելիների : Դրախտում շատ կան բարիքներ, բայց դրանցից մեծագոյնը գինին է եւ եթէ այդպէս չլինէր՝ Աստուած չէր ընտրի գինին որպէս իր դրախտի ըմպելին, ջանդի Աստուծն են պատկանում զոյգ աշխարհների համայն բարիքները : Ինչպէս դա յիշուած է Գրքում : «Տէրը նրանց տուեց յստակ եւ մաքուր գինի» եւ մի այլ տեղ ասուած է. «Իրա օգտակար է մարդկանց համար, բայց նրա մեղքը գերազանցում է օգուտներին» : Մարդկութեան համար օգտակար է գինին, բայց մեղքը խմելու՝ գերազանցում է օգուտներին : Արդ, իմաստունը իմում է այնպէս, որ դրա հանձնքը առաւել է լինում մեղքից եւ որպէսզի շտանջուի՝ կրկնուող փորձերով նա իր հոգին հասցընում է մի կատարելութեան, որ գինեխումի առաջին վայրկեանից մինչեւ վերջին վայրկեանը նա ինքնազուսպ է, շարիք չի պատճառում ուրիշներին, նրանից ծայր չի տալիս որեւէ կոպիտ խօսք կամ ամբարիշտ արարք, այլ նրա շուրջ տարածում է միայն բարութիւն եւ ուրախութիւն : Երբ մէկը հասնի այդ աստիճանին՝ նա իրաւունք կ'ունենայ խրմեղում :

2. «ԽՕՍԻԲ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

«...իմաստունները գեղեցիկ դէմքը համարում են դերագոյն երջանկութիւն եւ այդ տեսնելը՝ լաւ նշանակ... Դա նշումն է մի հազուադէպ, փակուած անուշահոտութիւններով լեցուն պահարանում եւ երբ զա երիւան է գալիս, անուշ է բուրբի համար: Դա նմանում է արեւի ցուքին, ընկած ջրի վրայ... Գեղեցկութիւնը երգել են բոլոր լեզուներով եւ զա հանելի է ամէնքին:»

«Այնպէս շատ կան գեղեցկութիւններ, որոնց տեսքը զուարճացնում է սրտերը եւ թարմացնում է թնութիւնը. բայց ոչինչ չի կարող գերազանցել գեղեցիկ դէմքին. գեղեցիկ դէմքը ծնունդ է տալիս այնպիսի մի ցնծութեան, թէ մի ուրախութիւն գրան հասարակել չի կարող: Ասում են, որ գեղեցիկ դէմքը պատճառն է աշխարհի երջանկութեան, իսկ երբ գեղեցիկ արտաքինը զուգորդւում է բարի բնաւորութեան՝ երջանկութիւնը հասնում է ծայրագոյն աստիճանի: Երբ ծայրագոյն աստիճանով եւ ներքինով՝ նա սիրելիան է Աստուծոյ եւ մարդկանց... Երբ նստում ես գեղեցիկ մէկի մօտ, կիսնքը լցում է ցնծութեամբ, ամոքում են վշտերը եւ ամէն գործ բարի ընթացք է ստանում: Երբ տեսնում ես գեղադէմ մէկին, դիտում ես նրան ակնածանքով, քանզի գեղեցիկը՝ լրումն է կենաց բոլոր հանգիստների: Ասում են, որ գեղեցիկ դէմքը երիտասարդացնում է ծերունուն, մանկացնում է երիտասարդին ու մանուկին փոխում է հրեշտակի: Մարդարէն՝ Պաղատութիւն եւ Փառք նրա անուան՝ ասել է. «Պահանջեցէ գեղեցիկներից այն ամէնը՝ ինչ որ պէտք է ձեզ: Իւրաքանչիւր էակ յատկանշական մի անուն է դրել գեղեցիկ դէմքի վրայ. ումանք զա կոչում են սիրոյ հրապարակութեանը՝ քանզի թանկ է կամ պարտէզ ոգեկոյման, արարչութեան գեղուն եւ նախանշան դրախտի... Դա դրոյն է Արարչի եւ ապացոյցը նրա ժեմութեան... Արարչի եւ սիրելի է իր լոյսը գեղեցիկ դէմքի վրայ: Պարզապաշտները զա

անուանում են մոմի ցուքը՝ որ լուսաւորում է Մոմը: Ոմանք զա կոչում են ըտտեղծագործութեան դափնեպակ, զբութեան անձրեւ, որը թարմացնում է մտքի պարտէզը եւ ծաղկեցնում է ծառը ծերութեան: Ոմանք ասում են, որ զա նշան է ճշմարտութեան, ուղեցոյցը ճշմարտի, որը առաջնորդում է մարդկութիւնը դէպի գերագոյն Արդարութիւն:

«Այս գիրքը աւարտում է լաւ նշանակով՝ գեղեցիկ դէմքով, եւ թող որ զա օրհնուած լինի եւ Հեղինակի եւ ընթերցողի համար:»

ՕՄԱՐ ԽԱՅԵԱՄԻ ԲԱՌԵԱԿՆԵՐԸ.

Օմար Խայեամի Քառասներեկ Ողիականները սկսւում է հղուարդ Ֆիթղ Ջերալդի առաջին անգլիերէն թարգմանութեամբ, որը տարիներ անյայտութեան մէջ մնալուց յետոյ, յանկարծ, շնորհիւ Վիկտորիան շրջանի մի քանի անուանի բանաստեղծ-քննադատների, յատկապէս Ռոզհամտի եւ Սվինբլընի, եւ օրուայ ժեմագոյն քննադատ՝ Ջորջ Մերեդիթի, միջազգային հռչակ ստացաւ: Ֆիթղ Ջերալդի թարգմանութիւնը առաջին անգամ հրատարակուեց 1859 թուին, 200 օրինակով եւ ծախւում էր հատորը մի ֆլէնտ: Եւսի քան 1800 թուականը այդ հատորը վերահրատարակուեց 26 անգամ: Վերջին հարիւրամեակում Օմար Խայեամի Քառասներեկ ժողովրդունեքը, միայն անգլիերէն լեզուով, ծախուել են անելի քան 1 միլիոն օրինակ: Միայն Միացեալ Նահանգներում, 1940 թուից ի վեր, հրատարակուել եւ սպառուել են 513 հազար օրինակ եւ դեռեւս պահանջը բաւարարուած չէ եւ անդադար լոյս են տեսնում նորանոր հրատարակութիւններ:

Ֆիթղ Ջերալդը իր թարգմանութիւնը կատարել է Բողոչեան Գրագարանում գտնուող մի ձեռագրից, որի տարւած շէջրի 885 թուին (մ. թ. 1460-61) բայց ի նկատի առնելով այն ապաս եւ քմահաճ մօտեցումը, որ ցուցաբերել էր Ֆիթղ Ջերալդը իր թարգմանութեան մէջ, Հետագայում արեւելագէտները ըս-

տիպուեցին աւելի լրջօրէն Հետաքրքրուել Ռմարի գրական աւանդով եւ փրեստել նոր բնագրեր:

Առաջին անգամ 1897 թուին էր, որ Ռուս արեւելադէտ Վ. Ա. Ժուկովսկին Հրատարակեց իր Հռչակաւոր ուսումնասիրութիւնը, «Օմար հայեամի քափառող քառնակները» խորադրի տակ եւ զբանով հիմք դրեց ներկայ Ռայեամագիտութեան: Այդ յօդուածով Ժուկովսկին ապացուցեց որ Փարիզում լոյս տեսած Նիկոլայի 464 քառնակներէջ 82-ը պատկանում են Ռայեամից յետոյ ապրող բանաստեղծներին: Հետագայում այդ «Քափառող» քառնակներ թիւը հասաւ 108ի: Բայց քննական բանասիրութիւնը չբաւականացաւ զրանով: Նոյն ինքը, Ժուկովսկին, խոստովելու համար որեւէ ենթադրական տեսութիւններէջ, առաջարկեց Ռայեամին վառարկել վերագրել միայն 6 քառնակ, որոնք յիշուած են պարսկական հնագոյն սկզբնաղբերներում:

1904 թուին Դանիացի Իրանագէտ Ա. Քրիստենսենը առաջարկեց ընդունել որպէս Ռայեամի Հարազատ քառնակներ միայն այն 12-ը, որոնք մէջ յիշատակուած է Ռայեամի անունը:

1925 թուին Գերմանացի Իրանագէտ Ծ. Ռոպէնը Հրատարակեց Բերլինի ձեռագիրը, որը պարունակում էր 329 քառնակ: Զեռագիրը կրում է 1321 թուակաւնը, բայց շատ շուտով ապացուցուեց որ այդ թուակաւնը կեղծուած է եւ որ ձեռագիրը պատկանում է 16 կամ նոյնիսկ 17-րդ դարու մի գրչագրի: Ռոպէնը, իր հերթին, քննադատելով Ժուկովսկու եւ Քրիստենսենի կատարած ընտրութիւնները, առաջրկում է ընդունել որպէս Հարազատ քերթուածներ 13 քառնակ եւս, որոնց նա գտել էր «Մուսէսայ Աերաբուս» (գրուած 1840 թուին):

1927 թուին Ա. Քրիստենսենը, իր նոր աշխատանքի մէջ, «Օմար հայեամի» քառնակների Քննական Ուսումնասիրութիւնը խորադրով, Հրատարում է իր Խափելի տեսակէտից եւ աւելի մանրա-

կրկիտ ստուգարանութիւնից յետոյ, յանդում է այն կրակացութեան, որ բոլոր հնագոյն սկզբնաղբերներէ եւ ձեռագիր օրինակներէ մէջից կարելի է վստահօրէն 121 քառնակ վերագրել Ռայեամին:

Պարսիկ բանասէրներին էր վերապահուած սակ վերջին խօսքը Ռայեամի քառնակների Հարազատութեան վերաբերելու:

Անուանի բանասէր, Միրզա Մահամադ Ղազիմիս առաջինն էր, որ յայտնագործեց 14-րդ դարու պատկանող ձեռագիր մը ժողովածու, որի թուագրութիւնն էր Հէջրի 741 (մ. թ. 1340), որի մէջ Ռայեամից յիշուած էին 13 քառնակներ:

1942 թուին Քիւրանում լոյս տեսաւ պարսիկ մեծ դիւանագէտ եւ բանասէր Մահամադ Ալի Ֆարադիի «Օմար հայեամի» քառնակները ժողովածուն, որը ի մի հաւաքելով գոյութիւն ունեցող բոլոր ենթադրական տեսութիւնները եւ զբանք ենթարկելով մանրաքննին քննարկութեան, միաժամանակ քրքրելով Իրանում գտնուող պետական եւ անձնական Հարուստ գրադարանները, որպէս հիմք՝ ընտրեց 66 քառնակ: Այդ 66 քառնակներին նա աւելացրեց գանձական ընտրութեամբ եւ բանասիրական Հոտառութեամբ 112 քառնակ եւս, նրանց ընդհանուր գումարը հասցնելով 178-ի:

Ահա այստեղ էր, որ կանգ առաւ Ռայեամագիտութիւնը եւ թւում էր, որ Ռայեամի քառնակների Ողիսականը պիտի հասած լինէր իր վախճանին:

Բայց 1950 թուին, անգլիացի յայտնի Իրանագէտ Արթուր Զ. Արքրիքիմ, մասնահասակ Զէտեք Բիթիի հաւաքածոյի մէջ գտաւ Ռայեամի քառնակների ձեռագիր մի օրինակ, որը մինչ այդ անյայտ էր մնացել: Դա փոքրիկ մի Հատոր էր, որ պարունակում էր 172 քառնակ եւ գրուած էր Հէջրի 658 թուին (մ. թ. 1259-60): Ըստ այդ ձեռագրի յիշատակութեան, դա միայն մի ծաղկափայ էր:

որ զրշազրը կատարել էր խայնամի գոյութիւն ունեցող քառեակներէց: Այս օրինակը հրատարակուեց Անդլիայում 1950 թուին: Բայց խայնամաղէաներին սպասուած էր աւելի ցնցիչ մի անակնկալ:

Այս հնագոյն ձեռագրի հրատարակութեանից տակ, 1946 թուին, պարսկերէն «ԵԱԴԻԳԱՐ» հանդէսի 363 համարում լոյս էր տեսել անստորագիր մի յօդուած, որ ենթադրում էր որ պատկանում է Պրոֆ. Արքատ էղրալի զրշին: Անանուն հեղինակը յայտարարում է, որ անձնական մի դրագարանում յայտնագործել է Հէջրի 604 (մ. թ. 1207) թուագրուած ձեռագիր մի օրինակ: Նշանակում է, գտնուել էր մի ձեռագիր, որը գրուել է խայնամի մահուանից ՄԻԱՅՆ 75 ՏԱՐԻ ՅՅՏՈՅ:

Այդ ժողովածուն, ըստ նոյն հեղինակի, պարունակում էր 252 քառեակ, որոնցից նա իր յօդուածում օրինակ էր բերել 15-ը:

«Թեհրանեան» այդ ձեռագիրը երեսուն է գալիս Լոնդոնում 1950 թուի ամսանը եւ գտնուում է Քէմբրիջի Համալսարանի կողմից: Ա. Արքերբի, որը ներկայ էր անուրդին եւ առաջին մասնագէտն էր, որ մօտից քննութեան է ենթարկում ձեռագիրը, ահա թէ ինչ է դըրում այդ մասին.

«Նա երկրորդ անգամն էր, որ ես պատահութիւն ունեցայ առաջին վկան լինել նման մի զգայացունց առջի: Նորից մի հատիկ հայեացք բաւական էր ինձ համոզելու համար, որ 604 թուագրութեանը կեղծուած չէր: Քէմբրիջի այդ օրինակը պարունակում էր 252 քառեակ. եւ դա զրի էր առնուած միայն 75 տարի խայնամի մահուանից յետոյ: Հատորը պարսիկ բանաստեղծների մի ժողովածու է, գրուած ոմն Ղիաս էղ-Դին Մահամադ էրնէ Մուսէֆ էրնէ Ալիի ձեռքով: Ձեռագիրը կատարելապէս բնորոշ էր իր շքանի համար եւ կազմը համարեա թէ ժամանակակից էր թուում: Ինչպէս Ձէսթեր Բիթթիի ձեռագրում, այստեղ եւս թուականը նշանակուած էր բա-

սերով, ոչ թուանշաններով, եւ որեւէ արտաքին նշան գոյութիւն չուներ, ցոյց տալու համար որ ձեռք է տարուել գրութեան մէջ...»:

«Քէմբրիջի ձեռագիրը լիովին հաստատեց այն գաղափարը, ըստ որի պիտի հիմնական վերաքննութեան ենթարկուէր Օմարի Ղիբթը գրականութեան ասպարէզում: Նախ շատ կարեւոր էր այն երեւոյթը, որ այդ ժողովածուն ներկայացուած էր որպէս բանաստեղծութիւնների մի ժողովածու: 252 քառեակ պարունակող «ժողովածու» ցուցանիչն էր գտնէ 750 քառեակ պարունակող մի հաստորի գոյութեան: Երկրորդ, Քէմբրիջի ձեռագիրը Օմարին դասում էր մեծ բանաստեղծների շարքը, ինչպիսիք են Սանային եւ ուրիշներ, որոնց երեսակայութեան որեւէ ճիշդ չի կարելի երկրորդ դասի բանաստեղծների համարել: Հետեւաբար, ընդօրինակողը, լաւատեսեակ մի անձնատրութիւն, որը կազմել էր իր ժողովածու Օմարի մահուանից շուրջ 75 տարի յետոյ, նրան դասում էր առաջնագոյն բանաստեղծների մէջ: Երրորդ - 75 տարուայ ընթացքում, հազու թէ ժամանակը ներէր որ համարեա անասակական մի անձնատրութեան վերածելին մեծ մի բանաստեղծի: Այդպիսի զուգահեռ գոյութիւն չունի պարսիկ գրականութեան մէջ... Ի նկատի առնելով այդ բոլորը, պիտի յանգնել այն անխուսափելի եզրակացութեան, որ Օմարը խկապէս մեծ թուով քառեակներ է գրել:»:

Որքան զգայացունց եւ անսպասելի լինէր այդ յայտնագործութիւնը, որքան էլ որ մեծ լինէր Ա. Արքերբիի հեղինակութիւնը, այնուհանդերձ պարսիկ որոշ լուրջ բանասէրների մէջ դեռ կենդանի են կասկածի սաղմեր այդ ձեռագրի հարազատութեան վերաբերեալ: Ձեռագրի ուսերէն հրատարակութեան նախարարում (Մոսկուա 1959) երկու տեղ մենք հանդիպում ենք զգոյշ արքայադասութիւնների: Մի տեղ խմբագիր-հրատարակիչները գրում են.

«Պիտի յիշատակել, որ «Ա» ձեռագրի հարազատութեան մասին խօսելով, մենք ստիպուած ենք մեծ մասամբ հիմնուել այլ հետախոյզների դատողութեան վրայ, քանի որ այս հատորի խմբագրները իրենց տրամադրութեան տակ են ունեցել միայն ձեռագրի լուսանկարը

(Ֆոտոսկոպիան) և գրկուած են եղել անկայտարար քննութեան առնել զրա հետգրական (պալեոգրափիլ) տուեալները»:

Ձ. Մ.

(Վերջը յաջորդով)

ԼԵՆԻՆԿՐԱՏԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Սովետ և Եւրոպացի գրողներու համագումար մը տեղի ունեցած է Օգոստոս 5-8, Լենինկրատի մէջ, գրական հարցերու քննարկութեան համար: Բազմաթիւ այլ օրակարգերու շարքին՝ բուն վիճարանութեան նիւթ դարձած է նաև ֆրանսական «նոր վէպը»: Սովետ հին սերունդի գրողներէն Քոնսթանթին Յէտին, որ Սովետ Գրողներու միութեան առաջին քարտուղարն է, համագումարի քաջումին իսկ բուն կերպով քննադատած է Մարսէլ Փրուստը, Քաֆկան և ձէյմա ձոյսը՝ որպէս «չետամնացներ»: Ընդհակառակն, նոր սերունդի գրողներէն Իլիա Էրեմպուրկ, որ անցեալ զարման իստ քննադատութեան թիրախ դարձաւ հրուշչևի կողմէ, պաշտպանած է Քաֆկան, Մարսէլ Փրուստը և ձէյմա ձոյսը:

Իլիա Էրեմպուրկի ներկայութիւնը այս համագումարին՝ կարգ մը դիտողներու կողմէ նկատուած է որպէս հաւանական «սառցահալ» մը նըշան, մտաւարական գեղեցիկ վրայ: Սովետական մամուլը անդրադառնալով մասնաւորաբար Յէտինի միջամտութիւններուն, նաև, առաջին անգամ ըլլալով իր «դատապարտութենէն» ի վեր, յիշատակած է Էրեմպուրկի անունը, առանց որեւէ մեկնաբանութեան:

Արեւմտեաններու կողմէ անէնէն կարեւոր միջամտութիւնները եղած են ֆրանսացի հռչակաւոր գրող՝ Ժան Փոլ Սարթրին կողմէ:

Սարթր պաշտպանելէ ետք Փրուստը, Քաֆկան և ձէյմա ձոյսը, յայտարարած է թէ սովետ և Եւրոպացի գրողներու միջև պէտք չէ խաղաղ գոյակեցութիւն մը ըլլայ, այլ գաղափարաբանութեանց խաղաղ նակատում մը: Այս առաջարկած է որ մասնաւոր յանձնախումբ մը կազմուի, գրական գանձան հարցերու ուսումնասիրութեան համար:

ՔԱԳԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ

- Պրն. Հրայր Արշակունի (Միացեալ Նահանգներ) **Պրն. Յ. Պոլաճեանին**
(Միացեալ Նահանգներ) :

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵՐԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՒԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ.



Վարչություն հասցե —

DIKEAN KOUYOUMDJIAN
P. B. 587, Beyrouth — Liban